


ԵՐԵՍՈՒՆՎԵՑ
ՀՆԱՐՔ

三十六计



ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ • ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

三十六計

ԵՐԵՍՈՒՆՎԵՅ ՀՆԱՐԲ

330
Ե-80

Է

三十六計

ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ՀՆԱՐՔ

6487

Լևոն Սարգսյան • Լևոն Մելքոնյան
Թարգմանություն և պարզաբանումներ



ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ
ՏՊԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՍՊԱՎՈՐԹՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2019



ՀՏԴ 355
ԳՄԴ 68
Ե 808

Ե 808

«36 հնարք»/ներածություն, թարգմանություն,
պարզաբանումներ, անվանացանկ. Լ. Սարգսյան,
Լ. Մելքոնյան, - Եր., Ոսկան Երևանցի, 2019. - 164 էջ:

Այս գիրքը ռազմարվեստին նվիրված հին չինական
հայտնի գործերից՝ «36 հնարք» տրակտատի հայերեն
առաջին ամբողջական թարգմանությունն է: Չինաստանի
պատմության օրինակով ներկայացված է հաջողության
հասնելու ռազմավարական և մարտավարական հաշ-
վարկված գործողությունների որոշակի ալգորիթմ: Գիրքը
հրատարակության են պատրաստել Լևոն Սարգսյանը և
Լևոն Մելքոնյանը:

ՀՏԴ 355
ԳՄԴ 68

ISBN 978-99930-0-281-9

© Լևոն Սարգսյան, (ներածություն, թարգմանություն,
պարզաբանումներ, անվանացանկ), 2019

© Լևոն Մելքոնյան, (ներածություն, թարգմանություն,
պարզաբանումներ, անվանացանկ), 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լևոն Սարգսյան, Լևոն Մելքոնյան: Ներածություն	7
<i>Երեսունվեց հնարք [Առաջաբան]</i>	27
<i>Մաս առաջին. Հաղթողների հնարքներ</i>	
Հնարք 1. Բացահայտ, թաքուն օվկիանոս անցնել	31
Հնարք 2. Պաշարել Վեյը և փրկել Ջաոն	33
Հնարք 3. Սպանել թշնամուն ուրիշի դանակով	35
Հնարք 4. Հանգստության մեջ սպասել թշնամուն	39
Հնարք 5. Թալան անել հրդեհի ժամանակ	44
Հնարք 6. Աղմուկ բարձրացնել արևելքում, հարձակվել արևմուտքում	46
<i>Մաս երկրորդ. Հավասարազոր ուժերի դիմակայության հնարքներ</i>	
Հնարք 7. Ոչնչից ինչ-որ բան ստեղծել	51
Հնարք 8. Գաղտնի դուրս գալ Չենցանն	53
Հնարք 9. Հետևել հրդեհին դիմացի ափից	56
Հնարք 10. Ժպիտի հետևում դանակ թաքցնել	59
Հնարք 11. Սալորը չորանում է դեղձի փոխարեն	62
Հնարք 12. Ձեռքի տակ ընկած ոչխարը տանել	65
<i>Մաս երրորդ. Հարձակման հնարքներ</i>	
Հնարք 13. Խոտին խփել օձին վախեցնելու համար	69
Հնարք 14. Հոգին մեռած մարմնում բնակեցնել	71
Հնարք 15. Ստիպել վագրին իջնել լեռից	73
Հնարք 16. Եթե ուզում ես բռնել, պետք է թողնես՝ գնա	77
Հնարք 17. Գցիր աղյուսը, որ ձեռք բերես նեֆրիտը	80
Հնարք 18. Ավազակներին բռնելու համար պետք է ավազակապետին բռնել	83
<i>Մաս չորրորդ. Խառը դիմակայության հնարքներ</i>	
Հնարք 19. Փայտերը դուրս քաշել կաթսայի տակից	89
Հնարք 20. Պղտոր ջրում ձուկ որսալ	93
Հնարք 21. Ոսկե ցիկադը իր վրայից գցում է թաղանթը	96
Հնարք 22. Կողպել դռները ավազակին բռնելու համար	100

Հնարք 23. Բարեկամություն անել նրա հետ, ով հեռվում է, հարձակվել նրա վրա, ով մոտակայքում է	102
Հնարք 24. Օգտվել թույլ հարևանի տարածքից ուժեղ թշնամու վրա հարձակվելու համար	105

Մաս հինգերորդ. Թարնված դիմակայության հնարքներ

Հնարք 25. Գողանալ հեծանները և թաքուն փոխել հենարանները	111
Հնարք 26. Նկատի ունենալով թթենին, հայիոյել բակլան .	114
Հնարք 27. Հիմար ձևանալ, բայց չլինել անխոհեմ	116
Հնարք 28. Տանել գցել տանիքը և հեռացնել աստիճանը ...	121
Հնարք 29. Ծառը զարդարել ծաղիկներով	124
Հնարք 30. Հյուրից տանտերի վերածվել	126

Մաս վեցերորդ. Պարտվողների հնարքներ

Հնարք 31. «Սիրունիկը»	133
Հնարք 32. «Դատարկ քաղաք»	137
Հնարք 33. «Վերադարձված լրտեսը»	141
Հնարք 34. «Ինքնավիրավորում»	146
Հնարք 35. «Շղթայի օղակներ»	149
Հնարք 36. Փախուստը՝ լավագույն հնարք.....	153

Վերջաբան	155
Անվանացանկ	157

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Աշխարհի բոլոր քաղաքակրթությունները յուրովի բացատրիկ են, սակայն չինական քաղաքակրթությունը բացատրիկ է ամեն ինչով. առաջին հերթին՝ իր տևական ու չընդհատվող գոյությամբ: Այն ձևավորվել է Հին Եգիպտական և Շումերական քաղաքակրթությունների հետ միաժամանակ, որոնց հետքերը, սակայն, պահպանվել են միայն բուրգերի և կիսաքանդ տաճարների, տարբեր երկրների թանգարաններում պահվող առանձին նմուշներով: Մինչդեռ Չինաստանը ոչ միայն գոյություն ունի, այլև այսօր գտնվում է իր բնականոն ու չընդհատվող էվոլյուցիայի հերթական փուլում, որը բնորոշվում է բազում սերունդների փորձի կուտակմամբ ու ժառանգորդությամբ: Չինացիների ներկայիս սերունդը կրողն է 5000-ամյա, իսկ եթե հաշվի առնենք հնագույն առասպելները, ապա շուրջ 10.000-ամյա պատմամշակութային ժառանգության: Չինաստանը երկիր-քաղաքակրթություն է, որտեղ «ամեն ինչ արդեն եղել է», և «ամեն ինչ բազմիցս նորոգվել է»:

Բնական է, որ այդ հազարամյակների ընթացքում երկրի հսկայական տարածքներում, պայմանավորված աշխարհագրական տարբեր միջավայրերով, պետք է առաջանային և ձևավորվեին տարածքային գանազան միավորներին (առանձին գյուղերին, քաղաքներին, ամբողջ տարածաշրջաններին) բնորոշ ավանդական կենցաղային մշակույթի առանձնահատկություններ, ինչպես նաև բազմաթիվ բարբառներ ու խոսվածքներ, որի արդյունքում այդ միավորներից յուրաքանչյուրը պետք է ստանար իր ուրույն դիմագիծը: Եվ սակայն այդ տարատեսակությունը չհանգեցրեց դրանց անջատվածությանը, մեկուսացմանը, մշակութային ոչ միատարրությանը (ինչպես դա եղավ, օրինակ, հարևան Հնդկաստանում), քանի որ նույն այդ բազմազանության հետ մեկտեղ ձևավորվում էր չինական միասնական մշակույթի, քաղաքակրթության միջուկը:

Այդ երկարատև գործընթացում մեծ դեր էր վերապահված հիերոգլիֆային գրի՝ վաղնջական ժամանակների բարդագույն համակարգերից մեկի ստեղծմանը, որը (սա պետք է հատուկ նշել) կիրառվում է մինչ օրս: Չինական հիերոգլիֆային գրի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ գաղափարագրերը, ի տարբերություն այլ գրերի, հարմարեցված չէին խոսակցական լեզվին. դրանց միջոցով նշանակվում էին ոչ միայն և ոչ այնքան բազմապիսի իրեր, երևույթներ, որքան արտահայտվում էին հենց որոշակի գաղափարներ: Իսկ նույն այդ գաղափարներն ու պատկերացումները ունեին բազմիմաստ արտահայտություններ, ինչը նպաստում էր դրանք անընդհատ մշակելուն, մի նոր մեկնաբանություն գտնելուն, հնարավոր էր դարձնում դրանցում տեսնել այն, ինչը առավել նպատակահարմար էր թվում քաղաքակրթական զարգացման տվյալ փուլում: Կարևոր է նշել, որ հիերոգլիֆային գրի շնորհիվ ստեղծված բազմաթիվ տեքստերի, գրքային հարուստ ավանդույթի օգտատեր եղավ ոչ միայն դրանց ստեղծողների և մշակողների՝ փիլիսոփաների, պատմաբանների, ընդհանրապես մտածողների նեղ շրջանակը: Հակառակը՝ նույն այդ տեքստերը, դրանց մշակումներն ու մեկնաբանությունները փոխանցվում և հասանելի էին դառնում հաջորդող բոլոր սերունդներին, այդ ժառանգորդականությունն էլ նպաստում էր նրանց ազգամշակութային համախմբմանը, ծառայում էր որպես այլ ժողովուրդների հանդեպ իրենց գերազանցության ապացույց: Այդպես է նաև մեր օրերում. այսօր էլ չինացիները կարող են առանց զգալի ջանքերի ծանոթանալ հնագույն ստեղծագործություններին, և մի անգամ ևս գիտակցել ու արժևորել ինչպես իրենց անխզելի կապը նախնիների հետ, այնպես էլ իրենց ազգային յուրօրինակ, կայուն ու միասնական ինքնությունը:

Եվ որքան էլ զարմանալի թվա, ազգային համախմբմանը մեծապես նպաստեց երկրի ներքին կյանքի կառավարման ձևը, այն է՝ դարերով մանրամասն մշակված պետական բյուրոկրատական կուռ համակարգը, որի գլխավոր կողմնորոշիչներն ու կարգախոսներն էին արդյունավետությունը, կենտրոնացումը և միասնականացումը: Ամեն ինչ պետք է լիներ կանխամտածված, կարգադրված, իսկ կատարումը՝ վերահսկելի, ամեն ինչի համար, առանց բացառության, պետք է լինեին միասնականացված կանոններ և նմուշներ:

Այս առումով ուշագրավ է հատկապես պետական պաշտոնյաների պատրաստման հատուկ համակարգը, նախ և առաջ պարտադիր քննությունները տարբեր կարգի պաշտոնյա դառնալու համար, որոնց կարող էին մասնակցել բոլոր տղամարդիկ՝ անկախ իրենց սոցիալական կարգավիճակից և ֆինանսական կարողություններից: Ըստ մեզ հասած տեղեկությունների, նման գրավոր քննություններ անցկացվում էին դեռևս մ.թ.ա. III-II դարերում, իսկ արդեն որպես պետական քննություններ՝ սկսած 609թ., և որոշ ընդհատումներով մինչև 1905 թ. (համեմատության համար՝ Եվրոպայում նման քննություններ առաջին անգամ անց են կացվել Բեռլինում XVII դ. վերջին): Իսկ նույն այդ քննությունների հաջող հանձնելու պարտադիր պայմաններից էին հենց գրական լեզվի անթերի և կանոնական տեքստերի անգիր իմացությունը: Կայսերական Չինաստանի ներքին կառավարման առանձնահատկություններից էր նաև այն, որ պաշտոնյաները պարբերաբար փոխում էին աշխատավայրը, ինչի արդյունքում, ծառայելով երկրի տարբեր մասերում, նրանք ամենուրեք խթանում էին, եթե չասենք՝ պարտադիր էին դարձնում իրենց կիրառած միասնականացված չինարենը՝ ի հակադրություն տեղական բարբառների և խոսվածքների: Բացի այդ, լինելով պատմականորեն ձևավորված միասնական մշակութային արժեքների ու ավանդույթների կրողներ, նրանք նպաստում էին դրանց տարածմանը երկրի ողջ տարածքով մեկ: Եվ եթե նկատի առնենք նաև պետական պաշտոնյաներին բնորոշ, այսպես ասած, կարգ ու կանոնի բնագղը, ապա հասկանալի է դառնում, որ երկրի կառավարման այդպիսի ձևը մեծ դեր էր կատարում բնակչության մեջ պատմամշակութային ընդհանուր գիտակցություն ձևավորելու գործում:

Կայսրերը մահանում էին, թագավորությունները և դինաստիաները վերանում էին, ժամանակ առ ժամանակ խաբխւվում էին պետականության հիմքերը, իսկ չինական քաղաքակրթությունը, այնուամենայնիվ, շարունակում էր իր անընդհատ ընթացքը: Չինական քաղաքակրթության ձևավորման և կայացման կարևորագույն փուլը Արևելյան Ջոու դարաշրջանն է, որում առանձնացնում են Գարնան և Աշնան (մ.թ.ա. 722-481 թթ., անվանումը գալիս է Չունցյու՝ «Գարուն և Աշուն» տարեգրությունից, որի կազմողն է համարվում Կոնֆուցիոսը), և նրան հաջորդած Մարտնչող

թագավորությունների (մ.թ.ա. V դարից մինչև Յին Շիխուաննի կողմից Չինաստանի միավորումը մ.թ.ա. 221 թ.) ժամանակաշրջանները: Այս վերջինի ընթացքում Ջոու դինաստիան աստիճանաբար կորցնում է իր իրական գերիշխանությունը, վերածվելով լոկ անվանապես իշխող դինաստիայի, և Չինաստանի ողջ տարածքում ձևավորվում են բազմաթիվ անկախ կամ կիսաանկախ առանձին թագավորություններ, և ողջ երկիրը վերածվում է նույն այդ թագավորությունների միջև ռազմական գործողությունների թատերաբեմի: Եթե Գարնան և Աշնան շրջանում, ըստ պատմական տարբեր տեղեկությունների, թագավորությունների թիվը հասնում էր մոտ հարյուր հիսունի, ապա Մարտնչող թագավորությունների շրջանում, երբ Ջոու դինաստիան փաստացի դադարեց գոյություն ունենալուց, դրանցից մնաց միայն մոտ տասը:

Սակայն նույն այդ պայմաններում տեղի է ունենում առաջին հայացքից անհավանական մի երևույթ՝ ձևավորվում և բուռն զարգացում են ապրում ինտելեկտուալ գործունեության ավանդույթները, որոնք չինական կրոնափիլիսոփայական հիմնական դասական ուղղությունների հիմքը դարձան: (Բայց միայն առաջին հայացքից, այդպես եղավ, օրինակ, Իտալիայում շուրջ տասնութ դար հետո՝ XVI դ. սահմանագծին, երբ օտարերկրյա ներխուժումների, քաղաքային կոմունաների անկախության կորստի, համընդհանուր անկայունության պայմաններում սկիզբ առավ Վերածննդի առավել հասուն, արվեստների աննախադեպ ծաղկման շրջանը՝ Բարձր Վերածնունդը):

Հատկապես փիլիսոփայական ուսմունքները այնքան շատ էին, որ այդ տարիները պատկերավոր անվանում են «հարյուր դպրոցի» («հարյուր», այսինքն՝ բազում) կամ, որ ավելի մոտ է իրականությանը, «ինը ուղղության և տասը դպրոցի» ժամանակաշրջան: Դրանցից էին դասական կոնֆուցիականությունը (իր ծիսակարգի տեսությամբ և գրքային ավանդույթով), Էզոթերիկ դատկանությունը (դեպքերի բնական ընթացքին չխառնվելու և հակառակ չգործելու իր տեսությամբ), կոշտ լեզիվը (իր իրավունքի գերակայությամբ), բնափիլիսոփայությունը (իր «Փոփոխությունների կանոնով» և տիեզերական երկու սկիզբների՝ Յին - Յան դուալիզմի համապարփակ տեսությամբ), Ֆենշույը (իր՝ մարդուց և ժամանակից անկախ Ցի էներգիայի ուսմունքով) և այլն:

Եվ այդուհանդերձ, պատահական չէ, որ այդ տարիները, երբ հակամարտությունները վերափոխվում են բոլորը բոլորի դեմ պատերազմների, երբ թագավորությունների միջև ստեղծվում են ռազմական դաշինքներ, որոնց կազմը ըստ անհրաժեշտության արագ փոփոխվում էր, երբ այդ ամենի արդյունքում երկրում տիրում էր սոցիալ-քաղաքական անկայուն իրավիճակ, կրկնենք՝ այդ տարիները չինական պատմագրության մեջ հայտնի են որպես «խոռվալից շրջան»:

Պատահական չէ նաև, որ «36 հնարքում» շատ անգամ հենց այդ ժամանակաշրջանի իրադարձությունների օրինակով են ներկայացվում ռազմական հնարքների կամ խորամանկությունների կիրառման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը:

Ռազմական խորամանկությունը որպես այդպիսին ծագել է դեռևս վաղնջական ժամանակներում. դրա կիրառության օրինակներ կարելի է գտնել նաև չինական դիցաբանության մեջ: Արդեն այդ ժամանակների պատերազմների փորձը վկայում է, որ ցանկացած ճակատամարտի պատրաստվելիս ու այն վարելիս որոշ չափով անհրաժեշտ է ռազմական խորամանկությունը: Եթե կանխորոշված չէր, թե ինչպես պետք է խաբել, մոլորեցնել թշնամուն, եթե մտահղացման մեջ չէր եղել հենց խաբեության գաղափարը, այդպիսի ճակատամարտը կամ հաջող ավարտ չէր ունեցել, կամ այնքան անհետաքրքիր էր եղել, որ պատմական արձանագրությունները լռել էին դրանց մասին: Ասել է թե, ռազմաքաղաքական հակամարտության մեջ կիրառվող միջոցները անհրաժեշտ էր հանդերձավորել խորամանկության և խաբեության հնարքներով: Սակայն ռազմական խորամանկությունը հենց այնպես չէր ծնվում: Դրա հիմքում ոչ միայն զորավարի կամ ռազմավարի բնածին տաղանդն էր, այլև ռազմական գործի իմացությունը և կենսափորձը: Այստեղ հարկ է նշել, որ մշտական ու տարատեսակ հակամարտությունների հետևանքով ձևավորվեց պատերազմի չինական յուրովի ընկալում՝ պատերազմը, որպես կյանքի մոդել, և կյանքը՝ որպես պատերազմ: Այդպիսի պայմաններում խորամանկության կիրառումը ռազմական հակամարտության, բայց նաև քաղաքականության ու դիվանագիտության մեջ կոնկրետ խնդիրներ լուծելու և միաժամանակ մարդկային ու նյութական ռեսուրսների մեծ կորուստներից խուսափելու նպատակով սխրագործություն էր

դիտվում: Ուստի հարցի բարոյական կողմը, ի տարբերություն արևմտյան քրիստոնեական ավանդույթի, ընդհանրապես չէր քննարկվում, քանի որ հաղթում է միշտ դրան արժանի մարդը:

Հնարքների արդյունավետությունը այնչափ ակնհայտ էր, որ չինացիները այս դեպքում ևս սկսեցին կուտակել, իմաստավորել և համակարգել դրանց կիրառության փորձը, ստեղծեցին համապատասխան գործողությունների ավգորիթմներ. նախ՝ ռազմարվեստի և դիվանագիտության մեջ, ապա՝ առօրյայում: Եվ ամենակարևորը՝ այդ գիտելիքները բանահյուսության, պատմագրությունների և գեղարվեստական ստեղծագործությունների, բայց հատկապես ռազմարվեստին վերաբերող տրակտատների շնորհիվ դարձան չինացիների հետագա բոլոր սերունդների սեփականությունը:

Չինացի գիտնականները հաշվել են ռազմական թեմայով ստեղծված տրակտատների մի քանի հազար հիշատակումներ, որոնցից մեզ են հասել մոտ երեք հարյուրը, այդ թվում՝ Մարտնչող թագավորությունների շրջանի նշանավոր գորավար Սուն Ծըի հեղինակած հանրահայտ «Ռազմարվեստի մասին» տրակտատը: «Երեսունվեց հնարք» տրակտատը նույնպես կարող էր մոռացության մատնվել, եթե 1941 թ. Շենսի նահանգի Ֆենչոու քաղաքում (այդ ժամանակ Ֆենչոու քաղաքը գտնվում էր Գանսու նահանգի վարչական տարածքում) մի ոմն հնահավաք գրքի շուկայում չգտներ այդ անվանումով ձեռագիրը: Նույն թվականին Սիչուան նահանգի Չենտու քաղաքի Սինխուա հրատարակչությունում լույս տեսավ այդ ձեռագրի առաջին տպագիր հրատարակությունը, որի նախաբանում նշվում էին ձեռագրի հայտնաբերման հանգամանքները. այն կցված էր երկարակեցության բաղադրատոմսերի հնագույն հավաքածուին, և դրանում բացակայում էր վերջին էջը, չկար հեղինակի կամ հեղինակների մասին որևէ վկայություն: 1941 թվականն էր՝ Երկրորդ աշխարհամարտի թեժ պահը, և փոքր տպաքանակով ձեռագործ թղթի վրա լույս տեսած գրքույկը այս անգամ ևս մատնվեց մոռացության: Բայց ուղիղ 20 տարի անց՝ 1961 թ. սեպտեմբերի 16-ին, «Գուանմին Ժիպաո» թերթում մի փոքրիկ հոդված է տպագրվում՝ Շու Խե անունով գրասերի հեղինակությամբ: Այդ հոդվածում նա պատմում է, որ ավելի քան տասը տարի առաջ Չենտու քաղաքում ձեռք է բերել հենց այնտեղ

հրատարակված մի փոքրիկ գրքույկ՝ ռազմարվեստի մասին հնագույն մի տրակտատ, որի տիտղոսաթերթին գրված է՝ «三十六計», «Երեսունվեց հնարք»: Այս լուրը մեծ ուշադրության արժանացավ, և շատ չանցած՝ պարզվեց, որ խոսքը նույն այն ձեռագրի մասին է, որը գտնվել, ապա հրատարակվել է ավելի վաղ՝ 1941 թ.: Շու Խեն գրքի պահպանված այդ եզակի օրինակը նվիրաբերում է Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակի Քաղաքական ինստիտուտին, որն էլ 1962 թ. առանց պարզաբանումների վերահրատարակում է այն՝ Ու Գուի խմբագրությամբ:

Աշխատության բովանդակությունը այնքան կարևոր համարվեց, որ 1962 թ. հրատարակությունը նախատեսվեց միայն «ներքին գործածության» համար: Եվ միայն քսան տարի անց՝ 1981 թ., գիրքը վերահրատարակեց Ռազմական հրատարակչությունը՝ «Երեսունվեց հնարքը ժամանակակից մշակմամբ» վերնագրով: «Ժամանակակից մշակումը» արտահայտվել էր նրանում, որ բնօրինակը «արդիականացնելու» նպատակով ենթարկվել էր ոչ էական, բայց, այնուամենայնիվ, որոշ փոփոխությունների. օրինակ՝ բերվում էին հնարքների կիրառության օրինակներ ոչ միայն հնագույն, այլև նորագույն ժամանակներից, այդ թվում՝ օտար երկրների պատմությունից: Հետագա տարիներին թե՛ Չինաստանում և թե՛ հարակից երկրներում «Երեսունվեց հնարքը» տպագրվեց միլիոնավոր տպաքանակով, ինչպես բնօրինակի մասնագետների մեկնաբանություններով, այնպես էլ վերամշակված՝ ըստ ընթերցողների տարբեր խմբերի: Այսպես, տնտեսական և դիվանագիտական բանակցությունների ռազմավարությունը և մարտավարությունը մշակելու, շուկայական մրցակցային պայմաններում կազմակերպությունները ղեկավարելու համար հրատարակվեց տարբեր ձեռնարկների տեսքով, իսկ երեխաների համար հրատարակվեց կոմիքսների տեսքով, և այդպես շարունակ: Ներկայումս 36 հնարքի մասին գրականությունը աշխարհի ամենահայտնիներից և ամենաշատ վաճառվողներից է: Եվ այսուհանդերձ, այս անանուն գլոխգործոցի ի հայտ գալու պատմությունը դեռևս անհայտ է մնում:

«Հնարք» հասկացությունը (計) ռազմական խորամանկություն և խաբեություն նշանակությամբ հանդիպում է դեռևս հնագույն ժամանակներում, մասնավորապես Կոնֆուցիոսի ժամանակակից

Սուն Ծըի վերոնշյալ տրակտատում: Սուն Ծըն ռազմարվեստը ընդհանրապես բնութագրում էր որպես մոլորեցնելու արվեստ՝ «Պատերազմը՝ խաբեության ճանապարհ»: Իսկ «Երեսունվեց հնարք» արտահայտությունը, որքանով հայտնի է, հնագույն աղբյուրներում հիշատակվում է մեկ անգամ՝ «Հարավային Ցիի գիրք» տրակտատում, որի հեղինակը Սիաո Ծըսիենն է (489–537 թթ.): Հյուսիսային և Հարավային դինաստիաների ժամանակաշրջանում (420–589 թթ.) Հարավային Ցի դինաստիայի զորավար Վանն Ծիննծեի (435–498 թթ.) մասին պատմող գլխում խոսվում է նրա՝ իշխանության գալու հանգամանքների մասին: «Ծիննծեի զորքերը հարձակվեցին արևելքից, կայսերական պալատը խուճապի մատնվեց, Տուն Խունը (կայսերորդին՝ գահաժառանգը) մարդ ուղարկեց՝ տանիքից իրավիճակը հետախուզելու: Վերջինս տեսավ, թե ինչպես է բոցավառվում գրավված տաղավարը: Երբ Տուն Խունին տեղեկացրին, որ Ծիննծեն արդեն մոտերքում է, գահաժառանգը որոշեց պատրաստվել փախչելու: Իմանալով այդ մասին, Վան Ծիննծեն ասաց. «Հարգարժան Թանի 36 հնարքներից փախուստը լավագույն հնարքն է. հորը և որդուն մնում է միայն փախչել»:

«Հարգարժան Թանը» Հյուսիսային և Հարավային դինաստիաների շրջանում (Լիու) Սուն Հարավային դինաստիայի (420–479 թթ.) նշանավոր զորահրամանատար Թան Տաոծին է: Նրա՝ խորամանկության տարբեր հնարքներին տեղյակ լինելու և դրանք ռազմադաշտում հաջողությամբ կիրառելու մասին պատմվում է մեկ այլ կարևոր տրակտատում՝ «Հարավային դինաստիաների պատմության» 15-րդ գլխում (այդ մասին տես ստորև, հնարք 21): Մակայն, որքան մեզ հայտնի է, բացառությամբ Սյաո Ծըսիենի աշխատության, թե՛ այս և թե՛ ավելի ուշ շրջանի պատմական աղբյուրներում հենց 36 հնարքի մասին այլ հիշատակություններ չկան:

Իսկ գուցե խոսքը 36 թվի լոկ այլաբերական՝ «բազմաքանակ» նշանակության մասին է: Այդ առումով ուշադրության է արժանի, որ «Երեսունվեց հնարքի» բնօրինակի արդեն ներածականում, երբ ասվում է փոխկապակցված հակադիր էությունների մասին, անուղղակիորեն վկայակոչվում է «Փոփոխությունների կանոնը», որը թվագրվում է մ.թ.ա. X–VIII դդ. (սրան կանդրադառնանք ստորև, այստեղ նշենք, որ թարգմանական գրականության մեջ

ընդունված է նաև «Փոփոխությունների գիրք» անվանումը): Ինչպես հայտնի է, այդ գրքի հիմնական գաղափարը Ցին-Ցան՝ աշխարհաստեղծման երկու հակադիր սկիզբների դուալիզմն է, որոնցից Ցանը խորհրդանշում է լույսը, արևային կողմը, ուղղամտությունը, իսկ Ցինը՝ խավարը, մութ կողմը և, ընդգծենք, խորամանկությունը: «Փոփոխությունների կանոնի» համաձայն՝ Ցանի թիվը 9 է, իսկ Ցինի թիվը՝ 6-ը: Երեսունվեցը վեցի քառակուսին է, և այն հավանաբար արտահայտում էր խորամանկությունների բազմաքանակությունը:

Ըստ երևույթին, արդարացված է պատկերացումը «Երեսունվեց հնարք»-ի՝ որպես մի հավաքածուի մասին, որը կազմել էին դեռևս հին ժամանակներում տարածված գաղտնի կազմակերպությունները: Այն յուրատեսակ, հույժ գաղտնի մի ձեռնարկ էր, որի հղկված դարձվածային, խորհրդանշական ասույթներում բյուրեղացված էր նրանց կուտակած փորձը՝ երևակայելի ու աներևակայելի իրավիճակներից դուրս գալու, որևէ իրավիճակում որևէ հակառակորդի հաղթելու, թշնամու հանդեպ տարբեր վարվելաձև դրսևորելու և այլնի մասին: Ուշագրավ է, որ ավելի ուշ ժամանակներում XVI դ. ստեղծված Հունմեն կազմակերպությունը, որը նպատակ ուներ տապալելու Ցին դինաստիան և մեծ դեր խաղաց գաղտնի միությունների տարածման գործում (Արևմուտքում հայտնի են Տրիադա անունով), նույն «հնարքների» նմանությամբ մշակել էր ռազմական գիտելիքների դասակարգված հավաքածու:

«Երեսունվեց հնարք» տրակտատի բնօրինակը կազմված է համառոտ ներածականից, որում հնարքները, ըստ իրենց գործառույթների, բաժանվում են 6 ենթախմբի, ապա տրվում է յուրաքանչյուր հնարքի դարձվածային անվանումը՝ երեք կամ չորս հիերոգլիֆներից կազմված ասույթներով, հնարքի սկզբունքի համառոտ և վերացական շարադրանքը, որը հաճախ ներառում է մեջբերում «Փոփոխությունների կանոնից», և հնարքի մեկնությունը՝ կիրառության պատմական որոշակի օրինակներով: Բնօրինակը եզրափակում է վերջաբանը, որի վերջին մասը կորսված է: Հենց այսպիսի տեսք ունի 1962 թ. հրատարակված բնօրինակի կանոնական տեքստը, որը մեր պարզաբանումներով և ծանոթագրություններով հանդերձ, ներկայացվում է հայ ընթերցողին առաջին անգամ:

«Երեսունվեց հնարք» տրակտատը, իր լեզվական գուսպ ձևավորումով հանդերձ, համապատասխանում է չինական ավանդական կանոնական տեքստ կազմելու սկզբունքներին: Այդպիսի տեքստը գրքային ավանդույթի շնորհիվ դարերով հղկված և մշտապես ծավալվող փոխաբերությունն է, որում յուրաքանչյուր բառ անթիվ չասված բաներ է նշանակում, և որը ընդամենը մատնանշում է կատարյալի առկայությունը ոչ կատարյալի մեջ, իմաստների խորությունը առօրյա կյանքում, այսինքն՝ այն ամենը, ինչը դուրս է մնացել խոսքերից ու պատկերներից, հետևաբար՝ կմնա հավիտյան: Բացահայտել և ճանաչել, ճիշտ մեկնաբանել այդ գաղտնիքը, այդ խորհրդանշական պատկերները. ահա սրանք եղան այն իմաստությունը, որին ճգտում էր չինական ավանդույթը: Իսկ այդ իմաստությունը հենց գիտելիքի վերափոխման գաղտնիքն է, երբ նախ՝ արտաքին աշխարհի պատկերները վերածվում են ներքին, խորհրդանշական և համապատասխանաբար «իսկական» պատկերացումների, ապա՝ հետադարձվում են՝ վերափոխվելով արտաքին գործողության, որը և հանգեցնում է ցանկալի, ճիշտ, «երկնքի կամքին համահունչ» արդյունքի:

Չինական փիլիսոփայական, աշխարհայացքային պատկերացումներին ընդհանրապես բնորոշ է «իրերի ողջ բազմությունը» բաժանել արտաքին և ներքին կողմերի: Ընդ որում, կողմերից յուրաքանչյուրն իր հերթին կարող է ունենալ իր արտաքին և ներքին բաժանումները, այսինքն՝ ներքին կողմը կարող է մի արտաքին շերտ ունենալ: Իմաստությունը, ըստ ավանդույթի, հենց զգացողությամբ տրված գիտելիքն է, որը և թույլ է տալիս նշմարել դրանք, այսինքն՝ նյութական և ոչ նյութական գոյերի մշտական երկվությունը, տեսնել կյանքի էությունը իր իսկ քողարկված, խորքային և բազմաշերտ հոսքի մեջ:

Ուստի կանոնական տեքստը ըմբռնելու համար պահանջվում է տրամաբանված, առարկայական մտածողությունից անցում կատարել ստեղծագործ և ոչ միօրինակ մտածողությանը. այդ դեպքում է միայն հնարավոր հասկանալ ասվածի ներքին իմաստը և իմաստավորել չասվածը, մեկնաբանել խորհրդանշական կերպարներն ու ասույթները: Կարևոր է նշել, սակայն, որ չին իմաստունների համար նույն այդ զգացողությամբ տրված պատկերացումներն ու գիտելիքները ինքնանպատակ չէին. դրանք միշտ

ծառայեցվում էին բանականությանը, և դրանով իսկ այլաբանությունը դառնում էր ճշմարտությունը տեղ հասցնելու ուղիղ և իրապես ամենից անմիջական միջոցը: Իսկ դա իր հերթին պահանջում է, որ բոլոր ժամանակներում մեկնիչը (բայց նաև թարգմանիչը) այս պատկերացումներն ու գիտելիքները պարտադրաբար նաև ներդաշնակի իրեն ժամանակակից աշխարհի իրողությունների յուրահատկություններին, նույն այդ տեքստի սեփական, անձնային ընկալումներին:

Աշխարհընկալման վերոնշյալ առանձնահատկությունների նախադրյալները մեծ մասամբ պայմանավորված են հենց չինական հիերոգլիֆային գրով, հիերոգլիֆային գրի նշանների ամբողջությամբ՝ հիերոգլիֆիկայով: Կարելի է ասել, որ բառի և պատկերի արտաքին միասնությունը յուրովի բնորոշում է չինական մշակույթի դեմքը և համապատասխանաբար դրա ներսում եղած հարաբերությունները: Արդեն ասվեց, որ չինական հիերոգլիֆները ի սկզբանե ձևավորվել են ոչ թե որպես տառեր, այլ որպես նկարներ և պատկերներ, և նշանակում էին ոչ միայն որոշակի առարկաներ, այլ նաև վերացական հասկացություններ, անգամ ամբողջ իրավիճակներ: Հիերոգլիֆները զուրկ են սեռ, թիվ, ժամանակ և անգամ խոսքի մաս ցույց տալու ձևաբանական ցուցիչներից, այսինքն՝ չինարեն բառը արտաքինից երբեք չի փոփոխվում՝ անկախ նրանից, թե ով է խոսում, ինչ է խոսում և որ ժամանակով է խոսում: Բառը չի փոփոխվում ո՛չ եզակի կամ հոգնակի թվում, ո՛չ արական կամ իգական սեռ ցույց տալիս, ո՛չ խոնարհվում է, ո՛չ հուլովվում: Այն չի փոփոխվում ո՛չ նախադասության սկզբում, ո՛չ վերջում, այն չի փոփոխվում՝ անկախ նրանից՝ ցույց է տալիս գործողություն, թե վիճակ, բայ է, թե գոյական, մակբայ է, թե ածական: Երբեք չի փոփոխվում: Այլ կերպ ասած՝ չինարենում իսպառ բացակայում է բառի ձևափոխությունը: Բայց սա չի նշանակում, որ չինարենը չի արտահայտում վերը թվարկված լեզվական համընդհանուր առանձնահատկությունները: Բացի այդ, չինարենի հնչյունական համակարգում շուրջ 400 վանկ է, այսինքն՝ յուրաքանչյուր վանկ համապատասխանում է բազմաթիվ բառերի: Եթե 414-ը (ժամանակակից չինարենում վանկերի քանակն է) բազմապատկենք 4-ով (չինարենում հնչերանգների քանակն է), կստանանք 1656: Այսինքն՝

Ժամանակակից չինարենում վանկերն արտասանելու 1656 հնչե-
րանգ կա, այսինքն՝ բառերն արտաբերելու 1656 տարբերակ կա:
Այլ կերպ ասած՝ ժամանակակից չինարենը կարող է գործածել
ընդամենը վանկերի 1656 տարբերակ՝ շուրջ 50 հազար հիերոգլիֆ
կարդալու համար: Իրականում վանկերի արտասանության ավելի
քիչ տարբերակներ են գործածվում՝ 1297 (քանի որ ոչ բոլոր վան-
կերն են զուգակցվում բոլոր 4 հնչերանգների հետ): Այս պատ-
ճառով էլ չինարենը աշխարհի ամենաշատ համանունություն
ունեցող լեզուն է: Միևնույն հնչումով արտասանվում են տարբեր
իմաստներ ունեցող տարբեր հիերոգլիֆներ: Տասնյակ, նույնիսկ
հարյուրավոր հիերոգլիֆներ տարբեր են գրությամբ, բայց միան-
գամայն նույն արտասանությունն ունեն: Օտարների աչքում այս
անհաղթահարելի թվացող լեզվական դժվարությունը չինացիները
լուծում են իրենց համար պարզ եղանակով՝ հաղորդակցական հա-
մատեքստի և նշանների զուգակցության միջոցով: Ի տարբերություն
ողջ աշխարհում կիրառվող փիլիյին լատինատառ և ռուսերենում
կիրիլիցայի հիման վրա մշակած Պալլադիի համակարգերի՝ հայե-
րենի հնչյունական հարուստ համակարգը հնարավորություն է տա-
լիս առավել ճշգրիտ հնչադարձելու չինարենը: Նկատի առնելով
հայերենի այդ առանձնահատկությունը, մենք ժամանակին մշակե-
ցինք չինարենի՝ հայերեն հնչադարձության մի նոր համակարգ, որն
էլ կիրառվել է «36 հնարք»-ի թարգմանության մեջ:

Բազմիմաստությունը ոչ միայն չինարենի, այլև ընդհանրա-
պես չինական մտածելակերպի, աշխարհընկալման կարևորագույն
բնութագրերից է: Այստեղ ի հայտ է գալիս մի երկընտրանք. ինչն
է ստեղծել ինչը: Կամ համարել, որ համանունությունը և բառային
փոփոխության սահմանափակումները մեծագույն ազդեցություն
ունեցան մտածելակերպի և աշխարհընկալման վրա, կամ էլ՝ որ
հիերոգլիֆային նշանների բազմիմաստությունը խոր հնության
շրջանի մտածողների և գրիչների՝ մենիմաստությունից վերա-
ցարկվելու գիտակցված ձգտման արդյունքն էր: Ակնհայտ է,
սակայն, որ գրային ավանդույթի ծագման ժամանակից սկսած,
իմաստն ու նշանակությունը, ըստ էության, հանգեցվեցին նշանի
գեղագիտական-իմաստաբանական որակներին:

Այս առումով ուշագրավ է, որ ըստ չինացիների ավանդական
պատկերացումների՝ գրչությունը հավասարապես սկիզբ է առ-

նում ինչպես մարդուց, այնպես էլ բնական աշխարհից: Երկինքը
«նախշ» ունի՝ արտահայտված երկնային լուսատուների պատկեր-
ներով և շարժումներով, Երկրի «նախշը» արտահայտվում է
աշխարհագրական տեղանքի, լանդշաֆտի ուրվագծերով, բայց
«նախշը», որպես այդպիսին, ի վերջո, իր ավարտուն, ընդհան-
րացված տեսքն է ստանում մարդու գործունեության մեջ՝ հենց
գրային նշաններում: Սրանով է բացատրվում Հին Չինաստանում
մնայուն հավատը գեղագրության, կալիգրաֆիայի և անգամ ցան-
կացած գրված բառի մոգական, կախարդական ուժի հանդեպ:
Դրա ապացույցը հենց «մշակույթ» բառն է՝ 文化, որը չինարենում
արտահայտվում է երկու հիերոգլիֆով՝ 文-նախշ և 化-ում, -ություն
(վերջածանց է, դրվում է գոյականի կամ ածականի վերջում, և
ստեղծված բառը ձեռք է բերում որոշակի հատկանիշ): Այլ կերպ
ասած՝ չինարենի պատկերացմամբ՝ «մշակույթը» բնական «նախ-
շագարդում» է, իսկ այն, ինչը մշակույթի մի մասն է, այն էությունն
է, որը ստացել կամ ձեռք է բերել «գարդանախշի», «գարդա-
նախշման» հատկանիշներ, հետևաբար կարող է նշանակվել հա-
մապատասխան նշանով:

Չինական նշանների աշխարհը, որպես այդպիսին, հեռու է
ֆիզիկական աշխարհի կաղապար-պատճենը լինելուց, ավելին՝
նշանների համապատասխանությունը իրենց նախատիպերին,
ինչպես նաև նշանի և դրա իմաստի հարաբերությունը այնքան
կարևոր չէին, որքան նշանների միջև եղածները: Գաղտնիքը հենց
խորհրդանիշների փոխազդեցության, հարաբերակցության և հա-
մակցության, դրանց ոչ այնքան փոխադարձ նմանության, որքան
տարբերության մեջ է: Ուստի և ոչ միայն գրային նշանների, այլև
ամեն ինչի՝ երևույթների, առարկաների էությունը բացահայտվում
է դրանց փոխհարաբերակցության մեջ, երբ, օրինակ, կարևորվում
է ոչ այնքան մեկ առանձին իրադարձությունը, որի նշանակու-
թյունը երբեմն շատ հարաբերական է, որքան իրադարձություն-
ների միջև եղած փոխառնչություններն ու զուգորդումները:

Փոխկապակցվածության, հարաբերակցության և փոխազդե-
ցության մասին այսպիսի պատկերացումները բխեցվում են Յին և
Յան տիեզերական հակադիր ուժերի, սկիզբների հայտնի ու-
մունքից: Յինը և Յանը ի սկզբանե նշանակում էին համա-
պատասխաբար լեռան մութ ու լուսավոր լանջերը, բայց արդեն

վաղնջական ժամանակներում դրանք տիեզերաբանական խորհրդանիշների մի ամբողջ շարքի առաջացման հիմք դարձան: Յան ուժը խորհրդանշում է երկինքը, արևը, ջերմությունը, լույսը, կյանքը, արական ակտիվ սկիզբը և այլն, իսկ Յինը՝ երկիրը, լուսինը, ցուրտը, խավարը, մահը, իգական պասիվ սկիզբը և այլն: Յինի և Յանի փոխազդեցությունը հեռու է այլ մշակույթների դիցաբանությունից հայտնի Լուսի և Խավարի հավերժական հակամարտությունից: Յինը և Յանը միմյանց հակադրված են փոխադարձ միասնության մեջ և միասնական, անբաժան են փոխադարձ հակադրման մեջ, նրանցից ոչ մեկը չի գերակայում մյուսի նկատմամբ, հակառակը՝ գոյություն ունեցող ամեն ինչ Յինի և Յանի համակցությունն է՝ բնական համամասնության մեջ:

Համաձայն հին չինական փիլիսոփայության՝ հենց այս երկու ուժերն են Մեծ Սահմանի՝ տիեզերքի անհամար կերպափոխությունների, նրա հակադրությունների ստեղծագործ միասնության հիմքում կամ կենտրոնում: Մեծ Սահմանը ավանդաբար պատկերում էին շրջանի տեսքով (անվերջության խորհրդանիշն է), որը ալիքաձև (կեցության շարժուն բնույթն է) գծով բաժանվում է երկու՝ սև (մութ) և սպիտակ (լուսավոր) մասի: Շրջանի ներսում համաչափ տեղադրված երկու կետերը՝ սևի մեջ սպիտակը, և սպիտակի մեջ սևը, արտահայտում են գոյի երկու հակադիր ուժերի փոխներթափանցումն ու փոխազդեցությունը (տես նկ. 1):



Նկ. 1


Տիեզերքի խորհրդանշային համակարգը առավել ծավալուն ներկայացված է չինական քաղաքակրթության հնագույն և կարևորագույն հուշարձաններից մեկում՝ «Փոփոխությունների կանոնում», որը, ինչպես ասվեց, թվագրվում է մ.թ.ա. X-VIII դդ.: Այն չինական ավանդական կանոնական գրականության ամենահին

օրինակներից է, որի գաղափարներով և կազմման սկզբունքներով առաջնորդվել են նաև 36 հնարքի հեղինակը / հեղինակները: Ավելին, առանց նրա, գրեթե անհնար է հասկանալ և մեկնաբանել հնարքների նկարագրության մեջ կիրառվող այլաբանությունները, դրանց իմաստն ընդհանրապես:

«Փոփոխությունների կանոնը» սկզբում ընկալվում էր միայն որպես գուշակությունների գիրք, սակայն ժամանակի ընթացքում դարձավ չինական դասական գրականության ամենահայտնի և, ընդգծենք, ամենաբարդ տրակտատներից մեկը, եթե ոչ առաջինը: Այն բովանդակում է չինական տիեզերաբանական-փիլիսոփայական ուսմունքը տիեզերքի առաջացման, կյանքի՝ որպես տիեզերական հավերժական շարժման արտացոլման մասին: Չինացիները, դիտարկելով բնության երևույթների (գիշերվա և ցերեկվա, տարվա եղանակների, լուսատուների շարժման և այլն) պարբերական հերթափոխությունը և իրենց նկատի առնելով որպես բնության մի մասնիկը, որն իր գոյությամբ մասնակցում է տիեզերական գործընթացներին, համարեցին, որ սեփական ճակատագրի հաջող կարգավորման համար պետք է ճանաչել Երկնքի բոլոր թելադրանքները՝ ընտրելով և հետևելով նրանցից միայն ճշմարիտներին: Եվ հենց նման ճանաչման ու ընտրության պահանջից էլ ծագեց գուշակությունը՝ իր տարատեսակ տեսություններով, եղանակներով ու հմտություններով, որոնցից առավել հայտնին եղավ «Փոփոխությունների կանոնը»:

Դրա հիմքում երկակի ինքանտիպ կողմ է՝ գծագրորեն երկու խորհրդանիշների համակցությունը: Դրանք են՝ հոծ գիծը, որը համապատասխանում է Յան ուժին, և ընդհատուն գիծը, որը համապատասխանում է Յին ուժին: Այս խորհրդանիշների չորս հնարավոր համադրությունները համապատասխանում են տարվա եղանակներին և աշխարհի չորս կողմերին: Բայց գլխավոր նշանակությունը վերագրվում է երեք գծից բաղկացած համակցություններին, որոնք, ըստ ավանդության, հայտնագործել էր առասպելական տիրակալ Ֆու Սին, և որոնք արևմտյան գրականության մեջ անվանվում են տրիգրամ: Դրանք պատկերվում են շրջանագծի տեսքով՝ տիեզերական շրջապտույտի ևս մեկ խորհրդանիշ: Երեք հոծ գծերի համադրությունը, որպես ստեղծագործ սկզբի ամենավերին աստիճանը, համապատասխանում է Երկնքին, իսկ ընդհատուն երեք գծերի համադրությունը խորհրդանշում է առա-

վելագույն զիջողականություն, և համապատասխանում է Երկրին: Եվս վեց տրիգրամ՝ երկու սկիզբների տարբեր փոխդասավորությամբ, խորհրդանշում են տարբեր տարերքներ: Հին չինական փիլիսոփայական ուսմունքներում այդ ութ տրիգրամները արտացոլում են տիեզերքի առաջացման ելակետային փուլը, համընդհանուր գոյի, կեցության հիմնարար սկզբունքները (տե՛ս նկ. 2, 3):



նկ. 2




նկ. 3

Տրիգրամների տարբեր համադրությունները ձևավորում են որոշակի հերթականությամբ դասավորված 64 համակցություն՝ հեկսագրամներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անվանումը («Ստեղծագործություն», «Իրագործում», «Դեռ վերջը չէ», «Արդեն վերջն է» և այլն): «Փոփոխությունների կանոնում» ներկայացված են միմյանց փոխկապակցված 384 իրավիճակ (64 հեկսագրամ՝ կազմված 6 գծից), յուրաքանչյուր իրավիճակի ավարտը նշանակում է հաջորդի սկիզբը, իսկ մեկ շրջապտույտը՝ ծնվելու, զարգացման կամ աճի, վերելքի, անկման և մահվան ամբողջական շարքը, որի ավարտին հետևում է մի նոր՝ նույնպիսի շրջապտույտի սկիզբը (տե՛ս նկ. 4): Այսպիսի անվերջ, հարաշարժ շրջապտույտը ոչ այնքան բացատրում, որքան հաստատում է, որ չինական ավանդույթում իրականությունը ժամանակի և տարածության մեջ երբեք չի դիտարկվել որպես անշարժ վիճակ. իրականությունը միշտ եղել է մի ընթացք՝ առանց սկզբի ու վերջի, առանց միասնական գաղափարի և համընդհանուր ձևի: Ամեն բան չինական աշխարհում միշտ արժևորվել է հենց մի այլ բանի հետ ունեցած

փոխառնչություններով և բացառապես դիտարկվել ինչ-որ մի համադրության մեջ:

Բուն գուշակությունը սկսվում էր այն պահից, երբ գուշակը, ձեռքի մեջ խաղացնելով եղեգնյա փայտիկները կամ հազարատերևուկի ցողունները, ստանում էր այս կամ այն հեկսագրամի համարը: Յուրաքանչյուր հեկսագրամ և այն կազմող գծերը ունեին կարճ պարզաբանումներ՝ ասույթների ձևով, որոնք, մի կողմից՝ տեխնիկական բնույթի ցուցումներ էին գուշակողի համար, մյուս կողմից՝ գեղարվեստական փոխաբերությունների, այլաբանությունների միջոցով նկարագրում էին իրավիճակի ոչ առարկայական հատկանիշները: Այլ կերպ ասած՝ դրանք յուրատեսակ ակնարկություններ էին, որոնք կարիք ունեին ինտուիտիվ, հոգեբանական խոր իմաստավորման: Ընտրված հեկսագրամի այդպիսի մեկնության միջոցով և իր երևակայության, հանրագիտակության և կենսափորձի շնորհիվ գուշակը պետք է հասկանար, գուշակեր, թե ինչ էր հնարավոր անել այդ պահին, և ինչ պետք է սպասել ապագայում:

Հիերոգլիֆներն իրենց վերը նշված սիմվոլիզմով, պատկերավորությամբ և բազմիմաստությամբ լավագույնս համապատասխանում էին նույն այդ «տեղեկությունները» փոխանցելու նպատակին, որոնք ենթադրում էին, բայց ոչ թելադրում:



նկ. 4

Թվում է՝ ասվածից ակնհայտ է դառնում «Փոփոխությունների կանոնի» ներգործությունը «Երեսունվեց հնարք» գրքի հեղինակի / հեղինակների վրա, հատկապես ասույթների մեկնության, իրավիճակների նկարագրության, առավել նպատակահարմար գործելակերպի ընտրության հարցերում:

Վերը արդեն խոսվեց փոքրածավալ և ընթերցող նեղ շրջանակի համար նախատեսված «Երեսունվեց հնարք» աշխատության աննախադեպ հաջողության մասին: Թվում է՝ այդչափ մեծ թվով ընթերցողների փաստը հազիվ թե կարելի լինի բացատրել ռազմարվեստի պատմության հանդեպ նրանց հետաքրքրությամբ: Այլ բան է, եթե այն դիտվի որպես որոշակի միջոցների հավաքածու՝ կյանքի շատ ասպարեզներում հաջողության հասնելու, անձնական և գործնական հարաբերությունները առավել արդյունավետ դարձնելու համար:

Արդեն անդարձելի անցյալում են մնացել ի շահ իրենց միապետների ծառայող, կեղծամներ հագած քաղաքավարի ազնվականները և ոսկեկար պարեգոտներով իմաստունները, այլևս չկան շքեղ համազգեստներով գորավարները, որոնք անձամբ էին առաջնորդում զինվորներին: Մեզ ավելի մոտ ժամանակներում նրանց փոխարինելու եկան միանման մուգ կոստյումներով և խաչի գույնի համազգեստներով, այն էլ սոցիալական տարբեր շերտերից եկած մասնագետները: Սակայն, չնայած այս և նման այլ արտաքին բնույթի փոփոխություններին, անկախ հետապնդվող նպատակների յուրահատկություններից, անփոփոխ է մնացել մի բան, այն է՝ ռազմավարական մտածողությունը՝ որպես ցանկացած տեսակի փոխհարաբերությունների, փոխներգործության առանցքային բաղադրիչ: Այս առումով «Երեսունվեց հնարք» տրակտատը առաջարկում է թեև ինքնատիպ, ոչ դյուրին ընկալվող, բայց դրա հետ մեկտեղ հետևողական, ողջամիտ և գործնական մոտեցում իրականության հանդեպ, իսկ նույն այդ հնարքների կիրառությունը պարզապես անհրաժեշտ է դառնում ամենատարբեր իրավիճակներում: Այսօր էլ այժմեական են թվում գրքում բերված բազում ապացույցներն առ այն, որ ռազմավարական և մարտավարական առումներով շատ կարևոր են ինչպես սեփա-

կան անձի, այնպես էլ մրցակցի հոգեբանական առանձնահատկությունների, առավելությունների և թերությունների լավ իմացությունն ու օգտագործումը: Եվ ինչպես վերը նշվել է, այսպիսի մոտեցման շնորհիվ ձեռք բերված հաղթանակը, հաջողությունը երբեք չպետք է ընկալվի որպես խաբեական գործողության արդյունք, քանի որ ցանկացած հակամարտության մեջ հաղթանակ է տանում ուժեղագույնը, արժանավորը, նա, ով իր մրցակցից հեռատես է, նա, ով լավագույնս է գնահատել և օգտագործել կոնկրետ իրավիճակի նրբությունները, նա, ով կարողացել է խոչընդոտել այդ նույն հնարքների կիրառումը հակառակորդի կողմից:

Այսպիսով, 36 խորամանկությունների կամ հնարքների հավաքածուն լոկ գործելակերպի մոդել չէ: Այն նաև կյանքի ընկալման ինքնատիպ միջոց է, որին բնորոշ են իմացական ճկունությունը, սովորական, պարզունակ, զուտ տրամաբանական մտածողությունից դեպի ստեղծագործ, ոչ միօրինակ, ներհուն մտածողության անցում կատարելու կարողությունը, ապագան ինտուիտիվ, բայց կենսափորձի վրա հիմնված կանխատեսելու հմտությունը, և, վերջապես, ձևի ու բովանդակության պատկերացումների միանշանակության վերանայումը և այս ամենի արդյունքում վաղուց ծանոթը նորովի տեսնելու, վաղուց բացահայտվածը նորովի բացահայտելու հնարավորությունը:

Չինական քաղաքակրթությունը ստեղծել և պահպանել է անվիճելիորեն ճշմարիտ բազում պատկերացումներ շրջակա աշխարհի իրադարձությունների ու երևույթների մասին, որտեղ մարդն իր կենսագործունեությամբ միշտ իր որոշակի՝ ո՛չ շատ բարձր, ո՛չ շատ ցածր տեղն է զբաղեցրել բնության հարաշարժ, փոփոխական ընդհանուր պատկերում: Այսպիսի աշխարհայացքի կենսունակությունը անառարկելիորեն համոզիչ է թվում, թեև չինական քաղաքակրթությունը երբեք միտված չի եղել որևէ մեկին դրանում համոզելու: Բայց մենք չենք կարող չհիանալ աշխարհի մեկ այլ տեսլականի այս առանձնահատուկ ամբողջականությամբ, չենք կարող չտեսնել նրանում մեզ համար արժեքավոր ու ուսուցողական բազում գաղափարներ և գործեր:

Լևոն Սարգսյան

(PhD, Linguistics and Applied Linguistics,
Beijing Normal University)

Լևոն Մելքոնյան

(ME, School of Economics, Capital University of Business
and Economics, Beijing)

Պեկին

2018-2019 թթ.

三十六计

ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ՀՆԱՐՔ

[Առաջարան]

六六三十六，数中有术，术中有数。阴阳燮理，机在其中。
机不可设，设则不中。

Վեց անգամ վեց՝ երեսունվեց, հաշվարկելու մեջ հմտություն, հմտության մեջ հաշվարկելու կարողություն: Գոյի փոխկապակցված հակադիր էությունները իրենց փոխադարձ կապերով ներդաշնակ են, և հենց այդ ներդաշնակության մեջ է [հնարքի կիրառման] հնարավորությունը: Հնարավորությունը՝ հարմար առիթը զայիս է հանպատրաստից, այն չի ստեղծվում նախապես, նախապես ստեղծվածը չի աշխատում:

[按] 解语重数不重理。盖里，术语自明；而数，则在言外。若徒知术之为之，而不知术中有数，则术多不应。且诡谋权术，原在事理之中，人情之内。倘事出不经，则诡异立见，论世惑俗，而机谋洩矣。或曰，在三十六计中，每六计成为一套，第一套为胜战计；第二套为敌战计；第三套为攻战计；第四套为混战计；第五套为并战计；第六套为败战计。

[Մեկնություն] Ամենատականը հաշվարկներն են և ոչ թե սկզբունքներով, տեսություններով տարվելը: Սկզբունքներն ականա՛ս ի հայտ կգան նպատակին հասնելու միջոցներից, մինչդեռ հաշվարկները դուրս են մտում նկարագրությունից: Եթե ձգտեք ճանաչել նպատակին հասնելու միջոցները՝ զուտ որպես նպատակին հասնելու միջոցներ՝ չիմանալով, որ միջոցները պետք է հաշվարկ ներառեն, ապա որքան էլ միջոցներ լինեն, միևնույն է, դրանք անիրագործելի կլինեն: Ավելին, հնարքները, խաբեական մտադրություններն ու խորամանկությունները բխում են իրերի բնականոն, օրինաչափ կարգից, դեպքերի ընթացքից և

մարդկային զգացմունքներից: Եթե իրերի ընթացքը չի համապատասխանում օրինաչափ հաջորդականությանը, ապա սուտը դառնում է ճանաչելի, ինչին հետևում են խոտվությունն ու անկարգությունը, և մտադրությունը բացահայտվում է:

Հնդունված է համարել, որ 36 հնարքները բաժանվում են 6 մասի, որոնցից յուրաքանչյուրը ներառում է 6 հնարք՝

- I - հաղթողների հնարքներ,
- II - հափսասարագոր ուժերի դիմակայության հնարքներ,
- III - հարձակման հնարքներ,
- IV - խառը դիմակայության հնարքներ,
- V - թաքնված դիմակայության հնարքներ,
- VI - պարտվողների հնարքներ:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

胜战计

ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՀՆԱՐՔՆԵՐ



瞒天过海

[mán tiān guò hǎi]

Բացահայտ, թաքուն օվկիանոս անցնել

各周则意怠，常见则不疑。阴在阳之内，不在阳之对。

太阳，太阴。

Համակողմանի պատրաստվածությունը թուլացնում է զգնությունը, հաճախապես երևույթները կասկած չեն հարուցում: Գաղտնին չի հակադրվում ակնհայտին, գաղտնին անփոփոխ է ակնհայտի մեջ:

Ամեն ինչ բացահայտել նշանակում է ամեն ինչ թաքցնել:

【按语】阴谋作为，不能于背时秘处行之。夜半行窃，僻巷杀人，愚俗之行：非谋士之所为也。昔孔融被围，太史慈将突围求救。乃带鞭摄弓，将两骑自随，各作一的持之。开门出，国内外观者并和骇，慈竟引马至城下壑内，植所持的，摄之，摄毕还。明日复然，围下人或起或卧。如是者再，乃无复起者。慈遂严行蓐食，鞭马直突其围：此贼觉，则驰去数十里矣。

[Մեկնություն] Մտադրությունը հաջող իրագործելու համար կարիք չկա գործելու ծածուկ տեղերում գաղտնիության քողի տակ: Գիշերային խավարում գողություն անելը, խուլ ու մութ ծակուծուկերում մարդ սպանելը ոչ թե խորամանկ մտադրությունն իրագործող, այլ անխելք ու տգետ մարդու գործ է:

Մի անգամ թշնամու գորքը պաշարում է զորավար Բոն Տոնի՛ կառավարած քաղաքը: Ոմն Թայ Շըցըն պետք է ճեղքեր պաշարումը՝ օգնության հասնելու ինդրանքը տեղ հասցնելու համար: Վերցնելով նետ ու աղեղը՝ մի քանի հեծյալների ուղեկցությամբ նա, ի զարմանս պաշարողների, դուրս եկավ դարպասներից, ձին բշեց քաղաքի պարսպի տակի խրամատը և սկսեց նետեր արձակել իր իսկ տեղադրած նշանակետին: Նետերն արձակելուն պես վերադարձավ քաղաք: Հաջորդ օրը էլի նույնը: Այս անգամ քաղաքը պաշարած զինվորներից մեկը մի փոքր բարձրացավ, որ



տեսնի՝ ինչ է կատարվում, ունանք էլ իրենց տեղում մնացին պատկած: Երբ այս նույն գործողությունը կրկնվեց երրորդ անգամ, թշնամու զինվորներն ընդհանրապես ուշադրություն չդարձրին կատարվածին: Վերջին անգամ Թայ Շըցըն, ջանասիրաբար պատրաստվելով և ողջ ուժերը լարելով, ձիով դուրս եկավ քաղաքից, մտրակեց ձիուն և սուրաց թշնամու զինվորների մոտով: Երբ թշնամին ուշքի եկավ, Թայ Շըցըն արդեն հեռու-հեռվում էր:

Պարզաբանումներ

Հակառակորդը, որն ամբողջությամբ պատրաստ է հարձակումը հետ մղելու և ձգտում է կանխատեսել ամեն ինչ, հաճախ, բխվելով կասկած չտաջացնող իրավիճակի, կորցնում է զգոնությունը: Խտրամանկ մտադրությունը քողարկվում է, երբ հակառակորդի «վզին է փաթաթվում» կրկնվող, միօրինակ գործողությունների շարունը: Կիրառվում է հակառակորդի գիտակցության մեջ արդեն իսկ եղած «սովորականի» կարծրատիպը. նրա համար ստեղծվում է մի իրավիճակ, որը նա չի ընկալում որպես քողարկված վտանգ: Մինչդեռ հաճախ հենց հանրահայտ իրողությունն է իր մեջ մեծագույն գաղտնիք թաքցնում: «Գաղտնին չի հակադրվում ակնհայտին, գաղտնին ամփոփված է ակնհայտի մեջ», այսինքն՝ թաքցնելիք իրողություններին պետք է սովորական և միօրինակ գործողությունների, կարծրատիպերի տեսք տալ, մղել դրանք առաջին պլան, դարձնել տեսանելի: Սա հակառակորդին ստիպում է հավատալ իրողությունների բնականությանը, թուլացնում է նրա զգոնությունը և հնարավորություն է տալիս ռազմավարին կոտրելով ձևավորված կարծրատիպը իրագործելու իր գաղտնի մտադրությունը:

¹ Քոն ժոն (153-208 թթ.)՝ Արևելյան Խանի պետական պաշտոնյա, գիտնական և զորավար, Կոնֆուցիոսի հետևորդներից:

ՀՆԱՐՔ 2

围魏救赵

[wéi Wèi jiù Zhào]

Պաշարել Վեյը՝ և փրկել Չաուն²

共敌不如分敌，敌阳不如敌阴。

Լավ է բաժանված թշնամիներ ունենալ, քան միավորված, լավ է հարձակվել այնտեղ, որտեղ թշնամին թույլ է, քան այնտեղ, որտեղ նա ուժեղ է:

【按语】治兵如治水：锐者避其锋，如导疏；弱者塞其虚，如筑堰。故当齐救赵时，孙宾谓田忌曰：“夫解杂乱纠纷者不控拳，教斗者，不搏击，批亢捣虚，形格势禁，则自为解耳”

[Մեկնություն] Թշնամու հաղթելը նման է ջրի հոսանքները կանախարելուն. եթե թշնամին ուժեղ է, լավ է խուսափել նրա սրասայրից այնպես, ինչպես սրընթաց հոսանքն են շեղում ջրհեղեղի դեպքում, եթե թշնամին թույլ է, լավ է սեպի պես խրվել նրա պաշտպանության ճեղքի մեջ այնպես, ինչպես ամբարտակ են կանգնեցնում ջուրը պատնեշելու համար: Այդ պատճառով իր ժամանակին, երբ Ցի թագավորությունը³ փրկում էր Չաոյի թագավորությունը, Սուն Պինը⁴ այսպես է ասում Թինն Օին⁵. «Հանգույցը քանդելու համար պետք չէ բռունցքներ գործածել. երբ երկուսը կռվում են, նրանցից մեկի փրկության համար մի խցկվիր մարտի մեջ, թշնամուն ավելի սաստիկ խփիր իր անպաշտպան տեղին, այնտեղ, որտեղ ինքը թույլ է, իրավիճակը հետ շրջիր, և հանգույցն ինքն իրեն կքանդվի»:

Պարզաբանումներ

Գործելով որոշակի ուղղությամբ՝ ուժեղ հակառակորդը ստիպված կլինի նախաձեռնությունը զիջելու կամ հրաժարվելու նախապես որդեգրած ռազմավարությունից, եթե ուղղակի կամ անուղղակի վտանգ ծագի իր թույլ կողմում՝ այն կողմում, որտեղ

ինքը խոցելի է: «Լավ է հարձակվել այնտեղ, որտեղ թշնամին թույլ է, քան այնտեղ, որտեղ նա ուժեղ է»: Հակառակորդի կենտրոնացրած ուժերի հետ առճակատումից խուսափելը և միաժամանակ գրոհելը կամ գրոհելու վտանգ ստեղծելը նրա խոցելի կողմում, ուր բնավ հարձակում չէր սպասվում, կտրիպեն նրան իր հիմնական ուժերը վերադասավորել կամ թուլացնել հարձակման գլխավոր ուղղության վրա: Այսպիսով, հակառակորդին գլխավոր ուղղությունից շեղելու համար պետք է բացահայտել կամ ստեղծել նրա համար խոցելի մի հատված, որի պահպանումը, պաշտպանությունը շատ ավելի առաջնային են դառնում, քան գրոհի սկզբնապես որոշված ուղղության վրա ինչ-ինչ ձեռքբերումներ ունենալը:

¹ Իշխանական կալվածք և թագավորություն Գարնան և Աշնան (մ.թ.ա. 770–476 (403) թթ.) և Մարտնչող թագավորությունների (մ.թ.ա. 476 (403)–221 թթ.) ժամանակաշրջաններում: Ընդգրկում էր ներկայիս Խընան նահանգի հարավային, Խըպեյ նահանգի հարավարևմտյան, Շանսիի արևելյան և Շանտոնի արևմտյան մասերը:

² Իշխանական կալվածք և թագավորություն Գարնան և Աշնան և Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջաններում: Ընդգրկում էր ներկայիս Խըպեյ նահանգի կենտրոնական և հարավային, Շանսի և Խընան նահանգների հյուսիսային մասերը:

³ Իշխանական կալվածք և թագավորություն Գարնան և Աշնան և Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջաններում, գտնվում էր ժամանակակից Շանտոն նահանգի հյուսիսում:

⁴ Սուն Պին (մ.թ.ա. ? – 316 թթ.)՝ Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջանում Ցի թագավորության ռազմական նախարար, հայտնի ռազմավար Սուն Ուի հետնորդներից:

⁵ Թիեն Ծի՝ Ցի թագավորության զորավար:

ՀՆԱՐՔ 3

借刀杀人

[jiè dāo shā rén]

Սպանել թշնամուն ուրիշի դանակով

敌已明，友未定，引友杀敌，不自出力，以损推演。
Երբ թշնամին հստակ նշված է, իսկ դաշնակիցը դեռ չի կողմնորոշվել, թշնամուն ջախջախելու համար օգտվիր դաշնակցից, իսկ ինքդ ուժ մի կիրառիր. այս հնարքի էությունը բխեցվում է Սուն՝ հեկսագրամի իմաստից:

【按语】敌象已露，而另一势力更张，将有所为，便应借此力以毁敌人。如子官之存鲁乱齐破吴强晋；诸葛亮之和吴拒魏，及关羽围樊、襄，曹欲徙都，懿及蒋济说曹曰：“刘备、孙权外亲内疏，关羽得志，权必不愿也。可遣人劝蹶其后，许割江南以封权，则樊围自释。”曹从之，羽遂见擒。

[Մեկնություն] Թշնամին արդեն բացահայտված է, սակայն կամենել ուրիշ ուժ, որը կարող է որոշակի դերակատարություն ունենալ. հարկավոր է օգտագործել այդ ուժը թշնամուն ոչնչացնելու համար: Օրինակ՝ այսպես վարվեց Ծը Գունը². Լու³ թագավորությունը կորստից պաշտպանելու համար քսոս առաջացրեց Ցի թագավորությունում, ավերեց Ու⁴ թագավորությունը և տիրեց Ծին⁵ թագավորությանը: Ջուզը Լիանը⁶ Ու թագավորության զորքին օգտագործեց Վեյ թագավորության զորքը ջախջախելու համար⁷, ինչպես նաև երբ Գուան Յուն⁸ պաշարեց Ֆանչընը⁹, Ցսո Ցսոն արդեն պատրաստվում էր մայրաքաղաքը տեղափոխել վտանգից հեռու, բայց Ծիան Ծին¹⁰ և Սրմա Ցին¹¹ նրան այսպես են սատար. «Չսպաս Լիու Պեյը և Սուն Ցյուանը ազգակամներ են, բայց նրանց հարաբերությունները հաշտ-համերաշխ չեն, և եթե Գուան Յուն հասնի իր նպատակին, սպա դա Սուն Ցյուանի սրտով չի լինի: Հարկավոր է սուրհանդակ ուղարկել Սուն Ցյուանի մոտ և համոզել նրան, որ խիի Գուան Յուի թիկունքին, իսկ փոխարենը նրան կզիջվեն Ցանծը գետից դեպի հարավ ընկած

հողերը: Այս կերպ մենք կվերացնենք Ֆանչընի պաշարումը»: Ցառ Ցառն որոշեց հեռունել խորհրդին, և իսկապես Գուան Ցուի զորքը ջախջախվեց, իսկ նա ինքը գերեվարվեց և գլխատվեց:

Պարզաբանումներ

Հնարքի էությունն այն է, որ թուլացնես, վնաս հասցնես հակառակորդին և քո շահերն առաջ տանես երրորդ կողմի միջոցով, որը այդ պահին ո՛չ քո դաշնակիցն է, ո՛չ էլ թշնամիդ: Երրորդ կողմը պետք է չկասկածի, որ ինքը ուրիշի ձեռքին գործիք է դարձել: Այսինքն՝ հարկավոր է օգտվել բնականորեն կամ արհեստականորեն ստեղծված հանգամանքներից, որպեսզի երրորդ կողմին քո թշնամու դեմ հանես, և արդյունքում, արտաքուստ չառնչվելով նրանց հակամարտությանը, միաժամանակ պահպանես սեփական ուժերդ:

¹ «Փոփոխությունների կանոնում» Սուն 损卦 ䷨ Նվազում 41-րդ հեկսագրամը ներքևում ունի Տուի տրիգրամը 兑 ䷹ Լիճ, որը խորհրդանշում է հպատակներին, ուրախություն, իսկ վերևում ունի Գեն տրիգրամը 艮 ䷳ Լեռ, որը տիրակալի, ամրության խորհրդանիշն է: Մեկնությունն ասում է. «损: 有孚, 元吉, 无咎, 可贞, 利有攸往»՝ «Նվազում. անկեղծության առկայության դեպքում մեծ երջանկություն կլինի: Վրդովմունք և պարսավանք չեն լինի, համապատասխանում է արդար ուղուն, գործողությունը կհանգեցնի մտադրությունների իրագործմանը»: Մեկ այլ մեկնություն ասում է. «其道上行. 损而有孚, 元吉, 无咎, 可贞, 利有攸往»՝ «Նա, ով ներքևում է, կորցնում է, իսկ նա, ով վերևում է, ձեռք է բերում, սա բարձրագույն սկզբունք է: Նվազման դեպքում կա անկեղծություն, մեծ երջանկություն, պարսավանք չի լինի, մտադրություններն ուղղորդելու տեղ է լինելու»: Այստեղ խաղարկվում է «նվազման» և «ձեռքբերման» փոխազդեցության ընդհանուր դրույթը. եթե ներքևից կորուստ է, ապա վերևից՝ ձեռքբերում, և հակառակը: Եթե դաշնակցին օգտագործեք թշնամուն հեռացնելու համար, ապա դաշնակիցը անխուսափելիորեն «նվազում» է ունենում, որը «ձեռքբերում» է նրա համար, ով դաշնակցին հաջող օգտագործել էր իր թշնամու դեմ պայքարում:

² Ծը Գոն (մ.թ.ա. 520–456 թթ.)՝ Գարնան և Աշնան ժամանակաշրջանի դիվանագետ, քաղաքական գործիչ, Կոնֆուցիոսի աշակերտը:

³ Լու թագավորություն, իշխանական կալվածք Գարնան և Աշնան (մ.թ.ա. 770–476 (403) թթ.) և Մարտնչող թագավորությունների (մ.թ.ա. 476 (403)–221 թթ.) ժամանակաշրջաններում, գտնվում էր ներկայիս Շանտոն նահանգի հարավում:

⁴ Ու թագավորություն, իշխանական կալվածք Գարնան և Աշնան և Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջաններում, գտնվում էր ներկայիս Ծիանսու և Անխուի նահանգների տարածքում:

⁵ Ծին թագավորություն, իշխանական կալվածք Գարնան և Աշնան ու Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջաններում, իր հզորության գագաթնակետին զբաղեցնում էր ներկայիս Շանսի, Խըպեյ նահանգի հարավարևմտյան, Խընան նահանգի հյուսիսարևելյան, Շանսի նահանգի արևելյան և Շանտոն նահանգի արևմտյան տարածքները: Ըստ ավանդության, որ գրի է առել Հին Չինաստանի պատմիչ Սըմա Ցիենը, Կոնֆուցիոսը իր տաղանդավոր և սիրելի աշակերտներից մեկին՝ Ծը Գոնին (մ.թ.ա. 520–456 թթ.), խնդրում է ամեն ինչ անել իր փոքրիկ հայրենիք Լու թագավորությունը փրկելու համար, որին սպառնում էր Ցի թագավորության զորքը: Ծը Գոնը գնում է Ցի տիրակալի մոտ, որը ում հետ պատահի՝ ծարավ էր կովի և համոզում է նրան չհարձակվել Լու թագավորության վրա, քանի որ դրանից անպայման կօգտվի Ու թագավորությունը՝ Ցի թագավորության վաղեմի հակառակորդը: Ցիի տիրակալը համաձայնում է հարձակվել Ուի վրա միայն այն դեպքում, եթե Ու թագավորությունն առաջինը հարձակվի իր վրա: Դրանից հետո Ծը Գոնը գնում է Ու թագավորություն և նրա տիրակալին համոզում օգտվել այն բանից, որ Ցիի զորքը պաշարել է Լու թագավորության քաղաքները, և Լու թագավորության զորքի հետ միասին հարձակվեն Ցիի վրա: Ու թագավորության տիրակալից Ցիի վրա հարձակվելու նախապատրաստման սկզբի մասին հավաստիացումը ստանալուց հետո Ծը Գոնը գաղտնի գնում է Ծին թագավորություն և նրա տիրակալին զգուշացնում այն մասին, թե Ու թագավորության զորքը արշավի է պատրաստվում Ցիի և Ծինի

վրա՝ ողջ երկիրը նվաճելու համար: Այն բանից հետո, երբ Լու և Ու թագավորությունների համատեղ ուժերը ջախջախում են Ցիի զորքին, Ծինի տիրակալը չի սպասում, թե երբ հնարավոր թշնամու՝ Ուի հաղթանակած բանակը կներխուժի Ծին թագավորության սահմանները, և հարձակվում է Ուի հոգնած զորքի վրա՝ հետ շարտելով նրան իր սահմաններից: Այսպիսով, Ծը Գունը, միմյանց դեմ հանելով հզոր թագավորություններին, Լու թագավորությունը փրկեց Ցիի հասցնելիք անխուսափելի կործանումից:

⁶ Ջուզը Լիան (181-234 թթ.)՝ Եռաթագավորության տարիների ականավոր քաղաքական և ռազմական գործիչ, «Եռաթագավորություն» միջնադարյան պատմական վեպի (XIV դ.) կերպար, խելացիության, խորամանկության և ճարպկության համար ժամանակակից Չինաստանում հին շրջանի պաշտելի հերոսներից մեկը:

⁷ Եռաթագավորության տարիները (220-280 թթ.) նշանավորվեցին Վեյ, Ու և Շու թագավորությունների հակամարտությամբ: Տվյալ դեպքում խոսքը Շու և Վեյ թագավորությունների պայքարի մեջ Ու թագավորությանը ներքաշելու մասին է: Ջուզը Լիանը, լինելով Շուի տիրակալ Լիու Պեյի խորհրդականը, հաջողեցրեց համոզել Ու թագավորության տիրակալ Սուն Ցյուանին միասին հանդես գալ Վեյ թագավորության դեմ, որի տիրակալն էր հզոր Ցաո Ցաոն: Կարմիր պատերի մոտ տարած հաղթանակը նախ և առաջ Ու թագավորության զորքի վաստակն էր, սակայն, այդ հաղթանակից քաղաքական և ռազմական մեծ օգուտ քաղեց հենց Լիու Պեյը: Կարմիր պատերի մոտ ճակատամարտը տեղի է ունեցել 208 թ., Ցանծը գետը այդ հատվածում հոսում է կիրճում՝ կարմիր ավազաքարե բարձր ափերի միջով, որոնք էլ անվանվել են Կարմիր պատեր:

⁸ Գուան Ցու (մ.թ. ?-220 թթ.)՝ Եռաթագավորության տարիների Շու թագավորության զորահրամանատար:

⁹ Ֆանչըն՝ ներկայիս Խուպեյ նահանգի Սիաննյան քաղաքի հին անվանումը:

¹⁰ Ծիան Ծի (188-249 թթ.)՝ Վեյ թագավորության նախարար, Ցաո Ցաո տիրակալի խորհրդական:

¹¹ Սըմա Ցի (179-251 թթ.)՝ Վեյ թագավորության հայտնի քաղաքական և ռազմական գործիչ, Արևմտյան Ծին դինաստիայի հիմնադիր:

ՀՆԱՐՔ 4

以逸待劳

[yǐ yì dài láo]

Հանգստության մեջ սպասել հոգնած թշնամուն

困敌之势，不以战；损刚益柔。

Միշտ չէ, որ թշնամուն ծանր վիճակի են հասցնում մարտի դաշտում. երբ ամուրի մոտ նվազում է, փափուկի մոտ ավելանում է:

【按语】此即致敌之法也。兵书云：“凡先处战地而待敌者逸，后处战地而趋战者劳。故善战者，致人而不致于人。”兵书论敌，此为论势，则其旨非择地以待敌；而在以简驭繁，以不变应变，以小变应大变，以不动应动以小动应大动，以枢应环也。如：管仲寓军令于内政，实而备之；孙臆于马陵道伏击庞涓；李牧守雁门，久而不战，而实备之，战而大破匈奴。

【Մեկնություն】 Այս հնարքը թշնամուն խոցելու միջոց է: «Ռազմարվեստի մասին»² տրակտատում ասվում է․ «Ով առաջինն է մարտի դաշտում տեղավորվում և սպասում հակառակորդի գալուն, նա հանգստության մեջ է: Ես, ով ուշ է հասնում և սրընթաց մտնում է մարտի մեջ, արշավից հոգնած է: Ուստի հմուտ ռազմիկը տանում է թշնամուն և ոչ թե զնում նրա հետևից»: Բայց տրակտատում խոսվում է մարտիկների մասին, իսկ այստեղ նկատի ունենք իրավիճակն ամբողջությամբ, այսինքն՝ հնարի նպատակը ոչ թե այն է, որ ճակատամարտի համար նախօրոք տեղ ընտրեն և սպասեն հակառակորդին, այլ այն, որ պարզ գործողություններով վերահսկեն բարդ իրավիճակը, փոփոխությունների բացակայությամբ հակազդեն փոփոխություններին, փոքր փոփոխություններով պատասխանեն մեծ փոփոխություններին, շարժման բացակայությամբ հակազդեն շարժումին, փոքր շարժումով հակազդեն մեծ շարժումներին, լինեն այն կարևոր մասնիկը, որը վերահսկում է իր շարժման և բազմակերպության մեջ անսահման մեխանիզմի ընթացքը (լինել դռան ծիւնի, որ դարպասներ է դեկավարում, լինել

սունի, որ անիվ է դեկավարում): Բնչպես, օրինակ՝ Գուան Ջոն, հրագործելով լայնածավալ պատերազմի նախապատրաստումը, միավորեց քաղաքացիական և ռազմական կառավարումը³, ինչպես Սուն Պինը Մալինստաո⁴ կիրճում ծուղակը գցեց Փանն Օյուանին, ինչպես Լի Մուն⁵ թաքնվեց Յանենում, երկար ժամանակ չէր կոչում, պատրաստվում էր, իսկ երբ դուրս եկավ գործի հետ, ջախջախեց հուննու⁶ ցեղին:

Պարզաբանումներ

Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց դեպքում հակառակորդն ինքն է իրեն ուժասպառ անում, իր ուժերն ու եռանդը վատնում է չափից դուրս ակտիվության վրա, որը դիմակայության մեջ առավելությունների չի հանգեցնում, շեղվում է հիմնական նպատակադրումից, կուտակում է ֆիզիկական հոգնություն և հոգեկան լարվածություն: «Չլինել առաջնորդվող, այլ հենց առաջնորդել»: Միաժամանակ հարկավոր է խնայել սեփական ուժերը, չշտապել անցնելու առճակատման, սպասել հարմար առիթի, ձգձգել պատասխան քայլերը, և, ի վերջո, ստիպել հակառակորդին հայտնվելու իր համար ի սկզբանե կորսված դիրքերում, ապա օգտվել նրա հոգնածությունից և ոչ ձեռնտու դրությունից, որի մեջ ինքը իրեն կգցի:

¹ Այստեղ խոսքը կրկին 41-րդ Սուն ䷁ Նվազում հեկսագրամի մասին է, որը հաստատում է «նվազման» և «ձեռքբերման» փոխազդեցությունը: Այս դեպքում ներքևի 兪 ䷆ Տուի՝ Լիճ տրիգրամը խորհրդանշում է «փափկություն», իսկ վերևի Գեն 艮 ䷳ Լեռ տրիգրամը՝ «ամրություն»: «Ամուրն» ու «փափուկը» երկու հակադիր էություններ են, որոնք որոշակի պայմաններում փոխվում են տեղերով: Փափուկ լիճը (ճահիճը) ողողում է լեռը, լեռը «նվազում է», լիճը (ճահիճը) «ձեռք է բերում»: Այս հնարքի նկարագրությունից, «Փոփոխությունների կանոնում» ներկայացված սկզբունքների հիման վրա, եզրակացվում է, որ ամուրը թշնամին է, իսկ փափուկը անձնավորում է խոսողին: Այսպիսով, «թշնամու ամրու-

թյան նվազումը ձեռնտու է իմ թուլությանը», կամ «Ուժեղը կորցնում է, թույլը՝ բազմացնում»:

² «Ռազմարվեստի մասին» տրակտատը, վերագրվում է հայտնի ռազմավար Սուն Օրին (Սուն Ու, մ.թ.ա. 544 ?–496 թթ.):

³ Գուան Ջոն (մ.թ.ա. 720–645 թթ.)՝ Գարնան և Աշնան ժամանակաշրջանի մտածող և քաղաքական գործիչ, Ցի պետության նախարար, ճանաչված հիմնադիր լեգիզմի՝ փիլիսոփայական-քաղաքական ուսմունքի, որը հակադրվում է դատկանությանը և կունֆուցիականությանը: Լեգիզմի հիմնադրույթը երկիրը օրենքի հիման վրա կառավարելու հայեցակարգն էր: Առաջին առաջարկեց այն գաղափարը, որ օրենքը գտնվում է ոչ թե «դեկավարի տակ», այլ «դեկավարի վերևում»: Ավանդաբար Գուան Ջոնին է վերագրվում «Գուան-ծը» 管子 տրակտատը, որի հիմքում նրա արտահայտած մտքերն են: Նրա բարեփոխումների շնորհիվ միավորվեց քաղաքացիական և ռազմական կառավարումը, միասնականացվեցին քաղաքների և գյուղերի անվանումները, զինվորական ծառայությունը հարմարեցվեց բնակչության քաղաքացիական դասերին, բանակի ստորաբաժանումները ձևավորվեցին հայրենակցական սկզբունքով, որը զինվորներին ավելի համախմբված էր դարձնում թշնամու առաջ և այլն:

⁴ Սուն Պին (մ.թ.ա. ?–316 թթ.) Ցի թագավորության ռազմական նախարար, հին աշխարհի հայտնի ռազմավար Սուն Ուի հետնորդը: Վեյ թագավորության գործը դեկավարող Փանն Օյուանին դիմադրելիս Սուն Պինը նրան խաբելով տարավ Մալինսի կիրճը (Շանտոն նահանգում՝ ներկայիս Լինյի քաղաքի տարածքում): Հետևողականորեն պակասեցնելով խարույկների քանակը, որ գիշերները իր զինվորներն էին վառում, Սուն Պինը հակառակորդի մոտ խաբուսիկ պատկերացում ձևավորեց իր գործի բարոյական վիճակի մասին, թե իբր զինվորները մեծ թվով լքում են գործը: Այս պատիր եզրակացության հիման վրա Վեյի գործը առաջ շարժվեց դեպի Մալինսի կիրճը, որտեղ նրան դարան էր սպասում: Ըստ ավանդության, որ գրի է առնված Սըմա Ցիենի «Պատմական նոթերում», Սուն Պինը հրամայում է մեծ ծառ կտրել, մաքրել կեղևը և վրան գրել: «Փանն Օյուանը մեռնելու է այս ծառի տակ»: Ապա նա հրահանգում է իր տասը հազար լավագույն նետաձիգներին դարանակալել ճանապարհի երկու

կողմերում: Նրանց հրաման էր տրված. «Երեկոյան, կրակ տեսնելով, բոլորով միանգամից նետահարել»: Փանն Շյուանը իրոք երեկոյան հասավ կտրված ծառի մոտ: Տեսնելով, որ դրա կեղևը մաքրված է, և վրան ինչ-որ բան կա գրված, ջահը վառեց, որ լուսավորի ծառը և կարդա գրվածը: Բայց չհասցրեց կարդալն ավարտել, երբ Ցի թագավորության զորքի տասը հազար նետաձիգները միանգամից նետահարեցին: Նետերի տարափի տակ Վեյի բանակում խառնաշփոթ և խուճապ սկսվեց, իսկ Փանն Շյուանը ինքնասպան եղավ՝ կտրելով իր կոկորդը: Ցիի զորքը, օգտվելով հաջողությունից, ամբողջությամբ ջախջախեց նրա բանակը: Այս հաղթանակից հետո Ցի թագավորությունը համարվեց ուժեղագույնը «մարտնչող թագավորությունների» մեջ:

⁵ Լի Մուն (մ.թ.ա. ?-229 թթ.)՝ Մարտնչող թագավորությունների շրջանում Ջաո թագավորության զորավար, իր՝ որպես զորավարի գործունեությունը սկսել է Ցամենի սահմանապահ ուղեկալից՝ պաշտպանելով թագավորության սահմանները հյուսիսային քոչվորների ասպատակումներից: Ավանդության համաձայն՝ Լի Մուն զինվորներին հրամայեց մարտի չբռնվել արշավող քոչվորների հետ, այլ հրամայեց տեղի բնակչության հետ միասին հավաքել իրերը և թաքնվել ամրություններում: Այդպես շարունակվում էր մի քանի տարի, սահմանապահ մարզերի բնակիչները ոչ մի կորուստ չունեցան, իսկ քոչվորներին չէր հաջողվում որևէ բան զավթել: Նրանք համոզված էին, որ Ջաոյի զորքը և նրա հրամանատարը մարտից փախչող վախկոտներ են: Իսկ Լի Մուն, նախապատրաստվելով և ամբողջությամբ սպառագիսելով զինվորներին, որոնք վառվում էին մարտի բռնվելու ցանկությամբ, արշավանքներից մեկի ժամանակ շրջապատեց քոչվորներին և հիմնովին ջախջախեց նրանց:

⁶ Քոչվոր ժողովուրդ, մ.թ.ա. III դ. մինչև մ.թ. II դ. բնակվում էր Չինաստանից հյուսիս գտնվող տափաստաններում: Չինական մեծ պատը կառուցվել է հենց նրանց արշավանքներից պաշտպանվելու համար: Մինչ այսօր վեճեր կան հուննու քոչվոր ցեղի էթնիկ պատկանելության վերաբերյալ: Մի տեսության համաձայն՝ հուննուները մոնղոլների նախնիներն էին, մի ուրիշի համաձայն՝ թյուրքական ցեղեր, ըստ մեկ այլ վարկածի՝ հուննուները խոսում էին նախամոնղոլական լեզվով, որից դեռ չէր անջատվել թյուր-

քական ճյուղը: Հուննուների իշխանությունը տարածվում էր Մոնղոլիայի զգալի մասում և Հարավային Սիբիրում: Մեր թվարկության սկզբներին՝ Խան դինաստիայի Ուստի կայսեր օրոք չինական զորքի ուժեղ ճնշման տակ հուննուները պառակտվեցին երկու մասի. արևելյան հուննուները ճանաչեցին Չինաստանի կայսեր գերիշխանությունը, իսկ արևմտյան հուննուները ստիպված եղան հեռանալ Միջին Ասիա և հետո՝ Արևմուտք ու 400 տարի հետո հայտնվեցին Եվրոպայում, որտեղ հայտնի դարձան որպես հոներ: Հոների՝ Կենտրոնական և Արևելյան Ասիայի հուննու ցեղից ծագելու վարկածը, որը հիշատակվում է չինական աղբյուրներում, այսօր ընդունում է գիտնականների մեծ մասը:

ՀՆԱՐՔ 5

趁火打劫

[chèn huǒ dǎ jié]

Թալան անել հրդեհի ժամանակ

敌之害大，就势取利，刚决柔也

Երբ թշնամին մեծ կորուստներ է կրել, առիթից օգտվիր
և օգուտ քաղիր: Ուժեղը ոչնչացնում է թույլին՝

【按语】敌害在内，则劫其地；敌害在外，则劫其民；内外交害，
败劫其国。如：越王乘吴国内蟹稻不遗种而谋攻之，后卒乘吴北会
诸侯于黄池之际，国内空虚，因而捣之，大获全胜。

[Մեկնություն] Երբ թշնամին պարտված է ներսում, նվաճիր նրա
հողը, երբ թշնամին պարտված է դրսում, նվաճիր նրա ժողովրդին,
երբ թշնամին պարտված է և ներսում, և դրսում, զավթիր նրա
պետությունը: Այսպես, օրինակ՝ վարվեց Յուե² թագավորության
տիրակալը՝ որոշելով հարձակվել Ու թագավորության վրա:
Օգտվելով այն հանգամանքից, որ Ուի բնակչության մեջ վատ
բերքատվության պատճառով սով է սկսվել, իսկ երկրի տիրակալը,
թիկունքը թողնելով անպաշտպան, ժողովրդին էլ՝ խռովության
մեջ, ընտրյալ զինվորների հետ ուղևորվել է հյուսիս՝ Խուաննչը³
հանդիպելու իր վասալներին, Յուե թագավորությունը հարձակվեց
Ուի վրա և մեծ հաղթանակ տարավ:

Պարզաբանումներ

Եթե հակառակորդը հայտնվել է աղետալի վիճակում, ներ-
քին կամ արտաքին դժվարություններ ունի, նրա բանակում քառս
ու անկարգություն է տիրում, նա «կրակի մեջ է» և ունակ չէ ար-
ժանի հակահարված տալու, ահա այդ ժամանակ անհրաժեշտ է
օգտվել նրա վիճակից և օգուտ քաղել: Թշնամին փորձանքի մեջ
է. սա առիթ է, որը հարկավոր է օգտագործել հոգուտ քեզ:

¹ Հղում է արվում Գուայ 夬 ☰ Ելք 43-րդ հեկսագրամին, որի
ներքևում Ցիեն 乾 ☰ Երկինք տրիգրամն է, իսկ վերևում՝ Տուի 兑
☱ Լիճ տրիգրամը: Դրանց համակցումը խորհրդանշում է փա-
փուկին ճշող ամուրը: Հեկսագրամի մեկնության մեջ ասվում է.
«夬，决也。刚决柔也»՝ «Գուայը՝ ճեղքումն է, ամուրը ճեղքում է
փափուկը»: Հեկսագրամը նկարագրում է դեպի վեր վճռակա-
նորեն շարժվելու, ամրության և անդդվելիության իրավիճակը,
խորհրդանշում է վեհանձն այրի հաղթանակը չնչին մարդկանց
հանդեպ: 5-րդ հնարքի նկարագրության մեջ «ամուրը-ուժեղը»
խորհրդանշում է խորամանկ ռազմավարին, «փափուկը-թույլը»՝
հակառակորդին:

² Յուե, երբեմն Պայ Յուե («յուեի 100 ցեղեր») կոչվող մեծա-
քանակ ցեղերի բնակության տարածքը եղել է բավական ընդ-
գրկուն և զբաղեցրել ժամանակակից Չինաստանի գրեթե ողջ
հարավարևելյան մասը: Պատմաբանների և ազգագրագետների
մեծ մասը կարծում է, որ նրանք ծագումով մոտ են եղել արևելյան
«ի» ցեղերին, իսկ լեզվով և մշակույթով կտրուկ տարբերվում էին
Չինական Մեծ Դաշտավայրի բնակիչներից: Արդի գրականու-
թյան մեջ հաճախ յուեների ցեղը կապում են ժամանակակից
վիետնամցիների նախնիների հետ:

³ Տեղանք ներկայիս Խընան նահանգի Ֆընցիու վարչաշր-
ջանի տարածքում, Խուաննչը գետից փոքր-ինչ հյուսիս:

ՀՆԱՐՔ 6

声东击西

[shēng dōng jī xī]

Աղմուկ բարձրացնել արևելքում,
հարձակվել արևմուտքում

敌志乱萃，不虞，坤下兑上之象，利其不自主而取之。

Երբ թշնամու ոգին շփոթված է և թուլացած, հարկավոր է նախաձեռնել անսպասելի հարձակում, և օգտվելով այն բանից, որ նա կորցրել է վերահսկողությունը՝ տիրել նրան: Նայիր նշանը, որում ներքևից «հողն» է, իսկ վերևից՝ «ջրավազան»:


【按语】西汉，七国反，周亚夫坚壁不战。吴兵奔壁之东南陬，亚夫便备西北：已而吴王精兵果攻西北，遂不得入。此敌志不乱，能自去也。汉末，朱雋围黄巾于宛，张围结垒，起土山以临城内，鸣鼓攻其西南，黄巾悉众赴之，雋自将精兵五千，掩其东北，遂乘虚而入。此敌志乱萃，不虞也。然则声东击西之策，须视敌志乱否为定。乱，则胜；不乱，将自取败亡，险策也。

[Մեկնություն] Արևմտյան Խանի² ժամանակաշրջանում՝ Յոթ իշխանական կայվածքների սպառնալուծության³ ժամանակ, Ջոու Յաֆուն⁴ թաքնվում էր իր ռազմական ճամբարում և խուսափում էր գլխավոր ճակատամարտից: Ուի զորքը նախ շարժվեց Յաֆուի բանակատեղի՝ հարավարևելյան ուղղությամբ հարձակվելու համար: Մինչդեռ Յաֆուն սկսեց պաշտպանությունն ամրացնել հյուսիս-արևմուտքում, և երբ Ուի խոռվարար զորքերը հարձակում նախաձեռնեցին հյուսիս-արևմտյան մասում, չկարողացան կոտրել կայսերական զինվորների պաշտպանությունը: Այս դեպքում հակառակորդը իրեն չկորցրեց. դա կարող էր հանգեցնել պարտության: Ուշ Խանի շրջանում Ջու Մյունը⁵ Վանչընում⁶ պաշարեց Դեդին գլխավորի⁷ սպառնալուծությունը, Ջանն⁸ էլ խրամատավորվեց քաղաքում և հողաթմբեր սարքեց՝ քաղաքի ներքին հատվածը հսկելու համար: Ջու Մյունը հրահանգեց զորքերը թմբկահարելով շարժել ամրության հարավարևմտյան կողմը: Դեդին

գլխավորի, տեսնելով սա, շտապեցին կենտրոնանալ հարավ-արևմուտքում: Այդ ժամանակ Ջու Մյունը, անձամբ գլխավորելով երկու հազար ընտրյալ զինվորներից կազմված ջոկատը և հանկարծակի հարվածելով հյուսիս-արևելքի ուղղությամբ, ներխուժեց անպաշտպան մասացած քաղաք և հայտնվեց թշնամու թիկունքում: Հակառակորդի զորքերը խառնաշփոթի ու խուճապի մեջ ընկան, քանի որ այդ ուղղությամբ հարձակման բողբոլիին չէին սպասում: Այսպիսով, այս հնարքի կիրառությունը պայմանավորված է նրանով, թե հակառակորդը գտնվում է արդյոք իրարանցման մեջ: Եթե նա շփոթված է, հաղթանակ կլինի, եթե ոչ, ապա ինքը կպարտվես, և հենց դրանում է հնարավոր փոխանգր:

Պարզաբանումներ

Հարքի էությունն այն է, որ նախապես մի ուղղությամբ գրոհի տպավորություն ստեղծելով՝ խաբես հակառակորդին և իրական հարված հասցնես մեկ այլ՝ նրան անսպասելի ուղղությամբ: Հակառակորդի համար խաբուսիկ պատկերացում ստեղծիր քո սեփական մտադրությունների, վերջնանպատակի մասին. դրանով իսկ կդրդես նրան կենտրոնանալու հարվածի ենթադրվող վայրում և այս կերպ մյուս ուղղություններն անպաշտպան ու խոցելի կդառնան: «Ձեռնարկիր ուշադրությունը շեղող գորաշարժ արևելքում»՝ հարկադրելով հակառակորդին հենց այնտեղ տեղափոխել հիմնական ուժերը, «ապա հարձակվիր արևմուտքում»:

¹ Նշան, որում ներքևից «հող» է, վերևից՝ «ջրավազան» 45-րդ հեկսագրամն է՝ Ցուի 萃  Վերամիավորում, որը պատկերում է երկրի խորքում առաջացած ջրավազան: «Փոփոխությունների կանոնում» հեկսագրամի մեկնության մեջ ասվում է. «乃乱乃萃, 其志乱也»՝ «Երբ անկարգություն է և թուլություն, ապա ոգին խառնաշփոթի մեջ է»: Հեկսագրամը այստեղ խորհրդանշում է ոգու անկումը և մոլորությունը, որի մեջ կարող է հայտնվել հակառակորդը՝ պայմանավորված ռազմավարի հակասական գործողություններով, և ռազմավարն էլ պետք է համապատասխանա-

բար օգտվի թշնամու իրարանցումից ու գործողություններ ձեռնարկի՝ հետամտելով օգուտ քաղել այնտեղ, որտեղ թշնամին այդ գործողությանը չէր սպասում:

² Խան կայսրության (մ.թ.ա. 206 – մ.թ.220 թթ.) սկզբնական շրջանը (մ.թ.ա. 206 – մ.թ. 9 թթ.)՝ Չաննան մայրաքաղաքով, կրում է Վաղ Խան կամ Արևմտյան Խան անվանումը: Երկրորդ շրջանը (25–220 թթ.)՝ Լուոյան մայրաքաղաքով, կոչվում է Ուշ Խան կամ Արևելյան Խան: Խան կայսրությունը հաջորդեց Ցին կայսրությանը և գոյատևեց մինչև Եռաթագավորության հաստատումը: Տես նաև հնարք 30, ծանոթ. 3:

³ Յոթ իշխանական կալվածքների ապստամբությունը (մ.թ.ա. 154 թ.) ուղղված էր Խան կայսրության կենտրոնական իշխանությունների դեմ:

⁴ Ջու Յաֆու (մ.թ.ա. 199–143 թթ.)՝ Արևմտյան Խանի ժամանակաշրջանում ռազմավար, կայսեր խորհրդական: Յոթ իշխանական կալվածքների ապստամբության ժամանակ կայսերական զորքերի հրամանատարն էր:

⁵ Ջու Մյուն (մ.թ. ? – 195 թթ.)՝ Արևելյան Խանի ժամանակաշրջանի զորավար:

⁶ Խընան նահանգում Նանյան քաղաքի հին անվանումը:

⁷ Դեղին գլխակապերի ապստամբություն (184–204 թթ.)՝ ժողովրդական ապստամբություն Չինաստանում Խան կայսրության մայրամուտին: Իր անվանումը ստացել է ապստամբների դեղին գույնի գլխակապերից: Դրա նախաձեռնողն էր Թայփինտաո (Մեծ խաղաղության՝ Բարեկեցության ուղին) աղանդը, որը կանխագուշակում էր Լաո Մըի՝ իբրև փրկիչ մեսիայի հայտնվելը, որը և կրերեր խաղաղություն ու բարեկեցություն: Ապստամբությունը, որին մասնակցում էր մոտ 2 մլն մարդ և տևեց 20 տարի, ի վերջո ճնշվեց, սակայն երկրում հանգեցրեց անկայունության և եղավ Խան դինաստիայի կործանման պատճառներից մեկը:

⁸ Ջանն Միաո (մ.թ. ? – 184 թթ.)՝ իր եղբայրներ Ջանն Պաոյի և Ջանն Լիանսի հետ Դեղին գլխակապերի ապստամբության առաջնորդը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

敌战计

ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՈՒԺԵՐԻ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՆԱՐՔՆԵՐ



无中生有

[wú zhōng shēng yǒu]

Ոչնչից ինչ-որ բան ստեղծել

诳也，非诳也，实其所诳也。少阴，太阴，太阳。

Սկզբում խաբիր, հետո մի խաբիր, և այդ կերպ կիրացնես քո խաբերությունը: Փոքր խաբերությունից հետո մեծ խաբերությունը կթաքնվի բացահայտվածի մեջ:

【接语】无而示有，诳也。诳不可久而易觉，故无不可以终无。无中生有，则由诳而真，由虚而实矣，无不可以败敌，生有则败敌矣，如：令狐潮围雍丘，张巡缚嵩为人千余，披黑夜，夜缒城下；潮兵争射之，得箭数十万。其后复夜缒人，潮兵笑，不设备，乃以死士五百砍潮营，焚垒幕，追奔十余里。

[Մեկնություն] Եթե ինչ-որ բան չկա, բայց ցույց տրվի, որ իբր կա, խաբերություն է: Մակայն խաբերությունը երկար չի տևի, այն կռահելը դյուրին է, գոյություն չունեցող բանի ցուցադրումը չպետք է անվերջ լինի: Հարկավոր է ոչնչից մի բան ստեղծել, այսինքն՝ խաբերությունը պետք է վերածվի իրականության, դատարկությունը պետք է բովանդակությամբ լցվի, գոյություն չունեցող ինչ-որ բանը չի տապալի թշնամուն, իսկ «ոչնչից» ստեղծված ինչ-որ բանով կարելի է տապալել թշնամուն: Օրինակ՝ երբ Լինն Խուչանը՝ պաշարեց Յունցիու² քաղաքը, Ջանն Սյունը³ հրամայեց խուչուրից հազարավոր կապեր սարքել, ծածկել դրանք սև թիկնոցներով և պարաններով իջեցնել պատերից: Լինն Խուչաոյի զինվորները, մտածելով, որ պաշարվածները հարձակվելու նպատակով են իջնում պատերից, սկսեցին նետահարել նրանց. այս կերպ պաշարվածները պաշտպանության համար հավաքեցին հազարավոր նետեր: Հաջորդ օրը, երբ նրանք պարաններով իջնում էին պատերով, որ իրոք հարձակվեին իրենց քաղաքը պաշարած թշնամու վրա, թշնամու զինվորները միայն ծիծաղում էին՝ մտածելով, որ պաշարվածները կրկին որպես քողարկված

զինվորներ խուշուրի կապեր են իջեցնում: Եվ հանկարծակիի եկան, երբ հինգ հարյուր մահապարտներ ներխուժեցին բանակատեղի, ջախջախեցին բանակը և սկսեցին ոչնչացնել թշնամու փախչող զորքին:

Պարզաբանումներ

Հակառակորդին հարված հասցնել՝ իմանալով, որ նա կբացահայտի քո խաբեական գործողությունները: Հակառակորդը խաբվել է, ընկել է ռազմավարի սարքած ծուղակը, որը, սակայն, չի կարող նրան էապես վնասել: Նա արագ ուշքի կգա, և հասկանալով, որ այն կեղծ, շինծու բան էր, կջանա այլևս չտրվել նման խաբեության: Ռազմավարը հաշվարկում է, որ հակառակորդը հետագայում այդ կերպ կգնահատի նման իրավիճակը, ուստի հաջորդ անգամ նախկին «սուտ» ծուղակը դարձնում է իրական. «դատարկը լցվում է բովանդակությամբ»: Մինչդեռ հակառակորդը շարունակում է այն ընկալել որպես զուտ հնարովի, սուտ, ինչն էլ այս անգամ գործում է իր դեմ:

¹ Թանն դինաստիայի ժամանակաշրջանի (618–907 թթ.) զորավար, միացել է Ան Լուչանի (703–757 թթ.) խոռվությանը:

² Յոնցիու քաղաքը գտնվում էր ներկայիս Խընան նահանգի Ցիսիեն գավառի տարածքում:

³ Ջանն Սյուն (708–757 թթ.)՝ Թանն դինաստիայի ժամանակաշրջանի բանաստեղծ, պետական գործիչ:

ՀՆԱՐՔ 8

暗度陈仓

[àn dù Chéncāng]

Գաղտնի դուրս գալ Չենցանն

示之以动，利其静而有主，“益动而巽”。

Սկզբում հարձակողական գործողություն դրսևորիր, հետո օգտվիր թշնամու հանգստությունից և իր առավելության զգացումից, որպեսզի հաղթես նրան¹:

【按语】奇出于正，无正不能出奇。不明修栈道，则不能暗渡陈仓。昔邓艾屯白水之北；姜维遥廖化屯白水之南，而结营焉。艾谓诸将曰：“维令卒还，吾军少，法当来渡，而不作桥，此维使化持我。令不得还。必自东袭取洮城矣。”艾即夜潜军，径到洮城。维果来渡。而艾先至，据城，得以不破。此则是姜维不善用暗渡陈仓之计；而邓艾察知其声东击西之谋也。

[Մեկնություն] Անսովորը կարող է լինել միայն սովորականի հենքի վրա, եթե չկա սովորականը, ապա չկա նաև անսովորը: Եթե ցուցադրաբար կամրջակներ չկառուցես գետն անցնելու համար, ապա չի հաջողվի գաղտնի դուրս գալ Չենցանն²: Անցյալում զորահրամանատար Տըն Այը³ բանակ դրեց Սպիտակ գետի⁴ հյուսիսային ափին: Ծիան Վեյը⁵ հրամայեց Լիաո Խուային⁶ բանակ դնել Սպիտակ գետի հարավային ափին: Տըն Այն սասց իր զորավարներին. «Ծիան Վեյը հրամայել է իր զինվորներին մեզ պաշարել, նա բանակական առավելություն ունի, թվում էր՝ թշնամին պետք է անցնի գետով, մինչդեռ նրանք անցնելու համար կամրջակներ չեն կառուցում: Կարծես թե Ծիան Վեյը միայն ուզում է մեզ այստեղ պահել, ինքն էլ հավանաբար շարժվում է արևելք, որ գրավի Թաոչընը⁷: Տըն Այը նույն գիշերը զորքն անցկացրեց Թաոչըն, ուր իրոք հասավ նաև Ծիան Վեյը իր զորքի հետ միասին: Սակայն Տըն Այը հասավ էլ ավելի շուտ և զբաղեցրեց պաշտպանական դիրքեր: Ահա այսպես անհաջող կիրառեց Ծիան Վեյը 8-րդ հնարքը՝ «գաղտնի դուրս գալ Չենցանն»:

Հակառակորդը ռազմավարից հարված է սպասում տրամաբանորեն առավել հարմար տեղում: Ռազմավարը ցուցադրաբար ընտրում է հենց այդպիսի վայր՝ իբրև թե այդտեղ ծրագրելով հիմնական հարվածը, սակայն գաղտնաբար հարձակվում է միանգամայն այլ վայրում կամ այլ ուղղությամբ: Այսպիսով, հնարքի էությունն այն է, որ հակառակորդի ակնկալած գործողության մեջ թաքնված է անսովոր, քողարկված զորաշարժ կամ գրոհ:

¹ Տվյալ հնարքին համապատասխանում է 42-րդ հեկսագրամը՝ Յի 益 ䷗ Բազմապատկում, որի Ջեն 震 ䷲ Որոտ տրիգրամը խորհրդանշում է արագ շարժում, իսկ Սյուն 巽 ䷸ Քամի տրիգրամը՝ մեղմ, անշտապ շարժում: Առաջինը համապատասխանում է քո սեփական գործողություններին, երկրորդը՝ հակառակորդի գործողություններին: Միասին նշանակում են, որ որոտն ու քամին գործում են միասնաբար, և ազդեցությունը բազմապատկվում է: «Փոփոխությունների կանոնում» այդ հեկսագրամի մեկնությունն ասում է. «益动而巽, 日进无疆。天施地生, 其益无方»՝ «Շարժումն ու քամին. մեծ ուրախություն է գալու, երկինքը տալիս է, իսկ հողը՝ ծնում. օգուտն անսահման է»:

² Մ.թ.ա. II դ. Միանն Յու (մ.թ.ա. 232-202 թթ.) և Լիու Պանն (մ.թ.ա. 256 կամ 247-195 թթ.) զորավարները պայքարում էին իրար դեմ Ընդերկնայինին (հնում չինացիները այսպես էին անվանում Չինաստանը) տիրանալու համար: Մի անգամ Լիու Պաննը հրահանգեց իր զինակից Խան Մինին հարձակվել Միանն Յուի զորքի վրա, որը ամրացել էր Չենցանն փոքրիկ քաղաքում (ներկայիս Շաանսի նահանգի Պաոժի քաղաքը): Խան Մինը նախ իր զինվորներին ուղարկեց նորոգելու ճանապարհին կառուցված փոքրիկ կամուրջները: Այս մասին իմանալով՝ Ջանն Խանը՝ Միանն Յուի զորքերի հրամանատարը, քրքջաց և ասաց, որ Խան Մինի մարդիկ այս կամուրջները դեռ կնորոգեն տարիներով: Իսկ այդ ընթացքում Խան Մինը իր գլխավոր ուժերը թաքուն տարավ այլ ճանապարհով և անսպասելի հարձակվեց Չենցաննի վրա, հանկարծակիի եկած Ջանն Խանը ինքնասպան եղավ: Այստեղից էլ 8-րդ հնարքի անվան ծագումը:

³ Տըն Այ (մոտ 197-264 թթ.)՝ Ու թագավորության զորահրամանատար:

⁴ Ներկայումս Պայլոնժիանն գետը Գանսու նահանգում:

⁵ Միանն Վեյ (202-264 թթ.)՝ Շու թագավորության զորահրամանատար:

⁶ Լիաո Խուա (?-264 թթ.)՝ Շու թագավորության զորահրամանատար:

⁷ Թաոչըն քաղաքը գտնվում էր ներկայիս Գանսու նահանգի Լինթան գավառի տարածքում:

隔岸观火

[gé àn guān huǒ]

Հետևել հրդեհին դիմացի ափից

阳乖序乱，阴以待逆。暴戾恣睢，其势自毙。顺以动豫，豫顺以动。

Հակառակորդը ակնհայտ գծտության ու իրարանցման մեջ է, իշխանության ներսում՝ խռովության սպասում: Անողորմ բռնապետությունը, անօրինությունը և անիշխանությունը ինքնակործանման նշաններ են: Եկավ վճռական, սահուն և անշտապ գործողությունների նպաստավոր պահը¹:

【按语】乖气浮张，逼则受击，退则远之，则乱自起。昔袁尚、袁熙奔辽东，众尚有数千骑。初，辽东太守公孙康，恃远不服。及曹操破乌丸，或说曹遂征之，尚兄弟可擒也。操曰：“吾方便斩送尚、熙首来，不烦兵矣。”九月，操引兵自柳城还，康即斩尚、熙，传其首。诸将问其故，操曰：“彼素畏尚等，吾急之，则并力；缓之，则相图，其势然也。”或曰：此兵书火攻之道也，按兵书《火攻篇》前段言火攻之法，后段言慎动之理，与隔岸观火之意，亦相吻合。

[Մեկնություն] Թշնամու ճամբարին նոր-նոր մտնելում է երկպառակության և խռովության ոգին: Շտապեցնել այն, նշանակում է հակահարված ստանալ, իսկ մի կողմ քաշվելու և սպասելու դեպքում հնարավոր կլինի տեսնել՝ ինչպես է քառուր ինքնին և ամբողջովին տիրում: Յուան Շանն և Յուան Մի² եղբայրները հազար հեծյալների հետ Ցաո Ցաոյից³ փախսան Լիաոտոն⁴, որտեղ իշխում էր կուսակալ Գոն Սունքանը⁵, ով մինչ այդ, օգտվելով իր գավառի հեռու գտնվելուց, չէր ենթարկվել զորավար Ցաոյին: Ցաոյի խորհրդականները Ուվանը⁶ գրավելուց հետո իրար հերթ չտալով խորհուրդ տվեցին շարժվել Լիաոտոն, գրավել քաղաքը և բռնել Յուան եղբայրներին: Ցաոն այսպես պատասխանեց. «Ես կստանամ Յուան եղբայրների գլուխները՝ առանց զոր-

քով դուրս գալու»: Սեպտեմբերին՝ Լիուչընից⁷ զորավար Ցաոյի վերադարձից հետո, Սունքանը մահապատժի ենթարկեց եղբայրներին և նրանց գլուխներն ուղարկեց զորավար Ցաոյին: Ջորավարի խորհրդականները տարակուսած հարցնում էին, թե Ցաո Ցաոն որտեղից գիտեր այդ մասին: Ցաոն այսպես պատասխանեց. «Սունքանը միշտ վախենում էր Յուան եղբայրներից: Եթե ես շարունակեի հետապնդումը և դուրս գայի Լիաոտոնի դեմ, Սունքանը հակահարված տալու համար կմիավորվեր եղբայրների հետ: Իսկ ես զորքը շարժեցի հակառակ ուղղությամբ, այդ ժամանակ Սունքանը որոշեց օգուտ քաղել իրավիճակից և ազատվեց հին օրերի թշնամիներից»: Ասում են, որ այս հնարքի գաղափարը գալիս է Սուն Ծրի «Ռազմարվեստի մասին» տրակտատից: Հարձակման մասին գաղափարները, որոնք նկարագրվում են «Հարձակման մասին» գլխի առաջին մասում և «Զգույշ գործողությունների մասին» գաղափարները՝ նույն գլխի երկրորդ մասում, համապատասխանում են «Հետևել հրդեհին դիմացի ափից» հնարքին:

Պարզաբանումներ

Երբ թշնամին գծտությունների և խառնաշփոթի մեջ է, ռազմավարը չպետք է դիմի հապճեպ գործողությունների: Վաղաժամ հարձակումը կնպաստի, որ հակառակորդի շարքերը համախմբվեն արտաքին ճնշման դեմ և ամրապնդվի նրա մարտական ոգին: Այդպիսի հակառակորդից ռազմավարը իր համար անվտանգ տարածություն է պահում, «հետևում է հրդեհին հակառակ ափից», չի խառնվում այնքան ժամանակ, մինչև հակառակորդը հայտնվի լիովին քայքայված վիճակում, մինչև կգա «բարենպաստ պահը վճռական, սահուն և անշտապ գործողություններով» իր շահերն ապահովելու համար:

¹ Այս արտահայտությունը բերվում է «Փոփոխությունների կանոնում»՝ 16-րդ հեկսագրամի՝ Յու 豫 ䷏ Ազատություն նկարագրության մեջ: Հեկսագրամը կազմված է ներքևից Բուն 坤 ䷁

Հող տրիգրամից, վերևից՝ Ջեն 震 三 Որոտ տրիգրամից: Որոտը ծնվում է հողից և գնում է վեր, ինչը խորհրդանշում է լավ ժամանակների, ուրախության և զվարճանքի գալը, դա նպաստավոր պահ է իշխանների գահ բարձրանալու և բանակի հանդես գալու համար: Հեկսագրամի մեկնության մեջ ասվում է. «豫, 刚应而志行, 顺以动, 豫。豫顺以动, 故天地如之, 而况建侯行师乎»՝ «Յու. երբ ուժեղը ստիպում է թույլին պատասխանել ճշմանը և այդ կերպ իրացնում է իր մտադրությունները, իրավիճակը բարենպաստ է գործողություններ իրականացնելու համար: Բարենպաստ վիճակի բնական հատկությունները թույլ են տալիս գործել, քանի որ և՛ հողը, և՛ երկինքը նպաստում են դրան, էլ չասած իշխանների գահ բարձրանալն ու արշավանքեր կատարելը»:

² Յուան Շանն և Յուան Սի եղբայրներ (?-207 թ.)՝ Ուշ Խանի ժամանակաշրջանում զորահրամանատար Յուան Շաոյի (?-202 թթ.) որդիները:

³ Ցաո Ցաո (155 թ.-220 թ. մարտի 15)՝ հայտնի զորավար, Ուշ Խանի փաստացի տիրակալ, Վեյ թագավորության հիմնադիր, ռազմարվեստին նվիրված աշխատությունների հեղինակ, բանաստեղծ: Չինաստանի պատմության ամենահայտնի և ճանաչված կերպարներից է: «Եռաթագավորություն» միջնադարյան վեպում և ժողովրդի հիշողության մեջ հանդես է գալիս որպես խորամանկ և նենգ չարագործ:

⁴ Հնում Չինաստանի արևելյան մասի անվանումն էր, հետագայում Լիաոտոն անվանվող տարածքները սահմանափակվում էին Լիաո գետից արևելք ընկած շրջանով, համապատասխանում է ներկայիս Լիաոնինն նահանգի արևելյան և հարավային ու Ծիլին նահանգի հարավ-արևելյան մասերին:

⁵ Լիաոտոնի կուսակալ Ուշ Խանի ժամանակաշրջանում:

⁶ Քոչվոր ժողովուրդ, բնակվում էր ժամանակակից Չինաստանի հյուսիս-արևելքում, ցեղային միություն էր կազմում տունգուսների հետ: Համաձայն տարբեր լեզվագագրական հետազոտությունների՝ հին ուվանների լեզվի արմատները առնչություններ ունեն մոնղոլական, տունգուսական կամ թյուրքական լեզուների հետ:

⁷ Գտնվում էր ներկայիս Լիաոնինն նահանգի Չաոյան գավառի տարածքում:

笑里藏刀

[xiào li cáng dāo]

Ժպիտի հետևում դանակ թաքցնել

信而安之, 阴以图之, 备而后动, 勿使有变。刚中柔外也。

Շողոքորթությանը վստահություն չափել և հանգստություն ներշնչել թշնամուն, իսկ գաղտնաբար հարձակում պատրաստել: Պատրաստ լինելով՝ գործել, թույլ չտալով թշնամուն ուշքի գալ: Ներքուստ կոշտ լինել, արտաքուստ՝ մեղմ:

【按语】兵书云：“辞卑而益备者，进也；……无约而请和者，谋也。”故凡敌人之巧言令色，皆杀机之外露也。宋曹玮知渭州，号令明肃，西夏人惮之。一日玮方对客弈棋，会有叛夸数千，亡奔夏境。堆骑（骑马的侦宿员）报至，诸将相顾失色，公言笑如平时。徐谓骑曰。“吾命也，汝勿显言。”西夏人闻之，以为袭己，尽杀之。此临机应变之用也。若勾践之事夫差，则意使其久而安之矣。

[Մեկնություն] Սուն Ծլի տրակտատի մեջ այսպես է գրված. «Եթե հակառակորդը իրեն երկչու և հնազանդ է պահում, իսկ ռազմական պատրաստությունները ուժեղացնում է, ուրեմն մտադիր է հարձակվելու... Եթե հակառակորդը առանց առերևույթ պատճառների խաղաղություն է խնդրում, նշանակում է ինչ-որ հետին միտք ունի»: Դրա համար միշտ, երբ հակառակորդը հաճոյացող խոսքեր է ասում և քաղաքավարի վարքագիծ դրսևորում, ուրեմն թաքուն մտադրություններ ունի: Սուն ժամանակաշրջանում Ցաո-վեյը՝ Վեյցոուի՝ կուսակալն էր, նրա կառավարումը առանձնանում էր դաժանությանը և անգթությանը, Արևմտյան Միան՝ սարսափում էր նրանից: Մի օր, երբ Ցաո-վեյը հյուրերի հետ շախմատ էր խաղում, մի քանի հազար զինվոր լքեց բանակը և սլացավ Միայի սահմանը: Երբ սուրհանդակը զինվորների փախուստի լուրը բերեց, նախարարներն ու խորհրդականներն իրար նայեցին և վախից գունատվեցին, իսկ տիրակալը միայն ժպտաց և իրեն պահեց առաջվա պես: Սուրհանդակին այսպես ասաց. «Նրանք

գործել են իմ հրամանով, պետք չէ դու բոլորին այդ մասին պատմես»: Երբ Միայում իմացան այդ մասին, որոշեցին, որ դասալիք զինվորները պատրաստվում են հարձակվել, ու կոտորեցին բոլորին: Սա օրինակ է, թե ինչպես կարելի է ճկուն լինել՝ պայմանավորված ստեղծված իրավիճակով: Նմանապես, օրինակ՝ Գոու Ծիենը⁵ երկար տարիների ընթացքում հնազանդ ծառայեց Ֆու Չային⁶ և հաջողությամբ թուլացրեց նրա զգոնությունը⁷:

Պարզաբանումներ

«Հաճոյանալով վստահությունն ձեռք բեր և հանգստությունն ներշնչիր հակառակորդիդ», ժպտա՛ նրան, ընծաներ մատուցիր, շողորթոթիր նրան, հաճոյախոսիր, ցոյց տուր ընկերասիրությունդ, զիջողականությունդ և թուլությունդ, իսկ երբ գա բարեպատեհ պահը, երբ նրա զգոնությունը թմրած կլինի, հանկարծակի հարվածիր նրա համար ամենաանսպասելի տեղին, այնպես, որ այլևս չկարողանա ոտքի կանգնել: Ռազմավարը կարող է այս հնարքն օգտագործել, երբ իր և հակառակորդի ուժերը հավասարագոր են, կամ երբ ուղղակի սպառնալիքներով ու բուռն գրոհներով քիչ բանի կհասնի:

¹ Այս արտահայտությունը համապատասխանում է «Փոփոխությունների կանոնում» 29-րդ հեկսագրամի՝ Մի Քան 习坎 ䷜ Կրկնակի Ջուր մեկնությանը: Մի Քան հեկսագրամը կազմված է Քան 坎 ䷜ Ջուր երկու տրիգրամներից: Երկու Ջուր տրիգրամները լուրջ վտանգ են խորհրդանշում. Ջրի վրա կրկին Ջուր՝ կրկնակի վտանգ կամ կրկնակի հնարավոր վտանգ է: «Փոփոխությունների կանոնում» հեկսագրամի մեկնության մեջ ասվում է. «习坎», 重险也。水流而不盈。行险而不失其信。维心亨，乃以刚中也.» «Մի Քան՝ լուրջ վտանգ է, ջուրը հոսում է, բայց չի լցնում: Ռիսկի դիմել, բայց ինքնավստահությունը չկորցնել: Միայն ինքնավստահություն ունենալով է հնարավոր ներքուստ ամուր լինել»:

² Յաոլեյ (973–1030 թթ.)՝ Հյուսիսային Սոնի ժամանակաշրջանում հայտնի զորավար:

³ Վեյչոու՝ Գանսու նահանգի ներկայիս Փիննլիանն քաղաքի հին անվանումը:

⁴ Արևմտյան Միա կամ Մեծ Միա, Տանգու թագավորություն (պաշտոնական անվանումը՝ Սպիտակի և Բարձրի Մեծ պետություն), տանգու թերի պետություն, որը գոյություն է ունեցել 1038–1227 թթ. չինական Սոն կայսրության հյուսիս-արևմուտքում՝ Չինաստանի ներկայիս Շանսի և Գանսու նահանգների տարածքում: Վերահսկում էր Մետաքսի մեծ ճանապարհի արևելյան հատվածը:

⁵ Գոու Ծիեն (մ.թ.ա. 496–465 թթ.)՝ Յուե թագավորության տիրակալ:

⁶ Ֆու Չայ՝ Ու թագավորության տիրակալ, մ.թ.ա. 495–473 թթ.:

⁷ Յուե թագավորության տիրակալ Գոու Ծիենը գլխովին ջախջախվեց հարևան Ու թագավորության Ֆու Չայ տիրակալի կողմից, և տարիներ անց կարողացավ վրեժ լուծել: Սկզբում՝ ջախջախումից հետո, Գոու Ծիենը մտածեց մնացյալ զորքի հետ փախչել, սակայն նրա խորհրդականը համոզեց նրան հանձնվել Ֆու Չային և բացարձակ հնազանդություն ձևացնելով սպասել հարմար պահի՝ պարտության համար վրեժ լուծելու: Ֆու Չայը, հաղթանակով արքած, համաձայնեց իր մոտ ընդունել Գոու Ծիենին իր հարազատներով և պարտված արքային նշանակեց իր ախոռապետ: Գոու Ծիենն անձամբ էր ձին մոտեցնում Ֆու Չային և ամեն անգամ շնորհակալություն հայտնում իրեն ցուցաբերված ողորմածության համար: Ժամանակի ընթացքում Ֆու Չայը որոշեց, թե Գոու Ծիենը իրականում իր հավատարիմ ծառան է դարձել: Նա թույլ տվեց Գոու Ծիենին հայրենիք վերադառնալ, որտեղ Գոու Ծիենը քնում էր ծղոտի ու խսիրի վրա և ամեն օր ճաշին մի կտոր լեղապարկ ուտում, որպեսզի չմոռանա իր վրիժառության մտադրության մասին: Միաժամանակ նա թաքուն արշավանքի էր պատրաստում և մի անգամ հանկարծակի ներխուժեց Ու թագավորություն՝ հիմնովին ջախջախելով Ֆու Չայի զորքը:

李代桃僵

[lǐ dài táo jiāng]

Սալորը չորանում է դեղձի փոխարեն¹

勢必有损，损阴以益阳

Եթե իրավիճակը անխուսափելի կորուստ է ենթադրում,
հարկավոր է զոհաբերել թույլ կողմը ուժեղ կողմն
ամրապնդելու համար:

【按语】我敌之情，各有长短。战争之事，难得全胜，而胜负之诀，即在长短之相较，乃有以短胜长之秘诀。如以下驷敌上驷，以上驷敌中驷，以中驷敌下驷之类：则诚兵家独具之诡谋，非常理之可测也。

[Մեկնություն] Հակամարտության մեջ կողմերից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, թույլ և ուժեղ կողմերը: Պատերազմում հազվադեպ է պատահում ամբողջական հաղթանակ: Հաղթանակը կամ պարտությունը պայմանավորված է սեփական առավելություններն ու թերությունները հակառակորդի նույն այդ հատկանիշների դեմ կիրառելով: Բացի այդ, հակառակորդի առավելությունները հաղթահարելու համար գոյություն ունեն սեփական թերությունները օգտագործելու հնարքներ: Օրինակ՝ ձիերի թույլ քառյակը դուրս բերել հակառակորդի ձիերի լավ քառյակի դեմ, լավ քառյակը՝ միջակի դեմ, իսկ միջակը՝ հակառակորդի վատագույն քառյակի դեմ: Այսպիսով, իսկական մարտիկի խորամանկ մտադրությունը սովորական մտածելակերպով չի կռահվի:

Պարզաբանումներ

Ռազմավարը գիտակցում է, որ ուժով հավասար հակառակորդին հաղթելու համար չի խուսափի կորուստներից: Սակայն կորուստը պետք է լինի աննշան կամ նվազ կարևոր հնարավոր ձեռքբերման համեմատությամբ և կամ այն բանի համեմատու-

թյամբ, ինչը կհաջողվի պահպանել: Հարկավոր է չեզոքացնել հակառակորդի առավելությունը՝ կաշկանդելով, թուլացնելով նրա հիմնական ուժերը՝ քո ոչ հիմնական ուժերի դեմ պայքարելու միջոցով՝ միաժամանակ պահպանելով սեփական առավել հզոր ուժերը:

¹ Ի սկզբանե «Սալորը չորանում է դեղձի փոխարեն» արտահայտությունը «եղբայրական սիրո և ինքնազոհողության» փոխաբերություն էր համարվում և սկիզբ է առնում հին ժողովրդական երգից.

桃在露井上
李树在桃旁
虫来啣桃根
李树代桃僵
树木身相代
兄弟还相忘

Դեղձենին է աճում ջրհորի մոտ,
Սալորենին է աճում նրա կողքին,
Ահա եկան մրջյունները և կրծում են արմատները դեղձենու,
Բայց սալորենին զոհում է իրեն հանուն դեղձենու:
Եթե անզամ ծառերն են իրենց զոհում հանուն ընկերոջ,
Ապա կարո՞ղ է արդյոք եղբայրը մոռանալ հարազատ եղբորը:
Գիտությունը այդ երևույթին տալիս է պարզ բացատրություն:
Դեղձենու արմատները հաստ են և ողորկ, հողի խորքերն են հասնում, իսկ սալորենու արմատները ավելի բարակ են, երկար և ծակոտկեն, քան դեղձենունը: Երբ դեղձենին և սալորենին աճում են իրարից ոչ հեռու, դրանց արմատները խոնավություն ստանալու համար կարծես պայքարի մեջ են գտնվում, և սալորենու արմատները, ավելի բարակ ու երկար լինելով, հյուսվում են դեղձենու արմատների շուրջ: Երաշտի ժամանակ սալորենու արմատները իրենց ծակոտկենությամբ առավել գրավիչ միջավայր են դառնում մրջյունների և այլ միջատների համար, որն էլ հասցնում է ծառի չորանալուն: Չինացիները նկատել էին, որ միջատները մեծ քանակությամբ ապրում են դեղձենու ծառի տակ, բայց, այդուհանդերձ, չորանում է հարևան սալորենին: Այստեղից էլ ծագել է

顺手牵羊

[shùn shǒu qiān yang]

Ձեռքի տակ ընկած ոչխարը տանել¹

微隙在所必乘；微利在所必得。少阴，少阳。

Նվազագույն թուլությունից հարկավոր է անսպասան օգտվել, նվազագույն օգուտը չսպետք է բաց թողնել: Հակառակորդներից մեկի չնչին կորուստը փոքրիկ ձեռքբերում է մյուսի համար:

【接语】大军动处，其隙甚多，乘间取利，不必以胜。胜固可用，败亦可用。

[Մեկնություն] Երբ ողջ զորքը շարժման մեջ է, առաջանում են աննշան, բայց բազում խոցելի տեղեր. անհրաժեշտ է դրանցից օգտվել, եթե անգամ դրանք մոտալուտ հաղթանակ չեն խոստանում: Այս հնարքը օգտակար է և հաղթողի, և պարտություն կրողի համար:

Պարզաբանումներ

Հակառակորդի անգամ չնչին սխալը, բացթողումը, թերություններն ու թույլ կողմերը ռազմավարի համար հնարավոր ձեռքբերումներ են, հետևաբար հակառակորդին խոցելու և թուլացնելու համար չի կարելի բաց թողնել անգամ ամենափոքր հնարավորությունը, չի կարելի թերագնահատել անգամ նշմարելի, աննշան ձեռքբերումը: Հակառակորդի ցանկացած թերություն պետք է գործածվի նրա դեմ՝ հոգուտ քո սեփական շահի. նույնիսկ եթե այդպիսի ձեռքբերումները չեն տանում դեպի հաղթանակը, նույնիսկ եթե ռազմավարը պարտության եզրին է, միևնույնն է, «հակառակորդի չնչին կորուստը փոքրիկ ձեռքբերում է նրա համար»:

¹ Ներկայումս այս արտահայտությունը կարող է բացասական նրբերանգ ունենալ՝ ուրիշի տնից ձեռքի տակ ընկած արժեքավոր իրեր գողանալ:

այլաբանությունը՝ հանուն դեղձենու իրեն զոհող սալորենու մասին: Հետագայում այս արտահայտությունը ձեռք է բերել այլ ընդհանրացում՝ «հանուն ընդհանուր, մեծ բարօրության, զոհաբերել որևէ փոքր, թույլ մի բան»:

² Խոսքը Ցի թագավորության հայտնի զորավար Սուն Պինի (մ.թ.ա. ?-316 թթ.) սխրանքների պատմությունից մի դրվագի մասին է՝ Սիմա Ցիենի «Պատմական նոթերից»: «Թիեն Ծին (Ցի թագավորության զորավարը) իր ձիերին ոչ մեկ անգամ էր հանել ձիարշավի Ցի թագավորական տոհմի իշխանագունների նժույգների դեմ: Սուն Պինը նկատեց, որ զորավարի ձիերը շատ տարբեր էին իրենց որակներով, նրանց մեջ կային լավերը, միջակները և թույլերը: Այդ ժամանակ Սուն Պինն ասաց Թիեն Ծիին. «Երբ Դուք մասնակցեք ձիարշավներին, ես Ձեզ համար հաղթանակ կապահովեմ»: Թիեն Ծին վստահեց նրան: Եկավ իշխանագունների ձիերի հետ մրցության ժամանակը, պարզևր՝ հազար ցիական ոսկի: Մրցավազքից առաջ Սուն Պինն ասաց. «Սկզբում նրանց լավ ձիերի դեմ հանեք ձեր թույլ ձիերին, հաղթեք ձեր լավ ձիերով նրանց միջակ ձիերին, իսկ ձեր միջակ ձիերով՝ նրանց վատագույն ձիերին»: Երեք մրցավազքի արդյունքում Թիեն Ծին մեկը պարտվեց, իսկ երկուսը հաղթեց և ի վերջո ստացավ հազար ցիական ոսկի: Այս դեպքում «սալորը չորանում է դեղձի փոխարեն» հնարքը նշանակում է «զոհաբերել» թույլ կողմը՝ վատագույն ձիերը, քանի որ նրանք անխուսափելիորեն պարտվելու էին իշխանագունների ձիերին, բայց մյուս երկու մրցավազքում հաղթանակ ապահովել: Հակառակ դեպքում Թիեն Ծին, հիմնականում ունենալով ավելի վատ ձիեր, քան հակառակորդները, կպարտվեր բոլոր երեք մրցավազքերում:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

攻战计

ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀՆԱՐՔՆԵՐ



打草惊蛇

[dǎ cǎo jīng shé]

Օձին վախեցնելու համար խելեղ խոտին՝

疑以叩实，察而后动；复者，阴之媒也。

Կասկածները փարատում են պարզելով ճշմարտությունը, ստուգիր, հետո գործիր․ արա հաճախակի կրկնությունը հուսալի միջոց է թողարկվածը բացահայտելու համար:

【按语】敌力不露，阴谋深沉，未可轻进，应遍探其锋。兵书云：“军旁有险阻、潢井、蒺藜、山林、翳荟者，必谨复索之，此伏奸所藏也。”

[Մեկնություն] Թշնամին իրեն չի ցուցադրում, թշնամու մտադրությունը խորն է թաքնված, պետք չէ անհոգ առաջ գնալ, հարկավոր է պարզել իրավիճակը և հայտնաբերել նրա սրերը: «Ռազմարվեստի մասին» տրակտատում այսպես է գրված. «Եթե զորքի գտնվելու վայրում խոչընդոտներ՝ ձորակներ, ճահիճներ, բլուրներ և անտառներ, թփուտներ ու թավուտներ հանդիպեն, անպայման ուշադիր հետախուզիր: Սրանք վայրեր են, որտեղ լինում են հակառակորդի դարանները»:

Պարզաբանումներ

Եթե ռազմավարը կասկածում է, որ հակառակորդը գաղտնի մտադրություններ ունի, պետք չէ առաջ նետվել՝ անտեսելով բոլոր արգելքները, պետք չէ «հապճեպ առաջ շարժվել»: Նախ՝ անհրաժեշտ է փորձել՝ իմանալու նրա իրական ծրագրերը, ապա գործել համապատասխանաբար: Սակայն, որպեսզի դրանք իմանաս, որպեսզի հրահրես հակառակորդին ինչ-որ գործողությունների, պատասխան արձագանքի, բացահայտես նրա գտնվելու վայրը, կարելի է սադրանքի դիմել. կազմակերպել կեղծ հարձա-

կում, ձևացնել, թե իբր «առաջ ես նետվում՝ անտեսելով բոլոր արգելքները», «հապճեպ առաջ ես շարժվում»:

¹ Ներկայումս այս պատկերավոր արտահայտությունը ձեռք է բերել լրացուցիչ նշանակություն՝ «ոչ մտածված, ոչ զգույշ ինչ-որ բան անել և դրանով վախեցնել, զգաստացնել, անհարկի ուշադրություն գրավել»:

ՀՆԱՐՔ 14

借尸还魂

[jiè shī huán hún]

Հոգին մեռած մարմնում բնակեցնել¹

有用者不可借，不能用者，求借；借不能用者而用之。匪我求童，童蒙求我。

Եթե չի կարելի օգտվել օգտակարից, ապա պետք է փորձել օգտվել ոչ օգտակարից: Վերցնել ինչ-որ ոչ օգտակար բան և դարձնել այն օգտակար: Որպեսզի ոչ թե գաղափարը գնա թույլ, տկար մարդկաց հետևից, այլ թույլ, տկար մարդիկ գնան գաղափարի հետևից²:

【按语】换代之际，纷立亡国之后者，固借尸还魂之意也。凡切寄兵于人，而代其攻守者，皆此用也。

[Մեկնություն] Դինաստիաների փոփոխության ժամանակ մեկը մյուսի հետևից երևան են գալիս թագավորական տան ընդհատված ճյուղերի շառավիղները: Սա հենց «հոգու բնակեցումն է մեռած մարմիններում»: Բոլոր նրանք, ովքեր պատերազմներ են մղում և տիրում իշխանությանը այլոց անունից, վարվում են այս հնարքի համաձայն³:

Պարզաբանումներ

Ամեն նոր բան չէ, որ եթե ձեռքի տակ է ու կիրառելի, ապա օգտակար է, և ամեն հին բան չէ, որ եթե անարգված է, մերժված, մոռացված, ապա անօգտակար է: Եթե գաղափարների, ուսուցանողականությունների, պատկերների, ծրագրերի, տեխնոլոգիաների և մեթոդների գոյություն ունեցող զինանոցում չկա այն մեկը, որը կիրառելի կլինի և օգուտ կբերի, ապա փնտրիչ այն անցյալի, մոռացվածի, մերժվածի մեջ: Վերակենդանացրո՛ւ, վերածննի՛ր հին ու մոռացված պատկերները, գաղափարներն ու մեթոդները, հին արժեքները, ավանդույթները, նոր նշանակություն տուր դրանց, ծառայեցրո՛ւ ներկայիս կարիքներիդ, խնդիրներիդ ու նպատակներիդ:

¹ Ըստ չինացիների հնագույն պատկերացումների՝ մեռյալի հոգին կարող է բնակվել մի ուրիշ մեռյալ մարմնում և վերակենդանացնել այն:

² 匪我求童蒙，童蒙求我 ասույթը բառացիորեն նշանակում է. «Ոչ թե ես եմ փնտրում երիտասարդներին, այլ երիտասարդներն են փնտրում ինձ», և բերվում է «Փոփոխությունների կանոնում»՝ 4-րդ հեկսագրամի՝ Մըն 蒙 ䷃ Չիմացություն նկարագրության մեջ: Այն բաղկացած է երկու տրիգրամներից. ներքևից Քան 坎 ䷜ Ջուր, որը նշանակում է վտանգ, ռիսկ, և վերևից՝ Գեն 艮 ䷳ Լեռ, որը նշանակում է բարձրագույն ամրություն, տիրակալ: Ըստ հեկսագրամի լեռան՝ տիրակալի տակ ջուր է՝ վտանգ, շարժվել շարունակելը անմտություն է: Նախաձեռնությունը կրտսերին է պատկանում (այս դեպքում՝ տհասին, չկոփվածին), որը իրականում մեծ իշխանություն ունի: Սակայն ավագը իր իմաստուն զսպվածության շնորհիվ կարող է օգտագործել կրտսերի ուժը հանուն իր շահերի և, ի վերջո, իր թվացյալ թուլությունը վերածել հզորության. «Ոչ թե ես եմ փնտրում տհասների, այլ տհասներն են փնտրում ինձ»:

³ Նկատի է առնվում այն, որ «ապօրինի» տիրակալը («մեռյալի մարմինը») կլինի այն մարդկանց կամքի հնազանդ իրագործողը, որոնք նրան իշխանության են բերել («նրա մեջ հոգի է բնակեցրել»):

ՀՆԱՐՔ 15

调虎离山

[diào hǔ lí shān]

Ստիպել վագրին իջնել լեռից

待天以困之，用人以诱之，往蹇来反。

Սպասիր ժամանակին, երբ հնարավոր կլինի բնական պայմաններով օգնությանը հոգնեցնել թշնամուն, արհեստական միջոցներով գայթակղիր թշնամուն և ծուղակը գցիր:

Առաջխաղացումը խոչընդոտներ և դժվարություններ է խոստանում, մինչդեռ վերադարձը հակառակն է խոստանում²:

【按语】兵书曰：“下政攻城”。若攻坚，则自取败亡矣。敌既得地利，则不可争其地。且敌有主而势大：有主，则非利不来趋；势大，则非天人合用，不能胜。汉末，羌率众数千，遮虞诩于陈仓峭谷。诩即停军不进，而宣言上书请兵，须到乃发。羌闻之，乃分抄旁县。诩因其兵散，日夜进道，兼行百余里，令军士各作两灶，日倍增之，羌不敢逼，遂大破之。兵到乃发者，利诱之也；日夜兼进者，用天时以困之也；倍增其灶者，惑之以人事也。

[Մեկնություն] «Ռազմարվեստի մասին» տրակտատում այսպես է ասվում. «Վատագույնը բերդեր պաշարելն է»³: Գրոհել հակառակորդի ամրապնդված դիրքերի վրա, նշանակում է պարտության դատապարտվել: Եթե հակառակորդը գերադասելի վիճակում է, չի կարելի հարձակվել նրա պաշտպանող դիրքերի վրա, առավել ևս այն դեպքում, եթե հակառակորդը, շահեկան դիրքեր զբաղեցնելուց բացի, նաև ուժեղ է: Հակառակորդը կհեռանա շահեկան դիրքերից, եթե միայն գայթակղվի մեծ օգուտով, եթե նա ուժեղ է, սպա կպարտվի այն դեպքում, եթե միայն նրա դեմ դուրս բերվեն մարդկային և բնական միավորված ուժեր: Խսան դինաստիայի տիրապետության վերջին շրջանում Ցիան ցեղից⁴ հազարավոր զինվորներ Չենցանում⁵ փակեցին կիրճերից դուրս գալու ճանապարհները, որտեղ գտնվում էր Յու Մյուն⁶ փոքրաթիվ զորքով: Յու Մյուն հրամայեց տեղում մնալ և ճեղքելու փորձեր չձեռնարկել:

Յու Մյուն հայտարարեց, որ օգնություն խնդրելու համար սուր-
հանդակ է ուղարկել ու կմարտնչի, երբ զորավիճ ուժերը տեղ
հասնեն: Ցիանները իմացան այդ մասին, ցրվեցին և սկսեցին
զբաղվել հարևան գավառները թալանելով: Քանի որ թշնամին
սկսեց ցրվել, Յու Մյուն գրոհի անցավ՝ նրա զինվորները շեշտակի
հարձակվում էին գիշեր-ցերեկ: Դադարների ժամանակ զինվոր-
ներից յուրաքանչյուրին հրահանգվում էր կրկնապատկել խա-
րույկների քանակը՝ տպավորություն ստեղծելով ուժերի համայր-
ման մասին: Ցիանները չէին համարձակվում ճակատամարտել և
ի վերջո հիմնովին ջախջախվեցին: Հայտարարությունը, որ զոր-
քերը կռվելու են միայն ուժերը համայրելուց հետո, մղեց հակա-
ռակորդին օգուտ փնտրելու ուրիշ վայրում և ստիպեց նրանց լքել
շահեկան դիրքերը: Շեշտակի հարձակման նետովելը բնական
պայմաններ օգտագործելն է թշնամու համար դժվարություններ
ստեղծելու նպատակով, խարույկների քանակն ավելացնելը՝ արհես-
տական միջոց է թշնամուն ոչ շահեկան վիճակի մեջ գցելու համար:

Պարզաբանումներ

Եթե հակառակորդը ուժեղ է (պատկերավոր՝ վագր է) և այն
էլ գտնվում է իր տարածքում կամ զբաղեցնում է առավել ամուր,
իր համար սովորական դիրք (պատկերավոր՝ լեռան վրա է), չի
կարելի գրոհել նրա վրա: Այդպիսի հակառակորդին հաղթելու
համար նախ հարկավոր է նրան զրկել հարազատ միջավայրից,
ստիպել կամ խորամանկությամբ դրդել «լեռներից իջնելու»։ Նա
պետք է հեռանա ամրապնդված դիրքերից՝ իր ուժի աղբյուրից,
զրկվի իր պաշարներից մոտենալու հնարավորությունից: Այդ ժա-
մանակ նա կդառնա խոցելի, և հնարավոր կլինի նրան վնաս-
ազերծել:

¹ Այստեղ կիրառված է Երկինք (天) հասկացությունը: Չինա-
կան հնագույն տեքստերում «երկինք» բառը տարբեր կերպ է մեկ-
նաբանվում: Առաջին հերթին՝ որպես գերագույն աստվածային
անդեմ սկիզբ, ինչ-որ գերագույն աստվածային համընդհանրու-

թյուն, այստեղից էլ երկրային աշխարհի, այսինքն՝ Չինաստանի
անվանումը՝ «Ընդերկնային (Երկնքի տակ գտնվող)»: Երկինքը
աշխարհը կազմակերպող, կարգավորող գերագույն ուժն է, որի
շնորհիվ փոխվում են տարվա եղանակները, գիշերն ու ցերեկը,
ձյուն կամ անձրև է գալիս և այլն: Դրա հետ է կապված մեկ այլ
մեկնաբանություն՝ Երկինքը, որպես բնություն ընդհանրապես,
որպես անձեռակերտ երևույթներ և պայմաններ: Ըստ ամենայնի,
այս տեքստում Երկինքը գործածվել է հենց ածանցյալ նշանա-
կությամբ՝ որպես բնության բնական երևույթներ և պայմաններ:
Սուն Շըի «Ռազմարվեստի մասին» տրակտատի մեջ Երկինքը
նշվում է ռազմական հակամարտության վերլուծության համար
անհրաժեշտ հինգ գլխավոր երևույթների կամ գործոնների (Դառ,
Երկինք, Երկիր, Ջորահրամանատար, Հնարքներ) շարքում և ունի
հետևյալ բնորոշումը. «天者, 阴阳、寒暑、时制也»՝ «Երկինքը
Յին ու Յան է, ցուրտն ու տապը. դա ժամանակի կարգն է»:

² Այս նախադասությունը բերվում է 39-րդ հեկսագրամի՝
Օիան 蹇 ䷦ Խոչընդոտ, «Փոփոխությունների կանոնի» մեկնու-
թյունից: Այն կազմված է ներքևում Գեն 艮 ䷳ Լեռ և վերևում Քան
坎 ䷜ Ջուր տրիգրամներից, և, ինչպես արդեն ասվել է, լեռը
ամրության, պնդության խորհրդանիշն է, ջուրը՝ վտանգի, ռիսկի:
Այդպիսով ստեղծվում է լեռան վրայով ջրի հոսքերի պատկեր,
իսկ լեռան վրայի ջուրը համարվում էր վտանգներով լի, դժվար-
հաղթահարելի խոչընդոտ: Ներքևի տրիգրամի վերջին գծի
(այսինքն՝ ներքևից երրորդի) մեկնությունն ասում է. «往蹇来反,
内喜之也»՝ «Առաջ գնալը դժվարանում է, վերադարձը հակառակն
է խոստանում, դա ներքին երջանկության տարածությունն է»:

³ Սուն Շըի «Ռազմարվեստի մասին» տրակտատից մեջբեր-
ված արտահայտությունը ամբողջությամբ այսպիսին է. «是故百战
百胜, 非善之善也; 不战而屈人之兵, 善之善者也。故上兵伐谋,
其次伐交, 其次伐兵, 其下攻城»՝ «Դրա համար էլ հարյուր մար-
տերում հարյուր հաղթանակ տոնելը լավագույնից լավագույնը չէ,
թշնամու զորքը նվաճել առանց պատերազմելու, սա է լավագույ-
նից լավագույնը: Դրա համար էլ ամենից լավը թշնամու մտադրու-
թյունները խափանելն է, հետո՝ նրա դաշինքները քանդելը, ապա՝
նրա զորքը ջախջախելը: Վատագույնը բերդեր պաշարելն է»:

4 Յիան՝ հնագույն ժամանակներից Չինաստանի հյուսիսարևմուտքում ապրող ժողովուրդ՝ ցեղակից տիրեթցիներին, ՉժՀ-ում պաշտոնապես ճանաչված 56 ազգություններից մեկը:

5 Չենցանն՝ համապատասխանում է Շաանսի նահանգի ներկայիս Պաոծի քաղաքին:

6 Յու Սյու (մ.թ.? - 137 թթ.)՝ Ուշ Խանի ժամանակաշրջանի զորահրամանատար:

ՀՆԱՐՔ 16

欲擒故纵

[yù qín gù zòng]

Եթե ուզում ես բռնել, պետք է թողնես՝ գնա

逼则反兵，走则减势，紧随勿迫。累其气力，消其斗志，散而后擒，兵不血刃。需，有孚，光。

Արցանի մեջ առնված հակառակորդը հանդգնորեն կրիմաադրի, նահանջելու հնարավորություն ունեցող հակառակորդը պայքարում է ոչ ամբողջ ուժով, հարկավոր է հակառակորդին հետապնդել, բայց փակուղու մեջ չգցել: Ուժասպան արա նրան, ճնշիր նրա հակամարտելու կամքը, ցիրուցան արա հակառակորդին, իսկ հետո գերեվարիր նրան. այդպես անգամ սուրդ չի թաթախվի արյունով: Համբերությունը դա ճշմարտությանը տիրապետելն է, որը փայլուն սիրագործություններ է խոստանում:

【按语】所谓纵者，非放之也，随之，而稍松之耳。“穷寇勿追”，亦即此意。盖不追者，非不随也，不迫之而已。武侯之七纵七擒，即纵而蹶之，故展转推进，至于不毛之地。武侯之七纵，其意在拓地，在借孟获以服诸蛮，非兵法也。若论战，则擒者不可复纵。

[Մեկնություն] «Թողնել՝ գնա» չի նշանակում ձեռքից բաց թողնել, հարկավոր է փորք-ինչ բաց թողնելով՝ հետապնդել: «Եթե հակառակորդը անելանելի վիճակում է, պետք է նրան ճնշել»² ասվածը նույն իմաստն ունի: Այստեղ «չճնշելը» նշանակում է ոչ թե չհետապնդել, այլ «փակուղու մեջ չգցել»: Ուի կուսակալը յոթ անգամ գերի է վերցրել և յոթ անգամ էլ բաց է թողել իր հակառակորդին³, բաց է թողել, հետո նորից հետապնդել, որպեսզի սուսջ շարժվի մինչև այն վայրերը, ուր խոտ չի աճում: Ուի կուսակալը յոթ անգամ բաց է թողել իր թշնամուն, որ Մըն Խուոյի միջոցով գրասվի ավելի մեծ տարածքներ, նվաճի մնացյալ վայրի ցեղերին. դա ռազմական հնարք էր: Իսկ եթե դաստենք ռազմական մարտավարության տեսակետից, ասպա գերեվարված թշնամուն բաց թողնել չի թույլատրվում:

Շրջապատելով հակառակորդին՝ միշտ նահանջի հնարավորությունն թող նրան կամ էլ հնարավոր նահանջի հույս ներշնչիր: Հակառակորդին հալածելով՝ չի կարելի թույլ տալ, որ նա մտածի միայն հարձակումը հետ մղելու մասին. անհրաժեշտ է նրան անընդհատ հուսադրել, որ փախչելով կփրկվի: Սրանով իսկ կճնշվի նրա դիմադրելու կամքը, ցիրուցան կարվեն, կապակենտրոնացվեն նրա ուժերը: Հալածվող թշնամին նման է գազանի, որը իր կյանքը փրկելու համար ունակ է էական, մինչև իսկ մահացու վնաս հասցնել:

¹ Այս արտահայտությունը վերցված է 5-րդ հեկսագրամի՝ Սյու 需 ䷄ Սպասում (Անհրաժեշտություն, Համբերություն) մեկնություններից: Ցիեն 乾 ☰ Երկինք տրիգրամի վրա, որը խորհրդանշում է «արարման ուժը», գտնվում է Բան 坎 ☵ Զուր տրիգրամը, որը խորհրդանշում է վտանգ՝ կուտակվող ամպեր և անձրևի սպասում: Այսպիսով, հեկսագրամը կարող է նշանակել, որ հակառակորդի հանդեպ գերազանցություն ունենալով հանդերձ՝ հարկավոր է համբերատար սպասել հնարավոր վտանգի. սպասել մինչև «անձրևը» դադարի, ընտրել բարենպաստ պահ և շարունակել գործել: Հենց Սյու հիերոգլիֆը 需 կազմված է երկու մասից՝ անձրև 雨 և ծածկ 雨, որի տակ պատսպարվում է մարդը: Հին Չինաստանի գյուղական կենցաղում անձրևը անհրաժեշտություն էր լավ բերք ստանալու համար, դրա համար այս հիերոգլիֆը նշանակում է «անհրաժեշտություն»: Միաժամանակ, անձրևի ժամանակ հնավանդ գեղջուկը առանձնապես անելիք չուներ. պետք էր համբերատար սպասել անձրևի կտրվելուն, սպասել պարզկա եղանակի, ապա՝ բերքը հավաքել: Այսինքն՝ «համբերատար սպասումը» պետք է դրական արդյունք ունենա: Հեկսագրամի մեկնությունն ասում է. «需: 有孚, 光亨。贞吉, 利涉大川»՝ «Սպասումը, համբերությունը դա ճշմարտությանը տիրապետելն է, որ խոստանում է փայլուն իրագործումներ, կայուն հաջողություն. նպաստավոր է ծանծաղուտը մեծ գետն անցնելիս», այսինքն՝ բարենպաստ պահը՝ մեծ գործերի համար:

² Սուն Ծըի «Ռազմարվեստի մասին» տրակտատից լրիվ մեջբերումն այսպիսին է. «故用兵之法, 高陵勿向, 背丘勿逆, 佯北勿从, 锐卒勿攻, 饵兵勿食, 归师勿遏, 围师遗阙, 穷寇勿迫, 此用兵之法也»՝ «Ուստի ճակատամարտում զորքը օգտագործելու կանոնները սրանք են. եթե հակառակորդը դասավորվել է բարձունքում, ճակատով մի՛ հարձակվիր. եթե հակառակորդը դասավորվել է մեջքով դեպի բարձունքը, նրա դիմաց մի՛ դասավորվիր. եթե նա ձևացնում է, թե պարտված է, մի՛ գնա նրա հետևից. եթե նա լի է եռանդով՝ մի՛ հարձակվիր նրա վրա. եթե նա խայծ է պատրաստել քեզ համար, այն կույ մի՛ տուր. եթե հակառակորդի զորքը վերադառնում է տուն, մի՛ կանգնեցրու նրան. եթե հակառակորդը շրջափակված է, նրա համար մի ճեղք բաց թող. եթե նա անելանելի վիճակում է, մի՛ ճնշիր նրան: Սրանք են պատերազմը վարելու կանոնները»:

³ Երբ Չինաստանի հարավ-արևմտյան մասում ապստամբեցին այլազգի ցեղերը Մըն Խուոյի գլխավորությամբ, նրանց դեմ դուրս եկավ Ջուզը Լիանը: Ջուզը Լիանը, գերեվարելով Մըն Խուոյին, մեծահոգաբար նրան ազատ արձակեց, սակայն, Մըն Խուոն կրկին սկսեց ռազմական գործողություններ Ջուզը Լիանի դեմ, նորից գերի ընկավ և կրկին ազատ արձակվեց: Եվ այսպես վեց անգամ: Ի վերջո, երբ Մըն Խուոն գերեվարվեց յոթերորդ անգամ, զոջաց իր արածների համար և Ջուզը Լիանին հավերժ հնազանդ լինելու երդում տվեց: Ջուզը Լիանը նրան նշանակեց նվաճած տարածքների կուսակալ, և այդ օրվանից այնտեղ խաղաղություն ու անդորր տիրեց:

抛砖引玉

[pāo zhuān yǐn yù]

Գցիր աղյուսը, որ ձեռք բերես նեֆրիտը¹

类以诱之，击蒙也。

Թշնամուն գրավել իր բաղձալիին նույն խայծով,
խփել անստորյանը²:

【按语】诱敌之法甚多，最妙之法，不在疑似之间，而在类同，以固其惑。以旌旗金鼓诱敌者，疑似也；以老弱粮草诱敌者，则类同也。如：楚人纵樵，而绞人误以为利；如孙臧减灶而诱杀庞涓。

[Մեկնություն] Թշնամուն գայթակղելու համար բազում միջոցներ կան. լավագույն խայծը ոչ թե այն է, որ երկխմաստություն է առաջացնում, այլ հակառակորդի բաղձալիին՝ ըստ պատկերի և նմանության ինչ-որ մի բանի ստեղծումն է: Թշնամուն դրոշների թափահարումով և թմբկահարությամբ գայթակղելը երկխմաստություն է առաջացնում: Գայթակղել թշնամուն՝ նրա դեմ հանելով ծեր և թույլ զինվորների կամ պարենին տիրանալու դիտավորությամբ. սա հենց խայծի ստեղծումն է ըստ պատկերի և նմանության: Այդպես, օրինակ՝ Չուի զինվորները թողեցին վառելիքայտերը, իսկ Ծիաոյի զինվորները ուզեցին տիրանալ դրանց՝ ու թակարդն ընկան: Այդպես նաև՝ Սուն Պինը կրճատեց խարույկների թիվը և դրանով Փանն Օյուանին տարավ կործանման³:

Պարզաբանումներ

Հնարքի նպատակն այն է, որ ցանկալիի թվացյալ նմանակը ցուցադրելու կամ տրամադրելու միջոցով փորձ արվի հակառակորդից ստանալու հենց ցանկալին: Օգտվիր պահից, երբ նրա ձեռքին նեֆրիտ կլինի, քար նետիր նրա վրա, նրա առաջին արձագանքը կլինի, որ քեզ վրա կնետի ձեռքի տակ եղած ցանկացած

առարկա: Որպես ընծա, տո՛ւր կամ զոհի՛ր անարժեք մի բան, փոխարենը կորզի՛ր օգտակար, արժեքավոր մի այլ բան: Բացի՛ր հակառակորդին աննշան մի գաղտնիք, տո՛ւր մի անկարևոր տեղեկություն, որպեսզի փոխարենը նա էլ ավելի էական գաղտնիք բացահայտի, արժեքավոր տեղեկություններ փոխանցի: Դրսևորի՛ր բացահայտ չիմացություն, անճարակություն, դանդաղկոտություն, և հակառակորդի առաջին արձագանքը կլինի իր կարողությունների ու գիտելիքների ցուցադրումը:

¹ «Գցիր աղյուսը, որ ձեռք բերես նեֆրիտը» արտահայտությունը իր սկզբնական՝ ոչ քաղաքական-նազմավարական կիրառության մեջ, ունի փոքր-ինչ այլ իմաստ. սեփական անկատար տեսակետն արտահայտել, որպեսզի ունկնդիրների մեջ խթանվի ստեղծագործ մտքերի առաջ գալը, քննարկվող նյութի վերաբերյալ անհաջող գաղափար ներկայացնել, որպեսզի փորձագետների լաբանը ավելի արժեքավոր և բովանդակալից գաղափարներ առաջարկի: Հաճախ այս արտահայտությունն արվում է նաև ինչ-որ տեսակետ արտահայտելուց առաջ՝ որպես նշան սեփական համեստության: Այս արտահայտությունը ծագում է Թանն դինաստիայի օրոք Ջաո Գու հայտնի բանաստեղծի մասին առասպելից: Չանն Ծիենը, որն ինքն իրեն չէր համարում շնորհալի բանաստեղծ, որոշում է Ջաո Գուից մի քանի բանաստեղծական տող կորզել: Մի տաճարի մոտ գտնվող ժայռի վրա նա գրեց դիտմամբ անհաջող կազմած բանաստեղծական երկու տող և երբ Ջաո Գուն տաճար եկավ, նա նկատեց այդ անկատար ընտրված հանգերն ու դրանց ավելացրեց ևս երկու տող: Արդյունքում ստացվեց մի նոր նրբագեղ բանաստեղծություն: Չանն Ծիենի արարքը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Գցիր աղյուսը, որ ձեռք բերես նեֆրիտը» հնարքի կիրառության դասական օրինակ: Նեֆրիտը (玉) հնագույն ժամանակներից (հնարավոր է անգամ մ.թ.ա. 9-8-րդ դդ.) շատ բարձր է գնահատվում Չինաստանում և համարվում է ազգային քար:

² 14-րդ հնարքի առիթով արդեն նշվեց, որ «Փոփոխությունների կանոնում» 4-րդ հեկսագրամի՝ Մըն 蒙 ䷃ Չիմացություն բացատրության մեջ ասվում է. «Ոչ թե ես եմ փնտրում տհասների,

擒賊擒王

[qín zéi qín wáng]

Ավազակներին բռնելու համար պետք է
ավազակապետին բռնել

摧其坚，夺其魁，以解其体。龙战于野，其道穷也。

Հակառակորդի հիմնական ուժերը ոչնչացնելու համար բռնիր
նրանց առաջնորդին, և նրանց ողջ ուժերը կրայքայվեն:

Վիշապները պայքարում են ծայրամասում,
նրանց ճանապարհը ավարտին է մոտենում:

【按语】攻胜则利不胜取。取小遗大，卒之利、将之累、帅之害、攻之亏也。舍胜而不摧坚擒王，是纵虎归山也。擒王之法，不可图辨旌旗，而当察其阵中之首动。昔张巡与尹子奇战，直冲敌营，至子奇麾下，营中大乱，斩贼将五十余人，杀士卒五千余人。巡欲射子奇而不识，刺蒿为矢，中者喜谓巡矢尽，走白子奇，乃得其状，使霁云射之，中其左目，几获之，子奇乃收军退还。

[Մեկնություն] Հաղթանակ տանելիս անհրաժեշտ է ամեն ինչ ստանալ ամբողջությամբ, ամեն ինչ գրավել անմնացորդ, վերցնել այն, ինչ հնարավոր է: Բիչը վերցնելը, իսկ շատը թողնելը ձեռնտու է զինվորներին, ծանր է զորավարների համար, վնասակար՝ հրամանատարներին. դա թերություն է հարձակողական գործողություններում: Հաղթանակել և չոչնչացնել հակառակորդի հիմնական ուժերը, չբռնել պարագլխին, նշանակում է վագրին թույլ տալ լեռներ վերադառնալ: Պարագլխին բռնելու միջոցն այն չէ, որ ուշադիր հետևես, թե ինչպես և ուր են շարժվում դրոշները, այլ հակառակորդի ճամբարում այն վայրերի հաշվարկումն է, որտեղից սկիզբ են առնում նախնական գործողությունները: Հին ժամանակներում, երբ Ջանն Սյունը² և Յին Օրցին³ բախվեցին ճակատամարտում, Թաննի բանակը նետովեց թշնամու վրա, հասավ մինչև Յին Օրցիի ճամբարը և առաջացնելով մեծ խառնաշփոթություն, սրահողիտող արեց հինգ տասնյակ ապստամբ հրամանա-

այլ տհասներն են փնտրում ինձ»: Տվյալ դեպքում ասույթը ունի հետևյալ լրացումը՝ երբ «տհասները գտնում են ինձ», հարկավոր է գործել և խփել նրանց անմտությանը: Այս միտքը ներկայացվում է հետևյալ արտահայտությամբ՝ հեկսագրամի վերջին գծին (որը ողջ հեկսագրամում նկարագրած իրավիճակի ավարտական գործողությունն է) վերաբերող մեկնություններում. «击蒙，不利为寇，利御寇»՝ «Խփել տհասությանը. նպաստավոր չէ հարձակվող լինելը, նպաստավոր է հարձակվողին հաղթելը»:

³ Նկատի է առնվում ավանդությունն այն մասին, թե ինչպես մ.թ.ա. 8-րդ դ.՝ Գարնան և Աշնան ժամանակաշրջանում, Չու թագավորության զորքը պաշարել էր Ծիաո թագավորության մայրաքաղաքը (գտնվում էր ժամանակակից Խըպեյ նահանգի հյուսիսարևմտյան մասում): Ծիաոյի զորքը փոքրաթիվ էր ու թույլ, ուստի մնաց բերդում, որը անտիկ էր համարվում: Անհաջող պաշարումից մեկ ամիս հետո զորահրամանատարի խորհրդականը բերդի պաշտպաններին դուրս քաշելու մի միջոց առաջարկեց: Չուի զինվորները, տեղեկանալով, որ պաշարվածների վառելափայտը վերջացել է, իրենց՝ լեռներից իջեցրած վառելափայտով սայլերը, թողեցին անպաշտպան, Ծիաոյի զորքն էլ գրոհ կազմակերպեց և տիրացավ դրանց: Որոշ ժամանակ անց Չուի զորքը կրկին սարերից սայլերով փայտ իջեցրեց: Եվ այս անգամ, երբ Ծիաոյի զինվորները, ոգևորված առաջին հաջողությամբ, դուրս եկան բերդի դարպասներից, Չուի փոքրաթիվ պահակախումբը սկսեց փախչել, Ծիաոյի զինվորներն էլ ընկան նրանց հետևից և, հայտնվելով ծուղակում, ամբողջությամբ ոչնչացվեցին: Իսկ այդ ընթացքում Չուի հիմնական ուժերը բաց և անպաշտպան դարպասներով մտան բերդ և գրավեցին այն: Այսպես Ծիաոյի զորքը կուլ տվեց խայծը և ջախջախվեց:

⁴ Վեյ թագավորության զորքը ղեկավարող Փանն Օյունին ղիմակայելիս Մուն Պինը (մ.թ.ա. ? - 316 թթ.), հետևողականորեն պակասեցնելով խարույկների քանակը, որ գիշերները վառում էին իր զինվորները, հակառակորդի մեջ թյուր պատկերացում ձևավորեց իր զորքի բարոյական վիճակի մասին, թե, իբր, Ցի թագավորության զինվորները համատարած լքում են զորքը: Դրանով ոգևորված Վեյի զորքը առաջ շարժվեց դեպի Մալիննի կիրճը (Շանտոն նահանգում՝ ներկայիս Լինյի քաղաքի մոտ), որտեղ նրան դարան էր սպասում:

տարների, սպանեց հինգ հազար ախոյան զինվորների: Ջանն Սյունն ուզում էր սպանել Ծըցիին, բայց չէր կարողանում թշնամու զինվորների բազմության մեջ հայտնաբերել նրան: Այդ ժամանակ նա հրահանգեց նետերի փոխարեն գործածել բույսերի սուր կոթեր. նրանք, որոնց դիպչում էին նետերը, հասկանալով, որ դրանք անմասն են, ուրախ գոչում էին, թե Ջանն Սյունի մոտ վերջացել են նետերի պաշարները, վազում էին Յին Ծըցիի մոտ և հայտնում այդ մասին: Այդպես Ջանն Սյունը կարողացավ աչքը պահել թշնամու զորքի առաջնորդի վրա, հրամայեց Ծիյունին⁴ նետահարել Յին Ծըցիին: Նետը մտավ ապստամբ զորավարի ձախ աչքը, գրեթե սպանեց նրան, բայց Յին Ծըցիին հաջողվեց հավաքել զորքի մնացորդները և փախչել:

Պարզաբանումներ

Հակառակորդին մեկ մարտում հաղթելը բավարար չէ նրան վերացնելու համար: Հարկավոր է ջախջախել նրա գլխավոր ուժերը, վնասագերծել կամ ոչնչացնել նրա կազմակերպական կառուցվածքը, դեկավարող ռազմական վերնախավը, և այդ ժամանակ հակառակորդի ուժերն ինքնըստինքյան կկործանվեն: Ուստի հաղթանակը հաղթանակ չէ, եթե չես ոչնչացրել թշնամու հրամանատարական կազմը:

¹ Այս ասացվածքը 2-րդ հեկսագրամի՝ Բուն 坤 ䷁ Դաշտ վերևի գծի մեկնությունն է: Հեկսագրամը կազմված է Բուն 坤 ䷁ Հող երկու տրիգրամներից. այն խորհրդանշում է Երկիրը, որը Յին սկզբի ամբողջական անձնավորումն է՝ ի հակադրություն Երկնքի, որը անձնավորում է Յան սկիզբը: Արդեն ասվեց, որ Երկիրը հետևում է Երկնքին, ենթարկվում է երկնային ժամանակային կարգին, Երկնքից եկած ազդակներին, և որ այդ երկու սկիզբները նույնքան հակադիր են միմյանց, որքան ձգտում են միմյանց: Յինը երկար չի կարող գոյություն ունենալ առանց Յանի, հակառակ դեպքում կխախտվի իրերի միասնականությունն ու կարգը: Հեկսագրամի վերևի գիծը խորհրդանշում է խավար Յինի

հերթական ավարտը, և հաջորդող անցումը՝ լուսավոր Յանի: Այստեղից էլ խավարի և լուսավորի խորհրդանիշները՝ «Վիշապները, պայքարում են ծայրամասում, նրանց ճանապարհը ավարտին է մոտենում»:

² Ջանն Սյուն (708–24 հոկտեմբեր 757 թթ.)՝ Թանն դինաստիայի ժամանակաշրջանի բանաստեղծ, պետական գործիչ, մասնակցել է Ան Լուշանի ապստամբության ճնշմանը:

³ Թանն դինաստիայի ժամանակաշրջանի զորավար, քաղաքական գործիչ, միացել է Ան Լուշանի ապստամբությանը:

⁴ Նան Ծիյուն (712–757 թթ.)՝ Թանն դինաստիայի ժամանակաշրջանի զորավար, մասնակցել է Ան Լուշանի ապստամբության ճնշմանը:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

混战计

ԽԱՌԸ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՆԱՐՔՆԵՐ



釜底抽薪

[fǔ dǐ chōu xīn]

Փայտերը դուրս քաշել կարթսայի տակից

不敌其力，而消其势，兑下乾上之象。

Հակառակորդի դեմ ուղիղ հակամարտության մեջ մի մտիր, բայց թուլացրու նրա հիմքերը այնպես, ինչպես նկարագրվում է նշանով,¹ որի ներքևում ջրավազաններ են, իսկ վերևում՝ երկինք:




【按语】水沸者，力也，火之力也，阳中之阳也，锐不可当；薪者，火之魄也，即力之势也，阴中之阴也，近而无害；故力不可当而势犹可消。尉繚子曰：“气实则斗，气夺则走。”而夺气之法，则在攻心，昔吴汉为大司马，有寇夜攻汉营，军中惊扰，汉坚卧不动，有倾乃定。乃选精兵反击，大破之：此即不直当其力而扑消其势也。宋薛长儒为汉、湖、滑三州通判，在汉州。州兵数百叛，开营门，谋杀知州、兵马监押，烧营以为乱。有来告者，知州、监押皆不敢出。长儒挺身徒步，自坏垣入其营中，以福祸语乱卒曰：“汝辈皆有父母妻子，何故作此？叛者立左，胁从者立右！”于是不与谋者数百人立于右；独主谋者十三人突门而出，散于诸村野，寻捕获。时谓非长儒，则一城涂炭矣！此即攻心夺气之用也。或曰：敌与敌对，捣强敌之虚以败其将，成之功也。

[Մեկնություն] Եռացող ջուրը ուժ է, և դա կարթսայի տակ վառվող կրակի ուժն է, հարաշարժ ուժ՝ անփոփոխած հարաշարժ ուժի մեջ², անսանձելի ուժ: Փայտը կրակի հոգին է, այսինքն՝ նրա ուժի հիմքը, անշարժ հիմքը նրա անշարժ հիմքի³, դրան կարելի է մոտենալ առանց ինքդ քեզ վնաս պատճառելու: Ուտի ուժը գուցե հնարավոր չէ զսպել, բայց հիմքը, այնուամենայնիվ, կարելի է թուլացնել: «Վեյ Լիսո ռազմարվեստը»⁴ գրքում ասվում է. «Եթե ուժի հիմքը լեցուն է, ապա կարելի է պատերազմել, եթե հիմքը կորսված է, ապա պետք է նահանջել», իսկ ուժի հիմքերը թուլացնելու միջոցները հակառակորդի ոգուն հարվածելու մեջ են: Մի անգամ, երբ Ռուսներ⁵ զբաղեցնում էր ռազմական նահա-



բարի պաշտոնը, թշնամին հարձակում գործեց նրա քանակա-
տեղիի վրա: Ջորքերում խուճապ առաջացավ, իսկ Ռուսանը
հանգիստ պատկած մնաց իր վրանում: Այդ մասին իմանալով՝
նրա զորքը նույնպես հանդարտվեց: Քիչ ուշ Ռուսանը հավաքեց
իր լավագույն զինվորներին և հակահարձակման անցավ՝ լուրջ
կորուստներ հասցնելով թշնամուն: Սա օրինակ է այն քանի, թե
ինչպես կարելի է թուլացնել հակառակորդի ուժի հիմքը՝ չփոր-
ձելով ուղղակի հակամարտել նրա ուժի դեմ: Սոն դինաստիայի⁶
օրոք Մյուն Չաննժուն զբաղեցնում էր երեք շրջանների պատաս-
խանատու նախարարի⁷ պաշտոնը՝ Խանչոու նստավայրով⁸: Քա-
ղաքի կայսզորը խոովություն բարձրացրեց. բացեցին ճամբարի
դարպասները և պատրաստվում էին հաշվեհարդար տեսնել
կուսակալների ու վերակացունների հետ, հրկիզեցին քանակատե-
ղիի շինությունները և խառնաշփոթ առաջացրին: Երբ լուրը հաս-
րին հրամանատարությանը, կուսակալներն ու վերակացունները
թաքնվեցին և չհամարձակվեցին երևալ: Այնուամենայնիվ, Մյուն
Չաննժուն դրսևորեց խիզախություն. ավերված պատի միջով
մտավ ճամբար, մեկ պատժողի, մեկ խրախուսողի լեզվով խոսեց
սպասաւքած զինվորների հետ. «Դուք բոլորդ մայր ու հայր
ունեք, կին ու երեխա, ինչո՞ւ եք հանցանք գործում: Ովքեր սկսեցին
խոովությունը, ձախ կանգնեք, իսկ ովքեր հետևեցին խոովարար-
ներին, ա՛յ կանգնեք»: Այդ ժամանակ մի քանի հարյուր զինվոր,
որոնց մտքով չէր անցել սպասաւքել, կանգնեցին նրանից աջ:
Իսկ սպասաւքությունը նախաձեռնած տասներեք զինվորները
հապշտապ փախան դարպասներից և ցրվեցին շրջակա գյուղե-
րում: Որոշ ժամանակ անց նրանց բոլորին բռնեցին ու պատժեցին:
Այդ օրերին ասում էին, որ եթե չլինեին Չաննժուի անձնագոհ
գործողությունները, ողջ քաղաքը իսպառ կայրելին: Սա հենց հա-
կառակորդի ոգուն խփելու և հիմքերը թուլացնելու օրինակն է:
Նաև ասում են. «Երկու քանակների հակամարտության ժամա-
նակ հարվածել ուժեղ հակառակորդի թույլ տեղերին՝ նրան ամ-
բողջովին պարտության մատնելու համար. սա հենց նկարագրված
մարտավարության կիրառությունն է»:

Հզոր հակառակորդին դիմակայելիս կարելի է բացեիբաց
չհակազդել նրա ուժին, փոխարենը՝ կարելի է թուլացնել նրա
հիմքերը: Յուրաքանչյուր ուժի հիմքում է՛նեղհայի տարբեր աղ-
բյուրներ են. բացի նյութական աղբյուրներից, կան նաև հոգևոր-
ները՝ ներառյալ կիրքը, որը որոշակի ուղղվածություն, նպա-
տակալացություն է հաղորդում ուժին: Ռազմավարը չպետք է
անտեսի հակառակորդի ուժի այդ աղբյուրը քայքայելու և հյուժելու
ինարավորությունը:

Այդ նշանը 10-րդ հեկսագրամն է՝ Լի 履  Քայլք: Հեկ-
սագրամը կազմված է ներքևից Տուի 兑  Լիճ (ուրախություն,
խնդություն, խոսքեր, համոզմունք) և վերևից Ցիեն 乾  Երկինք
(վեհություն, ամբողջություն) տրիգրամներից: Հեկսագրամը խորհր-
դանշում է առաջընթաց շարժում: Երկինքը կարող է ջուր տալ
(անձրևի տեսքով), և ջուրը ներքևում չի սպառվում, այլ հավաք-
վում է Լճում: Լիճը ներկայանում է որպես ջրավազան, ջրի հա-
վաքում, ոգու կուտակում, ուրախություն. այս դեպքում կարող է
համապատասխանել որոշում ընդունող ռազմավարին: Այն, սա-
կայն, ունի ավելի թույլ բնութագրեր, քան վերևի Երկինք տրի-
գրամը, որը խորհրդանշելով ուժ, ամբողջություն, պնդություն, վեհու-
թյուն, ունի ակնհայտ առավելություններ, և տվյալ դեպքում
կարող է վերաբերել հակառակորդին: Այսպիսով, շարժումը դեպի
առաջ պատկերանում է որպես շարժում թույլ դիրքերից դեպի
ուժեղ դիրքերը (հիշեցնենք, որ կանոնների համաձայն՝ հեկսա-
գրամները մեկնաբանվում են ներքևից վերև): «Փոփոխություն-
ների կանոնում»՝ 10-րդ հեկսագրամի մեկնության մեջ, ասվում է.
«履, 柔履刚也。说而应乎乾, 是以“履虎尾, 不啞人”。亨, 刚
中正, 履帝位而不疚, 光明也»՝ «Լի. փափուկը հարձակվում է
ամուրի վրա: Ուրախությունը պետք է համապատասխանի Եր-
կինքին. դա ինչպես՝ «տորել վագրի պոչը. վագրը չի կծի»: Այն
սխրագործություն է խոստանում: Ամբողջան մեջ է ճշմարտությու-
նը, տիրակալի դիրքերը մտնելը չի հանգեցնի դժբախտության,
բայց լույս և փառք կբերի»:

գրությունից՝ կարելի է ենթադրել հնարքի հետևյալ մեկնությունը. ոգեղեն ուժի անհրաժեշտ կուտակման դեպքում թույլը կարող է զգուշավոր, առաջընթաց շարժումներով ոչ թե խոչընդոտել ուժեղի («վագրի») ճանապարհը, այլ նրա վրա թիկունքից հարձակվելով («պոչը տրորելով»)՝ հաղթել, տիրանալ նրան:

² Բառացի՝ «Յանը՝ ամփոփված Յանի մեջ» (阳中之阳也):

³ Բառացի՝ «Յինը՝ ամփոփված Յինի մեջ» (阴中之阴也):

⁴ «Վեյ Լիառ ռազմարվեստը» անհայտ հեղինակի տրակտատը թվագրվում է մ.թ.ա. III դ.:

⁵ Ու Խան (մ.թ. ? – 44 թթ.)՝ Արևելյան Խանի ժամանակաշրջանի քաղաքական և ռազմական գործիչ:

⁶ Սոն՝ դինաստիա, կայսրություն (960–1279 թթ.):

⁷ Պատասխանատու նախարար կամ Թոնփան՝ գործում էր կուսակալությունների վարչակազմի համակարգում, պատասխանատու էր պարենի պահպանման և մատակարարման, գյուղատնտեսական հողատարածքների, ջրային պաշարների և դատական գործերի համար, ուներ մարգային վարչակազմի տեսչի գործառույթ և կարող էր անմիջականորեն զեկուցել կայսրին:

⁸ Ներկայիս Գուանխան քաղաքը:

ՀՆԱՐՔ 20

混水摸鱼

[hún shuǐ mō yú]

Պղտոր ջրում ձուկ որսալ՝

乘其阴乱，利其弱而无主。随，以向晦入宴息。

Օգույվել նրանից, որ հակառակորդի մեջ ներքին անհամերաշխություն կա, օգուտ քաղել, քանի դեռ նա թույլ է ու խառնված վիճակում է:
Այստեղ (բնական կարգին) հետևելը նույնքան սովորական է, որքան երեկոյան հանգստի գնալը²:

【按语】动荡之际，数力冲撞，弱者依违无主，乱蔽而不察，我随而取之。《六韬》曰：“三军数惊，士卒不齐，相恐以敌强、相语以不利，耳目相属，妖言不止，众口相惑，不畏法令，不重其将：此弱征也。”是鱼，混战之际，择此而取之。如：刘备之得荆州，取西川，皆此计也。

[Մեկնություն] Բուռն ցնցումների ժամանակ բազում ուժեր բախվում են միմյանց, թույլերն էլ գտնվում են առանձնահատուկ շփոթության մեջ ու խառնված վիճակում են, փորձում են թաքնվել, անզգույշ են ու ոչ շրջահայաց, և այդ ժամանակ դյուրին է նրանց բնական եղանակով քեզնով անելը: «Վեց գաղտնի ուսմունքներ»³ տրակտատում ասվում է. «Բանակը, որի բոլոր զորամասերում բազմաթիվ երկյուղներ կան, իսկ զինվորների շարքերում կարգ ու կանոն չկա, որում զինվորները միմյանց վախեցնում են թշամու հզորությամբ, վարում են անպետք խոսակցություններ, երբ վախեցած հայացքներն ու սրած ականջները գամված են իրար, իսկ լուրերն անդադար տարածվում են, երբ բազմաթիվ շուրթեր միմյանց կասկածի մեջ են գցում, չեն վախենում հրահանգները չկատարելուց, քանի տեղ չեն դնում իրենց հրամանատարներին՝ դա թույլ բանակ է»: Այդպիսի բանակը հենց «ձուկն է», և համընդհանուր հակամարտության պահին միայն ցանկացիր, ու կտիրես նրան: Բնչպես, օրինակ՝ Լիու Պեյը⁴, օգտվելով այս հնարքից, տիրեց Ծիննջոուին և գրավեց Սիչուանը:

Անհրաժեշտ է օգտվել հակառակորդի ճամբարում ծագած հակասություններից ու խառնաշփոթից, անորոշ վիճակից, որպեսզի առանց ավելորդ ջանքերի ծածուկ օգուտ քաղես, հասնես նպատակներիդ: Ռազմավարը ինքը կարող է նաև գաղտնաբար նույնպիսի իրարանցում ու խառնակություն ստեղծել հակառակորդի շարքերում: Եվ հաջողության դեպքում, երբ վերջինս «պղտոր ջրի» մեջ է ընկղմվել, երբ, հայտնվելով երկդիմի, խոսվությամբ ու կասկածանքներով լի իրավիճակում, ստիպված է բախտաբերի քայլեր ձեռնարկելու, դյուրությամբ կույ կտա ռազմավարի նախօրոք պատրաստած խայծը:

¹ Այս ասացվածքի մեկ այլ տարբերակն է՝ «Ջուրը պղտորել՝ ձուկ որսալու համար» (渾水摸魚):

² Խոսքը Սուի 隨 ䷐ Հետևել 17-րդ հեկսագրամի մասին է, որը կազմված է ներքևում Ջեն 震 ䷲ Ամպրոպ և վերևում Տուի 兌 ䷹ Լիճ տրիգրամներից: Հեկսագրամը արտահայտում է ընդունված կարգին հետևելը, իրերի բնական ընթացքը: «Փոփոխությունների կանոնում» ասվում է. «泽中有雷, 随。君子以向晦入宴息»՝ «Լճի պատկերը ներկայանում է Ամպրոպի պատկերում, ուստի տեղի է ունենում Հետևելը: Երբ գալիս է երեկոն, ազնվաբարոս այրը գնում է հանգստի»: Լիճը՝ ջրի կուտակումը, հետևում է Ամպրոպին, որը տատանում և թրթիռ է առաջացնում: Ջուրը տատանվում է Ամպրոպի առաջացրած ցնցումների հետևանքով. սա իրերի բնական ընթացքն է, այնքան բնական և անհակասական, որքան այն, որ ազնվաբարոս այրը երեկոյան գնում է քնելու՝ հետևելով ժամանակի բնական ընթացքին: Այսպիսով, եթե ռազմավարին անձնավորող ներքևի տրիգրամը նշանակում է տատանման, ցնցման առաջացում, ապա վերինը, անձնավորելով հակառակորդին, կնշանակի նրա նույնպիսի տատանումը:

³ «Վեց գաղտնի ուսմունքներ»՝ Հին Չինաստանի ռազմական յոթ դասական տրակտատներից մեկը, որի հեղինակն է համարվում Ծիան Ծըյան (姜子牙), ապրել է Ջոուի ժամանակաշրջանում (մ.թ.ա. XI դ.):

⁴ Լիու Պեյ (163–223 թթ.)՝ Եռաթագավորության տարիների ամենահզոր և խորամանկ զորավարներից մեկը: Երբ Խան դինաստիան լրիվ անկում ապրեց, նա, օգտվելով կլանների և կուսակալությունների պայքարից, նրանց փոխադարձ երկյուղներից և հավակնություններից, հիմնեց Շու թագավորությունը՝ Չընտու մայրաքաղաքով:

金蝉脱壳

[jīn chán tuō ké]

Ոսկե ցիկադը իր վրայից գցում է թաղանթը՝

存其形，完其势；友不疑，敌不动。巽而止，蛊。

Պահիր քո ներկայությունը, բայց բարելավիր քո դիրքերը, և այնպես, որ դաշնակիցների կասկածները չառաջացնեն, իսկ թշնամիները չհանդգնեն հարձակում ձեռնարկել: Երբ մեղմ շարժումը բախվի անհաղթահարելի արգելքի, Փորձանք կլինի²:

【按语】共友击敌，坐观其势。尚另有一敌，则须去而存势。则金蝉脱壳者，非徒走也，盖为分身之法也。故大军转动。而旌旗金鼓，俨然原阵，使敌不敢动，友不生疑，待己摧他敌而返，而友敌始知，或犹且不如。然则金蝉脱壳者，在对敌之际，而抽精锐以袭别阵也。如：诸葛亮病卒于军，司马懿追焉。姜维令仪反旗鸣鼓，若向懿者，懿退，于是仪结阵而去。檀道济被围，乃命军士悉甲，身自（白）服乘舆徐出外围，魏惧有伏，不敢逼，乃归。

[Մեկնություն] Երբ դաշնակցի հետ պայքարում ես ընդհանուր թշնամու դեմ, հանդարտ և ուշադիր հետևիր իրավիճակին: Բայց եթե ի հայտ է գալիս նոր հակառակորդ, հարկավոր է խուսափել հարձակումից՝ դիրքերը պահպանելով հանդերձ: Սա «ոսկե ցիկադը իր վրայից գցում է թաղանթը» հնարքն է: Դա չի նշանակում նահանջ կամ փախուստ մարտի դաշտից, այլ ենթադրում է երկատվելու ունակություն՝ մի տեղում պահելով ներկայությունը՝ մյուս տեղում զբաղվելով դիրքերի բարելավումով: Ուստի, երբ լայնածավալ զորաշարժ է կատարվում, զինվորական թեթուկները և դրոշմները մնում են սկզբնական առաջնագծում, որպեսզի թշնամին չհամարձակվի հարձակման անցնել, իսկ դաշնակցի կասկածներն էլ չառաջանան, այնպես, որ թե՛ թշնամին, թե՛ դաշնակիցը քո զորաշարժի մասին իմանան միայն այն ժամանակ, երբ դու, մեկ այլ թշնամու ոչնչացնելով, կվերադառնաս սկզբնական դիրքերդ:

Թեև նրանք կարող են ընդհանրապես անտեղյակ մնալ: Այսպիսով, «ոսկե ցիկադը իր վրայից գցում է թաղանթը» հնարքը ենթադրում է մի միջոց, որը հնարավորություն է տալիս մի թշնամու դեմ հակամարտելիս լավագույն զինվորներին տեղափոխելու մեկ այլ հակառակորդի դեմ՝ առանց սկզբնական դիրքերը զիջելու: Օրինակ՝ երբ արշավի ժամանակ մահացու ցավը վրա հասավ Ջուզը Լիանին, Սրմա Յին շարունակեց հետապնդել Ջուզը Լիանի նահանջող բանակին, բայց գլխավոր հրամանատարին փոխարինեց զորավար Ծիան Վեյը³, հրամայեց դրոշմներ պարզել և թեթևահարել՝ կարծես թե մարտի պատրաստվելով Սրմա Յիի բանակի դեմ: Սրմա Յին չհամարձակվեց ճակատամարտ տալ. այդ ժամանակ Ծիան Վեյը տեղափոխեց ռազմակայանը և թաքուն քաշվեց դեպի անվտանգ եզերքները: Կամ՝ երբ Թան Տսոծին⁴ շրջափակման մեջ ընկավ, և այնուամենայնիվ զինվորներին հրամայեց պառագինավել, իսկ ինքը, ձյունածերմակ հագուստներ հագած, հանդիսավոր բազմելով մարտակառքում, անշտապ շարժվեց պաշարման սահմաններից դուրս: Վեյ թագավորության բանակը չհամարձակվեց փակել ճանապարհը՝ մտածելով, որ Թան Տսոծին նրան ծուղակն է գցում: Այսպես Թան Տսոծին կարողացավ դուրս գալ շրջափակումից և տուն վերադառնալ:

Պարզաբանումներ

Երբ ուժերը չեն բավականացնում հակառակորդին միանգամից մի քանի ուղղություններով դիմադրելու համար, հարկավոր է վերախմբավորվել, «երկատվել», «բազմապատկվել», ընտրել հիմնական ուղղությունը և գործել նպատակասլաց: Սակայն միաժամանակ մյուս ուղղություններում պարտադիր է ցուցադրել թվացյալ, շինծու, բայց առերես համոզիչ ներկայություն և լիակատար մարտական պատրաստվածություն՝ թշնամու գրոհը հետ մղելու համար նույն այն դիրքերում, որոնք իրականում ընդմիջտ կամ ժամանակավորապես լքվել են: Այս կերպ դաշնակիցները խուճապի չեն մատնվի, իսկ հակառակորդը չի հանդգնի հարձակվել:

¹ Յիկադների թրթուրները ապրում են հողի տակ և ուտիճի պես արմատներին կպած, սնվում են բույսերի հյութերով: Այս ցիկադները դուրս են սողում, բույսերի ցողուններով մագլցում են տերևների վրա և այնտեղ իրենց վրայից գցում են թաղանթը: Ի տարբերություն թիթեռների՝ դրանք ընդհանրապես հարսնյակի փուլ չունեն. լույս աշխարհ է գալիս ամբողջությամբ ձևավորված միջատ՝ ունակ թռչելու: Վրայից գցած թաղանթը մնում է տերևի վրա և փայլուն դեղին երանգ տալիս. այստեղից էլ «ուսկե ցիկադ» անվանումը: Ցիկադը, թափանցիկ լինելով, անզեն աչքով գրեթե չի երևում: Հաճախ, հեռվից լսելով ծառերի վրա ցիկադների ճոռոցը, որն այնքան ուժեղ է, որ չես լսի կողքիդ կանգնած զրուցակցիդ, նույնիսկ մոտենալով ծառին, անհնար է տեսնել ցիկադներին. նրանք լավ լսվում են, բայց չեն երևում: Ցիկադների թողած թաղանթները՝ չորացրած և փոշի դարձրած, օգտագործում են չինական ավանդական դեղամիջոցներ պատրաստելիս:

² 巽而止, 蛊՝ «Քամին դեմ է առնում Լեռանը, նշանակում է Փորձանք կլինի». այս ասացվածքը Գու 蛊 ䷑ Փորձանք կոչվող 18-րդ հեկսագրամի մեկնությունից է: Նշանը կազմված է ներքևում՝ ներսի կողմից, Սյուն 巽 ䷸ Քամի և վերևում՝ արտաքին կողմից, Գեն 艮 ䷳ Լեռ տրիգրամներից: Քամին խորհրդանշում է փափկություն, շարժունություն, թեթևություն, ճկունություն, սահունություն (շարժմանը բնորոշ հատկություններ), Լեռը՝ կայունություն, ամրություն, ծանրություն, անդորր (անշարժությանը բնորոշ հատկություններ): Այս նշանով նկարագրվող իրադրությունը պատկերվում է որպես «փափուկ շարժում՝ անհաղթահարելի արգելքի դեմ առածի ներսում», «փափուկը դեմ է առնում ամուրին և չի կարողանում հաղթահարել» կամ «ծանրը, ամուրը կառուցված է փափուկի, թեթևի վրա և կարող է փուլ գալ», այսինքն՝ մեծ Աղետ կլինի: Այս ծայրահեղ դրության մեջ, գտնվելով ուժեղին զիջող թույլի վիճակում, Փորձանքը հաղթահարելու համար հարկավոր է վերամարմնավորվել, նորոգվել և շրջանցել Լեռը:

Գու հիերոգլիֆը 蛊 (մենք այն թարգմանել ենք Փորձանք, Աղետ) թունավոր միջատների հավաքական անվանումն է: Ըստ ավանդության՝ հնում մի քանի տարբեր թունավոր միջատների դնում էին անոթի մեջ և երկար ժամանակով թաղում հողում: Միջատները սկսում էին իրար ուտել, և վերջին, ողջ մնացածը հա-

մարվում էր ամենից թունավորը և նշանակվում էր հենց այդ հիերոգլիֆով:

³ Ծիան Վեյ (202-264 թթ.)՝ Շու թագավորության զորահրամանատար:

⁴ Թժանն Տաոծի (? - 436 թթ.)՝ Լիու Սոն դինաստիայի (420-479 թթ.) զորավար, մահապատժի է ենթարկվել դավաճանության կեղծ մեղադրանքով: Լիու Սոն դինաստիան Հարավային և Հյուսիսային դինաստիաների (420-589 թթ.) տարիներին Հարավային չորս դինաստիաներից առաջինն էր:

关门捉贼

[guān mén zhōu zéi]

Կողպել դոները ավազակին բռնելու համար

小敌困之。剥，不利有攸往。

Թույլ և աննշան հակառակորդին շրջափակիր և ոչնչացրու: Այստեղ Քայքայում նշանն է. նպաստավոր չէ այդպիսի հակառակորդի հետապնդումը:

【按语】捉贼而必关门，非恐其逸也，恐其逸而为他人所得也；且逸者不可复追，恐其诱也。贼者，奇兵也、游兵也，所以劳我者也。吴子曰：“今使一死贼，伏于旷野，千人追之，莫不泉视狼顾。何者？恐其暴起而害己也。是以一人投命，足惧千夫。”追贼者，贼有脱逃之机，势必死斗；若断其去路，则成擒矣。故小敌必困之，不能，则放之可也。

[Մեկնություն] Գողին բռնելու համար հարկավոր է դարպասները փակել. դա անում են ոչ թե որ նրա փախուստն է սարսափելի, այլ սարսափելի է այն, որ նրա փախուստը կարող է օգուտ բերել ուրիշներին: Իսկ եթե նա փախել է, չի կարելի հապճեպ հետապնդում կազմակերպել, պետք է զգուշանալ նրա սարքած դարպասից: Այդպիսի գողերը լրտեսներ են, հետախույզներ, հակառակորդի հասուկ զինվորներ, բոլոր նրանք, որոնք քայքայում և ուժասպառ են անում քո թիկունքը: Սուն Ծըն այսպես էր ասում. «Ենթադրենք՝ մենք մի լրտես-մահապարտ ենք ուղարկել, նա թաքնվել է վայրի դաշտում, իսկ թշնամու հազարավոր զինվորներ հետապնդում են նրան. միթե նրանք բուխ նման վախճանելով չեն նայի շուրջբոլորը, գայլերի նման երկչոտությամբ այս ու այն կողմ չեն նայի: Ինչո՞ւ: Որովհետև նրանցից յուրաքանչյուրը կզգուշանա, որ լրտեսը անսպասելի դուրս կգա դարասից և կսպանի իրեն: Բավական է մի մահապարտ, որ սարսափի մեջ գցի հազարավոր տղամարդկանց»: Եվ այսպես, ինչ վերաբերում է հետապնդելուն. եթե ավազակը հնարավորություն ունի հեռանալու, նա կպայքարի մինչև վերջ: Եթե նրան այդ հնարավորությունից զրկես, նա կդառնա քո որսը: Ուստի աննշան թշնամուն պետք է շրջափակել

և ոչնչացնել, եթե շրջափակել և ոչնչացնել չի հաջողվում, ապա թող հեռանա:

Պարզաբանումներ

Եթե տունդ գող է մտել, եթե հակառակորդը գաղտագողի քո տարածք է մտել, եթե քո շարքերում դավաճան է հայտնվել, հարկավոր է այնպես փակել ելքի և մուտքի բոլոր ուղիները, որ նա չկարողանա հեռանալ: Եվ եթե նա թույլ է, անհապաղ տեղում ոչնչացնել, իսկ եթե նրան հաջողվել է փախչել, իմաստ չկա հետապնդել. թանկ հաճույք է: Փախուստի ճանապարհներ չունեցող հուսահատ գողը դյուրին է բռնվում, իսկ փախչող գողը, որը փրկության հույս ունի և դուրս պրծնելու հնարավորություն է տեսնում, վերածվում է անկանխատեսելի ու վտանգավոր հակառակորդի:

1 23-րդ հեկսագրամի՝ Պո 剥 ䷖ Քայքայում, որը կազմված է Բուն 坤 ䷁ Երկիր, Հող և Գեն 艮 ䷳ Լեռ տրիգրամներից, հիմնական ասելիքն է՝ «առաջխաղացումը նպաստավոր չէ»՝ «剥，不利有攸往»: Լեռը Երկրի վրա ենթարկվում է քամիներին ու անձրևներին, արևայրոցին ու ցրտին, ուստի բնական է մշտական Քայքայումի և Կործանման ընթացքը, և հարթ տեղով գնացողի ճանապարհը խոչընդոտում է Լեռը: «Փոփոխությունների կանոնում» հեկսագրամի մեկնությունն ասում է. «剥，剥也。柔变刚也。“不利有攸往”，小人长也。顺而止之，观象也。君子尚消息盈虚，天行也。」 «Քայքայումը դա Ավերում է: Փափուկը կոշտի է վերածվում, նպաստավոր չէ հնարավոր առաջխաղացման համար, քանի որ անարժան մարդիկ առավելություն ձեռք կբերեն և կհաղթեն: Ազնվաբարո այրը հետևում է իրերի կարգին և հակառակվում է գործողությանը, մտահայտում է պատկերները: Ազնվաբարո այրը արժևորում է ավյունի զսպումը և դատարկը լցնելը. այդ գործողությունները համապատասխանում են երկնայինին»: Այսպիսով, հեկսագրամը խորհուրդ է տալիս հետևել ընդհանուր իրադրությանը, և միևնույն ժամանակ մնալ անգործության մեջ, որը տվյալ հնարքի դեպքում նշանակում է հրաժարվել հեռացող հակառակորդին հետապնդելուց, քանի որ այդպիսի հետապնդումը հղի է անարժան մարդկանց առավելություններ տալու վտանգով:

远交近攻

[yuǎn jiāo jìn gōng]

Բարեկամություն անել նրա հետ, ով հեռվում է,
հարձակվել նրա վրա, ով մոտակայքում է

形禁勢格，利从近取，害以远隔。上火下泽。

Երբ իրադրությունը բարդացված է խոչընդոտներով և սահմանափակումներ է դնում, անհրաժեշտ է օգուտ քաղել մոտակայքում գտնվողի հետ հակամարտությունից, մոտիկ գտնվողին շրջանցելով՝ հեռվում գտնվողի հետ հակամարտելը միայն կվնասի: Ըստ այն նշանի մեկնության, որի վերևում Կրակ է, ներքևում՝ Լիճ:

【按语】混战之局，纵横捭阖之中，各自取利。远不可攻，而可以利相结；近者交之，反使变生肘腋。范雎之谋，为地理之定则，其理甚明。

[Մեկնություն] Բոլորը բոլորի դեմ պատերազմական իրավիճակում, երբ կողմերից յուրաքանչյուրը խորամանկ, խելացի ծրագրեր է իրագործում, դաշինքներ են ստեղծվում և քանդվում, ամեն մեկը ձգտում է իր համար օգուտ քաղել: Հեռվում գտնվողի վրա չի կարելի հարձակվել, բայց հնարավոր է նրա հետ դաշինք ստեղծել: մոտիկ գտնվողի հետ մի դաշինքում միավորվելով՝ վտանգվում ես մոտակայքում անախորժություն ստանալու: Ֆան Սուի² խորամանկ ծրագրի հիմքում հենց աշխարհագրական դիրքն էր, նրա հետորեն մշակած ծրագիրը հիանալի էր:

Պարզաբանումներ

Հնարքի համաձայն՝ պետք է բարեկամություն անել հեռվում գտնվողի հետ, բայց հակազդել մոտակայքում գտնվողին: Աշխարհագրորեն և գաղափարական առումներով քեզանից հեռու մեկի

հետ թշնամանալու իմաստ չկա. նա ոտնձգություն չի անի հեռավոր տարածքների նկատմամբ, չի հակազդի իրեն օտար գաղափարներին: Նման մեկի հետ թշնամանալը ծանր բեռ է և որևէ օգուտ չի խոստանում: Հակառակը, նրա հետ պետք է դաշնակցել՝ դուրս գալով մոտակայքում գտնվողի դեմ, քանի որ վերջինիս հետ միշտ շահերի բախում ու տարածայնություններ կան: Նա, ում հետ ստիպված տարածք կամ շահեր ես կիսում, միշտ էլ ավելի վտանգավոր է, քան հեռվում գտնվողը:

¹ Խոսքը 38-րդ հեկսագրամի մասին է՝ Քուի 睽 ䷥ Գժտություն, Անհամաձայնություն, որը կազմված է վերևում Լի 离 ䷄ Կրակ (խորհրդանշում է լույս) և ներքևում Տուի 兑 ䷹ Լիճ (խորհրդանշում է ուրախություն, խնդություն) տրիգրամներից: «Փոփոխությունների կանոնում»՝ այս նշանի մեկնության մեջ, ասվում է. «睽，火动而上，泽动而下。二女同居，其志不同行。说而丽乎明，柔进而上行，得中而应乎刚，是以小事吉。天地睽而其事同也。男女睽而其志通也。万物睽而其事类也，睽之时用大矣哉»՝ «Գժտություն՝ կրակը, ձգտում է վերև, լիճը՝ ներքև: Երկու կին ապրում են մեկ տանիքի տակ, բայց նրանց ձգտումները տարբեր են, լույսն արտացոլվում է ուրախության մեջ, փափկությունը դրսևորվում է դեպի վեր շարժման մեջ, հասնում է մեջտեղին ու կարծրանում. դա փոքր գործեր իրագործելու երջանկությունն է: Երկինքն ու Երկիրը հակադրված են, բայց ծառայում են մի գործի, կինն ու տղամարդը հակադրված են, բայց նրանց ձգտումները մեկն են: Գոյի բոլոր էությունները հակադրված են, բայց նմանեցված, Գժտության կիրառության նշանակությունը հիրավի մեծ է»: Քուի հեկսագրամը արտահայտում է քայքայում, բաժանություն, հակառակում: Կրակը հուր է, հրի լեզուները վեր են ձգտում: Լիճը ջրի կուտակում է, ջուրը միշտ ներքև է ձգտում: Հուրն ու Ջուրը հակադրվում են միմյանց, ձգտում են իրար հակառակ ուղղությամբ, ինչպես մի տանիքի տակ ապրող, բայց տարբեր բաների ձգտող երկու կանայք: Սակայն հեկսագրամում ընդհատվող գիծը վերածվում է հոծ գծի և այդպես կրկնապատկվում է: Եվ դա նշանակում է, որ երկու ծայրահեղություններն էլ արտացոլվում են միմյանցից (Կրակով արտահայտված լույսը արտացոլվում է

Լճով արտահայտված ուրախության մեջ), և նրանց ճգտումները կարող են փոխարացնել միմյանց, ինչպես, օրինակ՝ Երկինքն ու Երկիրը, հակադրված լինելով հանդերձ, մեկ ամբողջության մաս են, ծառայում են մեկ գործի: Ինչպես և ողջ նյութականը, չնայած իր բազմակերպությանը, գոյություն ունի փոխադարձ նմանեցման մեջ: Ուստի ինչպես խորհուրդ է տրվում «Փոփոխությունների կանոնում», Գժտության իրավիճակում «ազնվաբարո այրը բազմազանության մեջ պետք է միասնություն փնտրի» (君子以同而异, բառացի՝ ազնվաբարո այրը պետք է տարբերվի միօրինակության մեջ): Այսպիսով, Գժտությունը երջանկություն է կանխագուշակում փոքր գործերի իրագործման մեջ, այսինքն՝ նույնիսկ ակնհայտ հակադիր ճգտումների դեպքում միշտ կան շփման փոքր, բայց ամեն դեպքում ընդհանուր և բացահայտում պահանջող կետեր, քանի որ դրանց նշանակությունը մեծ է:

² Ֆան Սուի (մ.թ.ա. ? – 225 թթ.)՝ Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջանի քաղաքական գործիչ, Ցին թագավորության առաջին նախարար: Ըստ ավանդության՝ «Ընկերություն անել նրա հետ, ով հեռվում է, հարձակվել նրա վրա, ով մոտակայքում է» հնարքի հեղինակն է: Գործելով ըստ Ֆան Սուիի խորհուրդների՝ Ցին թագավորության տիրակալը՝ Ցին Շըխուանը, մի քանի տարվա ընթացքում կարողացավ նվաճել իշխանական բոլոր կալվածքները և մ.թ. 221 թ. ողջ Չինաստանը միավորեց իր տիրապետության տակ:

ՀՆԱՐՔ 24

假道伐虢

[jiǎ dào fá Guó]

Օգտվել թույլ հարևանի տարածքից ուժեղ թշնամու վրա հարձակվելու համար

两大之间，敌胁以从，我假以势。困，有言不信。

Թույլը սեղմված է իմ և հակառակորդի միջև, հակառակորդը սպառնում է տիրանալ թույլին, անհրաժեշտ է առիթից օգտվել և թույլին օգնելու անվան տակ առավել ձեռնառու դիրքեր զբաղեցնել:

«Սպառում» նշանի իմաստը այս է. կլինեն խոսքեր, բայց դրանք ճշմարիտ չեն:

【按语】假地用兵之举，非巧言可诳，必其势不受方之胁从，则将受双方之夹击。如此境况之际，敌必迫之以威，我则诳之以不害，利其幸存之心，速得全势，彼将不能自阵，故不战而灭之矣。如：晋假虞道于虞以伐虢，晋灭虢，虢公醜奔京师，师还，袭虞灭之

[Մեկնություն] Սեփական ուժերը տեղակայելու համար հարևանի տարածքը չես կարող զբաղեցնել սոսկ լավ մոտաված ստի և նրբագեղ խոսքի օգնությամբ: Պետք է հարևանի վիճակն այնպիսին լինի, որ եթե նա չզիջի ուժեղ կողմերից մեկի սպառնալիքներին, ապա ստիպված կլինի երկուսի կողմից էլ հարձակման ենթարկվելու: Այդպիսի իրավիճակում հակառակորդը թույլին կհարկադրի սպառնալիքներով, իսկ ես այդ ընթացքում մասս չհասցնելու մասին սուտ պատմություններով պետք է համոզել նրան՝ անուցելով նրա ինքնապահպանության զգացումը և կենդանի մնալու ցանկությունը, և դրանով իսկ արագորեն կստանամ ամբողջ իրավիճակի վերահսկողությունը: Հետագայում թույլը չի կարողանա պաշտպանություն կազմակերպել, և առանց կոպի կենթարկվի ինձ: Ինչպես, օրինակ՝ Ծին թագավորության տիրակալը զորանց պահանջեց Ցու թագավորությունից՝ Գուո թագավորությունը՝ նվաճելու համար: Գուո թագավորությունը նվաճե-

լուց և նրա տիրակալի մայրաքաղաք փախչելուց հետո, Ծին թագավորության քանակը վերադարձի ճանապարհին գրավեց նաև Յու թագավորությունը:

Պարզաբանումներ

Մեծաթիվ կողմերի միջև փոխադարձ հակամարտության դեպքում հարկ է ընտրել թույլին և նրան կանգնեցնել ընտրության առաջ. կամ դաշնակցում է քեզ հետ, կամ էլ նվաճվում է մեկ այլ հակառակորդի կողմից: Միավորվելով այդպիսի թույլ դաշնակցի հետ՝ պետք է օգտվել նրա կարողություններից և միջոցներից, պետք է հաղթել ընդհանուր թշնամուն, ապա նույն այդ միջոցները անհապաղ կիրառել դրանք տրամադրած «դաշնակցի» դեմ:

¹ 47-րդ հեկսագրամը՝ 夬 ䷪ կազմված է ներքևում Բան 坎 ䷜ Ջուր տրիգրամից, որը խորհրդանշում է «վտանգ, ռիսկ», և վերևում Տուի 兌 ䷹ Լիճ տրիգրամից, որը խորհրդանշում է «ուրախություն, խոսք»: Նշանը բացատրվում է որպես Սպառում. Լիճը վերևում է, իսկ Ջուրը՝ ներքևում, այսինքն՝ Ջուրը հոսում է ներքև, Լիճը կորցնում է ջուրը, այն սպառվում է: Հեկսագրամի մեկնությունն ասում է. «夬: 亨: 贞, 大人吉, 无咎: 有言不信»՝ «Սպառում իրավիճակում պահանջվում է տոկունություն: Մեծ մարդուն՝ երջանկություն, իսկ պարսավանք չի լինի, կլինեն խոսքեր, բայց խոսքերը խաբուսիկ են»: Այսինքն, Սպառումը դժվարություն է խորհրդանշում, որի հաղթահարման համար ջանքեր են պետք, և մեծ մարդը կհասնի իր երջանկությանը: Ուստի նկարագրվող իրադրության մեջ, երբ հնարավոր է կիրառել տվյալ հնարքը, նպատակին հասնելու համար պահանջվում են ոչ միայն քաղցր և կեղծավոր խոսքեր (թույլ հարևանի տարածքը զբաղեցնելու համար), այլև միաժամանակ թույլ հարևանին սպառնացող իրական վտանգ, որը պատկերված է այստեղ Ջուր տրիգրամով:

² Գարնան և Աշնան ժամանակաշրջանում գտնվում էր Շանսի նահանգի ներկայիս Փինսյու գավառի հյուսիս-արևելյան մասում: Մ.թ.ա. 655 թ. նվաճվել է Ծին թագավորության կողմից:

³ Գարնան և Աշնան ժամանակաշրջանում գտնվում էր ներկայիս Խընան նահանգի Սինյան քաղաքի տարածքում: Մ.թ.ա. 658 թ. նվաճվել է Ծին թագավորության կողմից:

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

并战计

ԹԱՔՆՎԱԾ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀՆԱՐՔՆԵՐԻ



此图係
并战计
之图式
也

偷梁换柱

[tōu liáng huàn zhù]

Գողանալ հեծանները և թաքուն փոխել հենարանները

頻更其陣，抽其勁旅，待其自敗，而后乘之，曳其輪也。

Հարկադրել նրան անընդհատ փոխել իր զորաշարը, ցրել հարվածային ուժերը, սպասել, մինչև նա ինքը պարտություն կկրի, և օգտվել դրանից: Նրա անիվի մեջ փայտ խցկե՞ր:

【按語】陣有縱橫，天衡為梁，地軸為柱。梁柱以精兵為之，故觀其陣，則知精兵之所在。共戰他敵時，頻更其陣，暗中抽換其精兵，或竟代其為梁柱；勢成陣塌，遂兼其兵。并此敵以擊他敵之首策也。

[Մեկնություն] Հարձակման ժամանակ զորաշարը կազմված է երկայնակի և լայնակի մասերից: Այն, ինչ անվանում են «երկնային հավասարակշռության ստանդը», կարող է համարվել լայնակի մասը, այսինքն՝ «հեծանը», իսկ «երկրային ստանդը»՝ զորքի երկայնակի մասն է, այսինքն՝ «շարայունը»: Ջորաշարի երկայնակի և լայնակի մասերում գտնվում են քանակի լավագույն զինվորները, ուստի հետևելով հակառակորդի զորաշարին, կարելի է որոշել, թե որտեղ են կենտրոնացված նրա ընտրյալ ուժերը: Ընդհանուր թշնամու դեմ դաշնակցի հետ ռազմական համատեղ գործողությունների իրավիճակում դաշնակցի զորաշարի հաճախակի փոփոխությունը, ընտրյալ մասերի դիրքերի աննկատ փոխելն ու տարածումը հենց այն են, ինչը նշանակում ենք «գողանալ հեծանները և թաքուն փոխել այրները» պատկերի միջոցով: Եթե մտադրությունը հաջողվի, և դաշնակցի զորաշարվածքը քանդվի, կարելի է նրա զորքը միավորել սեփականի հետ: Մեկտեղել սեփական զորքը դաշնակից-հակառակորդի զորքի հետ՝ մեկ այլ հակառակորդի վրա հարձակվելու համար. սա հենց լավագույն մարտավարությունն է:

«Գողանալ հեծանները և թաքուն փոխել հենարանները» հակառակորդի կամ այն ժամանակավոր դաշնակցի «տանը», որը՝ դաշնակիցը, կարող է դառնալ հակառակորդ: Հնարքը կիրառվում է, որպեսզի հակառակորդի կամ ժամանակավոր դաշնակցի ուժը՝ կառույցը, շարունակի ամուր և հաստատուն թվալ, բայց քամու նվազագույն շնչից փուլ գա «թղթե տնակի» նման: Ցանկացած ուժ կամ առարկա ունի ձև և բովանդակություն, արտաքին տեսք և ներքին կառուցվածք: Ներսում այն է, ինչ տեսանելի չէ, արտաքուստ՝ այն, ինչ անմիջապես նկատվում է: Հարկավոր է ներսի հատվածին գաղտնաբար այնպիսի վնաս հասցնել, որը միանգամից տեսանելի չլինի, կամ նենգափոխել նրա էությունը, բովանդակությունը, անփոփոխ թողնելով արտաքին տեսքը, դրսևորումները: Այդ դեպքում իրը կամ կառույցը, արտաքուստ պահպանելով իր նախկին ձևը, իրականում ներքուստ կդառնա թույլ, կհայտնվի կախյալ վիճակում:

¹ Կիրառվում են այն չեզոք ուժերի դեմ, որոնց դեմ բացահայտ հակամարտություն չկա, կամ այն դաշնակից ուժերի, որոնք կարող են վերածվել հակառակորդի:

² Բառացի՝ «անիվը հետ քաշել, 曳其轮», այսինքն՝ գտնվելով սայլը հետևից հրողի, նրա շարժմանն օգնողի դիրքում, այդուհանդերձ, սայլը ոչ թե հրել դեպի առաջ, այլ ընդհակառակը՝ քաշել դեպի հետ՝ դանդաղեցնելով սայլի շարժման արագությունը: Այս արտահայտությունը հանդիպում է 64-րդ՝ Վեյծի 未济 ䷿ Դեռ վերջը չէ, Դեռ չի կատարվել հեկսագրամի երկրորդ գծի, և 63-րդ՝ Ծիծի 既济 ䷾ Արդեն վերջն է, Արդեն կատարվել է հեկսագրամի առաջին գծի մեկնություններում: Պատկերման առումով այս երկու հեկսագրամները մեկը մյուսի շուտ տված նմանօրինակն են: 64-րդ հեկսագրամը կազմված է տարբեր կերպ ուղղորդված տրիգրամներից. վերևում Լի 离 ䷄ Կրակ, ներքևում Քան 坎 ䷜ Ջուր: Հրի լեզուները ձգտում են վեր, ջուրը միշտ ձգտում է վար: «Փոփոխությունների կանոնում» եղած մեկնության համաձայն՝ 64-րդ հեկսագրամը նշանակում է իրավիճակ, երբ «գործը դեռ չի

իրականացվել, բայց կարող է հաջողությամբ իրականացվել. օգուտ ստանալու համար ընդամենը որոշ չափով ջանասիրություն և զգուշություն է հարկավոր»: Մեկնությունն ասում է. «未济: 亨; 小狐汔济, 濡其尾, 无攸利»՝ «Դեռ վերջը չէ: Խոստանում է իրականացում, աղվեսիկը գրեթե հասել է հակառակ ափը, եթե պոչիկը թրջի, օգուտ չի լինի»: Ուստի պետք է «մի քիչ դանդաղեցնել շարժումը», առավել զգուշավոր լինել, առանց հետ նայելու առաջ չնետվել. այսինքն՝ պետք է «անիվի մեջ փայտ խրել, 曳其轮 贞吉». «արգելակիր՝ անիվները, երջանկությունը տոկունության մեջ է»: 63-րդ հեկսագրամը՝ «Արդեն վերջն է» կամ «Արդեն կատարվել է», որը, ինչպես ասվեց, «Դեռ վերջը չէ» հեկսագրամի շուտ տված նմանօրինակն է, կազմված է նույն, բայց հակառակ դիրքեր զբաղեցնող տրիգրամներից, ինչը նրանց դարձնում է մեկը մյուսի դեմ ուղղված: Կրակի վեր շարժումը հնարավոր չէ. այն բախվում է քրին, ջուրը ձգտում է ներքև, բայց բախվում է կրակին: Այսպիսով, երկու էություններ սահմանափակում են միմյանց, ձեռք է բերվում հավասարակշռություն, ուստի և գործը «արդեն իրականացվել է»: Սակայն հավասարակշռությունը կարող է հեշտությամբ խախտվել, և դրա հետևանքով երկու էություններից մեկը կանհետանա. կամ կրակը կգոլորշիացնի ջուրը, կամ ջուրը կհանգցնի կրակը: 63-րդ հեկսագրամի մեկնությունն ասում է. «既济: 亨小, 利贞: 初吉终»՝ «Արդեն վերջն է. փոքր իրագործում, տոկունությունը նպաստավոր է, սկզբում երջանկությունն է, կանգ առնելու դեպքում անկարգություն կտիրի»: Ուստի, այստեղ պահանջվում է զգուշություն, անհրաժեշտ է «曳其轮, 濡其尾, 无咎»՝ «արգելակել անիվները, եթե աղվեսիկը պոչիկը թրջի, պարսավանք չի լինի», այսինքն՝ գործել շրջահայաց՝ առանց շտապելու:

指桑骂槐

[zhǐ sāng mà huái]

Նկատի ունենալով թթենին, հայհոյել բակլան

大凌小者，警以诱之。刚中而应，行险而顺。

Ավագը, որ ուզում է կրտսերին հնազանդեցնել, պետք է նրան իր հետևից տանի կանխազգուշացումների միջոցով:

Հաստատակամությունը արձագանք կունենա, վտանգի առաջ՝ հնազանդություն կլինի՝:

【按语】率数未服者以对敌，若策之不行，而利诱之，又反启其疑，于是故为自误，责他人之失，以暗警之。警之者，反诱之也。此盖以刚险驱之也。或曰：此遣将之法也。

[Մեկնություն] Եթե թշնամու առաջ ստորադրյալները փութաջանորեն չեն ենթարկվում հրամանատարին և ողջախոհ չեն, նրանց անձնապես շահագրգռելու փորձերը ավելի մեծ կասկածներ կհարուցեն: Ուստի, ավելի լավ է միտումնավոր սխալ հաշվարկ անել և մեղքը գցելով շրջապատից որևէ մեկի վրա՝ պատժի ենթարկել նրան. մյուսները դա կրնկալեն որպես թաքնված կանխազգուշացում: Նախազգուշացնել. հենց սա է ստորադրյալներին խթանում ենթարկվել հրամաններին: Նաև ասում են, որ սա նորանշանակ կամ նորեն գորահրամանատարի կողմից կիրառվող միջոց է:

Պարզաբանումներ

Մեկին հարգալից դարձնելու, զգուշացնելու, վախեցնելու և հնազանդեցնելու, նրան որոշակի ցանկալի տրամադրություն թելադրելու նպատակով անհրաժեշտ է ցուցադրաբար խրատել կամ պատժել մյուսին: Այսինքն՝ ուղղակիորեն կշտամբելով մեկին՝ անուղղակիորեն ներագդել մյուսի վրա, պատժել մեկին՝ խրատելով մյուսին, «նկատի ունենալով թթենին՝ հայհոյել բակլային»:

1 刚中而应，行险而顺՝ այս արտահայտությունը Շը Բի ䷗ Ջորք 7-րդ հեկսագրամի մեկնությունից է, այն կազմված է Բան Բա ䷖ Ջուր և Բուն Կո ䷁ Հող տրիգրամներից: Հեկսագրամը ներկայացնում է «ջուր՝ հողի տակ» պատկերը: Ստորերկրյա ջուրը, ինչպես ասվեց, համարվում էր անսպառ պաշար այնպես, ինչպես գյուղացիությունն էր համարվում անսպառ պաշար բանակի ձևավորման համար. այստեղից էլ նշանի անվանումը՝ Ջորք: Հողը խորհրդանշում է զիջողականություն, համբերություն, ըմբռնողություն, իսկ Ջուրը՝ վտանգ: Ըստ դրա, ռազմավարը, վտանգի հանդիպելով, զորքից զիջողականություն և հնազանդություն կստանա, ինչը, սակայն, նրանից կպահանջի դրսևորել հաստատակամություն, ամրություն, որը նշանակվում է միակ հոծ, այսինքն՝ կոշտ գծով: «Փոփոխությունների կանոնում» հեկսագրամի մեկնությունն ասում է. «Բի, Բի, Բի, Բի, Բի, Բի. 能以众正，可以王矣。刚中而应，行险而顺，以此毒天下，而民徙之，吉又何咎矣»՝ «Ջորքը զանգվածներ են: Տոկունությունը բարեպաշտություն է: Հսարավոր է զանգվածները օգտագործել բարեպաշտության հասնելու համար. հնարավոր է կայսր դառնալ: Ամրության մեջ է համապատասխանությունը. հանդիպելով վտանգի՝ հնազանդություն կստանա: Այս կերպ կնվաճես Ընդերկնայինը, իսկ ժողովուրդը կհետևի քեզ: Դա երջանկություն է, պարսավանք չի լինի. էլ որտեղից լինի»:

假痴不癡

[jiǎ chī bù diān]

Հիմար ձևանայ, բայց չլինել անխոհեմ

宁伪作不知不为, 不伪作假知妄为。静不露机, 云雷屯也。

Լայ է ձևացնել, թե ոչինչ չգիտես և ոչինչ չես անում, քան ձևացնել, թե իբր ամեն ինչ գիտես և գործես հասցնայ: Նա, ով հանգիստ է, չի բացահայտում իր մարտավարությունը: Որոտ երկնքում. սա Դժվարություն նշանն է:

【按语】假作不知而实知, 假作不为而实不可为, 或将有所为。司马懿之假病昏以诛曹爽, 受巾帼假请命以老蜀兵, 所以成功; 姜维九伐中原, 明知不可为而妄为之, 则似痴矣, 所以破灭。兵书曰: “故善战者之胜也, 无智名, 无勇功。” 当其机未发时, 静屯似痴; 若假痴, 则不但露机, 则乱动而群疑。故假痴者胜, 假痴者败。或曰: 假痴可以对敌, 并可以用兵。宋代, 南俗尚鬼。狄青征侂智高时, 大兵始出桂林之南, 因佯祝曰: “胜负无以为据。” 乃取百钱自持, 与神约, 果大捷, 则投此钱尽钱面也。左右谏止, 倘不如意, 恐沮师, 青不听。万众方耸视, 已而挥手一掷, 百钱皆面。于是举兵欢呼, 声震林野, 青亦大喜; 顾左右, 取百钉来, 即随钱疏密, 布地而帖钉之, 加以青纱笼, 手自封焉。曰: “俟凯旋, 当酬神取钱。” 其后平邕州还师, 如言取钱, 幕府士大夫共视, 乃两面钱也。

[Մեկնություն] Հարկավոր է ձևացնել, թե չգիտես, բայց իրականում իմանայ: Հարկավոր է ձևացնել, թե ոչինչ չես նախաձեռնում չինացության պատճառով, մինչդեռ իրականում ոչինչ չես նախաձեռնում գործողությունների աննպատակահարմարության պատճառով կամ էլ ժամանակ ես ընտրում գործողություններ իրականացնելու համար: Մրմա Ցին, հիվանդ և խելակորույս ձևանալով, հաջողեց կործանել Ցաո Շուաննին²: Մի անգամ էլ, երբ որպես ստորացուցիչ նվեր՝ կանացի շալ ստացավ, նա այն պատրվակով, որ իբր հարձակման համար իրեն հարկավոր է

տիրակալի թույլությունը, հոգնեցրեց հակառակորդի՝ Շու թագավորության զորքերին և դրանով իսկ հաղթանակ տարավ³: Ծիան Վեյն⁴ էլ ինն անգամ արշավեց Միջին դաշտավայր, թեև քաջ գիտակցում էր, որ արշավներ ձեռնարկելը նպատակահարմար չէ: Նա գործեց անխոհեմ, և քանի որ դա միայն նման էր հիմար ձևանալուն, պարտություն կրեց: «Բազմարվեստի մասին» տրակտատում գրված է. «Հմտորեն հաղթանակներ տարած գորահրամանատարը փառք չէր վաստակում ո՛չ իր խելքի, ո՛չ էլ քաջագործությունների համար»: Քանի դեռ չկա գործելու հնարավորություն, հարկավոր է հանդարտություն պահպանել (ինչպես նկարագրված է Դժվարություն նշանով) և հիմար ձևանալ. եթե խելք ձևանաս, ապա ոչ միայն կբացահայտես քո մտադրությունները, այլև չմտածված գործողություններ ձեռնարկելով՝ համընդհանուր կասկածանքի տեղիք կտաս: Ուստի նա, ով հիմար է ձևանում, հաղթում է, իսկ նա, ով խելք է ձևանում, պարտություն է կրում: Նաև ասում են, որ հիմար ձևանալու մարտավարությունը կարելի է կիրառել ոչ միայն հակառակորդին դիմադրելիս, այլև զորքերը ղեկավարելիս: Սոն դինաստիայի օրոք Հարավի բնակիչները առանձնանում էին իրենց սնահավատությամբ և ոգիների էին երկրպագում: Երբ Տի Ցինն⁵ զորահրամանատարը բանակով գնացել էր հնագանդեցնելու Նոն Ջրգաոյին⁶, հասնելով Գուիլինի⁷ հարավային շրջանը, ոգիներին աղոթք արեց և ձևացնելով ասաց. «Զգիտեմ՝ հնարավոր կլինի այս անգամ հնագանդեցնել հարավային բարբարոսներին»: Այդժամ նա վերցրեց հարյուր հատ մետաղադրամ և ոգիների հետ այսպես պայմանավորվեց. «Եթե այս հարյուր մետաղադրամները զցեմ, և բոլորն ընկնեն երեսը վեր, մեծ հաղթանակ կլինի»: Խորհրդակամները աջուձախ սկսեցին խորհուրդներ տալ, որ այդ բանը չանի. չէ որ, եթե մետաղադրամները ընկնեին ուզածին հակառակ, զորքում խուճապ կստացանար: Բայց Տի Ցինը չսեց նրանց: Հազարավոր զինվորներ շունչները պահած սարսափով նայում էին այդ գործողությանը: Ջորահրամանատարը ձեռքը թափ տալով դրամները վեր զցեց, և բոլորն ընկան՝ երեսը վեր: Այդ ժամանակ ողջ զորքը պայթեց հովտով մեկ արձագանքվող ուրախության բացականչություններով: Տի Ցինը նույնպես ուրախացավ, ապա իր խորհրդակամներին հրամայեց հարյուր մեխ բերել և դրամները խիել գետնին⁸

այն տեսքով, ինչպես որ ընկել էին, ծածկել դրանք մետաքսի կտորով, և իր ձեռքով կնքելով՝ ասաց. «Երբ հաղթանակից կվերադառնանք, նվերներ կբերենք ոգիներին զոհելու համար, իսկ այս դրամները կվերցնենք»: Փայլուն հաղթանակ տարած բանակը վերադարձին, ինչպես և ասվել էր, հետ եկավ՝ մետաղադրամները վերցնելու, և միայն այդ ժամանակ խորհրդականներն ու ազնվաբարո այրերը նկատեցին, որ դրամները երկու կողմից էլ նույն երեսն ունեին:

Պարզաբանումներ

Հնարքի հիմնական նպատակն այն է, որ որևէ գործողություն ձեռնարկելու հանդեպ հետևողականորեն դրսևորվի շինծու անճարակություն, անշահագրգիռ կամ ժխտողական վերաբերմունք: Սրա շնորհիվ հակառակորդի աչքում միտումնավոր նվազեցնում են կարողություններդ, արժանիքներդ և ներուժդ, թաքցնում են իրական մտադրություններդ՝ տգետ և անարժան հակառակորդի տպավորություն ստեղծելով:

¹ «Դժվարություն» նշանը դա Ջուն 屯 ䷂ 3-րդ հեկսագրամն է, կազմված է ներքևում Ջեն 震 ䷲ Որոտ, Ամպրոպ և վերևում Բան 坎 ䷜ Ջուր տրիգրամներից: Որոտը առաջ շարժվելու, ընդհանրապես տիեզերքի խթանող շարժման խորհրդանիշն է, սա մեծ տարածությունից լսվող ազդանշան է, որը գործողություններում աչալրջության, բծախնդրության, ներքին հանգստության կոչ է անում: Ջուրը, խորհրդանշում է վտանգ, ռիսկ, գուգակցվելով Որոտին, ներկայանում է ամպի տեսքով, որը պետք է պարպվի որպես անձրև, այսինքն՝ ջուր: Որոտը գրգիռ է, որը խթանում է շարժումը, իսկ Ջուրը, խոնավացնելով հողը, նպաստում է աճին: Ամպը Որոտի հետ կանխագուշակում է ամպրոպի սկիզբը, իսկ ամպրոպը՝ արագընթաց աճի սկիզբը, կյանքի սկիզբը: Հատկանշական է, որ Ջուն հիերոգլիֆը 屯 իր հերթին պատկերում է հողից դուրս եկող ծիրը և խորհրդանշում է սկզբնական աճ: Ջունը հեկսագրամների համակարգում թվով երրորդն է: Եթե առաջին

երկուսը Երկինքն ու Երկիրն են, Հայրն ու Մայրը, ապա երրորդը՝ ծնվող Սկիզբն է: Սակայն սկիզբը միշտ դժվար է լինում, այստեղից էլ հեկսագրամի անվանումը՝ Դժվարություն: 3-րդ հեկսագրամով նկարագրվող իրավիճակը Սկզբի Դժվարությունն է. իրավիճակը պահանջում է ինքնատիրապետում և կարգապահություն, պահանջվում է այնպիսի գործողությունների իրագործում, որոնք պետք է լինեն ժամանակին և ողջախոհ:

² Սըմա Յի (179–251 թթ.)՝ Վեյ թագավորության հայտնի ռազմական և քաղաքական գործիչ: Տիրակալի մահից հետո՝ գահի մանկահասակ ժառանգորդի օրոք, Ցաո Շուաննի հետ (?–249 թթ.) նշանակվեց թագավորության ժամանակավոր կառավարիչ: Ինչպես հաճախ պատահում է պատմության մեջ, ժամանակավոր կառավարիչները իշխանության համար սկսեցին պայքարել միմյանց դեմ: Սըմա Յին հիվանդ և խելակորույս ծերուկ ձևանալով, թմրեցրեց Ցաո Շուաննի զգոնությունը, որն էլ, համոզված լինելով, որ իր իշխանությանը ոչինչ չի սպառնում, մեկնեց մայրաքաղաքից՝ նախնիների շիրիմներին զոհ մատուցելու: Օգտվելով Ցաո Շուաննի բացակայությունից՝ Սըմա Յին հեղաշրջում կատարեց և տիրեց իշխանությանը: Ցաո Շուաննը խոստացավ չհակառակվել Սըմա Յիին այն երաշխավորությամբ, որ ինքն ու իր ընտանիքը կպահեն իրենց կարգավիճակը: Սակայն մայրաքաղաք վերադարձին Ցաո Շուաննը գերեվարվեց, և ի վերջո նրան ու նրա ողջ ընտանիքին կեղծ դավաճանության մեղադրանքով դատապարտեցին մահվան: Այս միջադեպը Չինաստանի պատմության մեջ է մտել որպես Խոռվություն Գաոփիննի գերեզմաններում:

³ Եռաթագավորության շրջանում (190–280 թթ.) Վեյ թագավորության բանակը՝ Սըմա Յիի գլխավորությամբ, թշնամու տարածքում դիմադրում էր Շու թագավորության բանակին, որը գլխավորում էր Ջուզը Լիանը: Երկու բանակներն էլ պաշտպանական դիրքեր զբաղեցրին և սպասում էին հակառակ կողմի հարձակմանը: Դիմակայությունը ձգվեց 100 օրից ավելի, որի ընթացքում Ջուզը Լիանը բոլոր միջոցներով ձգտում էր հարձակման դրդելու Սըմա Յիին: Այդ նպատակով նա Սըմա Յիին անգամ կանացի շալ ուղարկեց՝ ակնարկելով, որ Սըմա Յին վախկոտ է, վախենում է հարձակվելուց: Վեյի սպաները ցասման մեջ էին, բայց Սըմա Յին սադրանքի չտրվեց և հանգստացրեց նրանց՝

ասելով, որ հարձակման համար պետք է տիրակալի օրհնությունը ստանա: Այդ ընթացքում Ջուզը Լիանն անկողին ընկավ և հիվանդությունից մահացավ: Նրա մահվան հետևանքով Շուի զինվորները լքեցին ճամբարը և սկսեցին նահանջել, իսկ Սըմա Յիին մնաց միայն թշնամուն հետապնդել: Թե ինչպես ավարտվեց հետապնդումը, տես 21-րդ հնարքը:

⁴ Ծիան Վեյ (202-262 թթ.)՝ Եռաթագավորության շրջանում Շու թագավորության զորահրամանատար, 240-262 թթ. ղեկավարել է տասնմեկ արշավներ Վեյ թագավորության դեմ, որոնք բոլորն էլ անհաջող են եղել: Ռազմական արշավները սպառեցին Շու թագավորության ի սկզբանե սահմանափակ ուժերը, և փաստացի հանգեցրին նրա կործանմանը 263 թ.: Ժողովրդի հիշողության մեջ և «Եռաթագավորություն» միջնադարյան վեպում Ծիան Վեյի ռազմական արշավանքները անվանվում են «Ինը արշավանքներ Միջին դաշտավայր», թեև իրականում արշավանքները տասնմեկն էին, իսկ ճակատամարտերն էլ տեղի էին ունեցել Միջին դաշտավայրից բավական հեռու վայրերում:

⁵ Տի Ցինն (1008-1057 թթ.)՝ զորահրամանատար Սոն դինաստիայի օրոք:

⁶ Նոն Ջըգաո (Nungz Ciqgaoh – ջուաններեն, 1025 – մոտ. 1055 թթ.)՝ Չինաստանում ջուանն և Վիետնամում բունու ժողովուրդների ազգային հերոս:

⁷ Ներկայումս Գուիլինը ՉԺՀ-ի Գուանսի-Ջուանն ինքնավար շրջանում է:

⁸ Չինաստանում հնուց և մինչև XIX դ. տարածված էին շրջանակաձև մետաղադրամներ, որոնք կենտրոնում ունեին քառակուսի կամ կլոր անցք:

上屋抽梯

[shàng wū chōu tī]

Տանել զցել տանիքը և հեռացնել աստիճանը

假之以便，唆之使前，断其援应，陷之死地。遇毒，位不当也。

Հակառակորդի համար դյուրին հաղթանակի պատրանք ստեղծել, դրդել նրան առաջ շարժվելու, կտրել նահանջի ճանապարհները՝ փակելով նրան մահացու ծուղակում: «Թույնի հանդիպես»՝ չգուգակցման իրավիճակ է:

【按语】唆者，利使之也。利使之而不先为之便，或犹且不行。故抽梯之局，须先置梯，或示之以梯。如：慕容垂、姚萇诸人怂秦苻坚侵晋，以乘机自起。

[Մեկնություն] Դրդումը հակառակորդին օգուտի ակնկալիքով գայթակղելն է: Սակայն եթե դրդես օգուտի ակնկալիքով՝ չստեղծելով այդ օգուտը դյուրին ստանալու պատրանքը, հնարավոր է՝ բախվես կասկածի կամ անգամ մերժման, և ծուղակը չի հաջողվի: Ուստի «աստիճանը հեռացնելու» հնարավորություն ունենալու համար հարկավոր է սկզբում այն անհրաժեշտ տեղում դնել, կամ էլ ցույց տալ մի բան, որը կարող է որպես «աստիճան» գործածվել: Այնպես, ինչպես, օրինակ՝ վարվեցին Մուժոն Չուին և Յաո Չաննը, երբ Ֆու Շիենին դրդեցին հարձակվելու Ծինի վրա, և դրանից օգտվելով՝ նրանցից յուրաքանչյուրը իր համար թագավորություն ստեղծեց ու գահ բարձրացավ:

Պարզաբանումներ

Հնարքի հիմնական նպատակն այն է, որ դիմացինիդ խաբելով զցես ծուղակը՝ կտրես նահանջի ճանապարհները, իսկ առաջխաղացման ճանապարհին վերացնես խոչընդոտները. դրա շնորհիվ հակառակորդը շարժվում է հենց ռազմավարի ենթա-

դրած ուղղութեամբ: Որոշ տարբերություն կա, սակայն, այս և 16-րդ ու 22-րդ հնարքների միջև («Կողպել դռները ավազակին բռնելու համար», «Եթե ուզում ես բռնել, պետք է թողնես՝ գնա»): սրանց հիմնական խնդիրն էր թույլ չտալ կամ խուսափել հակառակորդին հուսահատ դրության մեջ գցելուց, քանի որ այդ դեպքում նա ողջ մնալու համար պատրաստ կլինի ամեն ինչի: Մինչդեռ 28-րդ հնարքը ենթադրում է, որ «հակառակորդը» ռազմավարի մարդիկ են կամ հենց ինքը, որը, գիտակցաբար կտրելով նահանջի ճանապարհները և հրաժարվելով այլընտրանքային ուրիշ միջոցներից, ստիպում է ընդունել, որ խնդրի միակ լուծումը վճռական գործողություններն են, որոնք և հետևողականորեն իրագործում է:

¹ Շըբը 噬嗑 ☲☲ Սեղմված ատամներ 21-րդ հեկսագրամը կազմված է ներքևում Ջեն 震 ☳ Որոտ և վերևում Լի 离 ☲ Կրակ տրիգրամներից: «Փոփոխությունների կանոնում» հեկսագրամի երրորդ գծի մեկնության մեջ ասվում է. «《噬嗑》: 亨 利用狱»՝ «Սեղմված ատամներ. իրագործում, բարենպաստ է կտտանքներ կիրառելու համար»: Հեկսագրամը բերանի և ատամներում սեղմված ինչ-որ մի բանի միջոցով այլաբանորեն պատկերում է անելանելի վիճակում, ծուղակում, բանտում գտնվելը: Ատամներում սեղմված ինչ-որ մի բանը պետք է կծել և ծամել և դրա արդյունքում կարող ես թույնի դեմն առնել, որի մասին ազդարարում է հեկսագրամի երրորդ գիծը: Ներքևի տրիգրամի առաջին գիծը զուգակցվում է վերևի տրիգրամի առաջին գծին, երկրորդը՝ երկրորդին, իսկ ահա ներքևի տրիգրամի երրորդ գիծը ընդհատուն է, մինչդեռ, հեկսագրամի վերջին գիծը, այսինքն՝ վերևի տրիգրամի երրորդ գիծը հոծ է: Դրանք չեն զուգակցվում: «Փոփոխությունների կանոնում» երրորդ գծի մեկնությունն ամբողջությամբ այսպիսին է. «噬腊肉遇毒, 小吝, 无咎»՝ «Դուրս կքաշես ատամների արանքում մնացած միսը, բայց թույնի կհանդիպես, թեթևակի փստոսանք, պարսավանք չի լինի», և հետո. «遇毒, 位不当也»՝ «Կհանդիպես թույնի՝ [գիծը] չզուգակցման դիրքում է»: Այսպիսով, 21-րդ հեկսագրամը նշանակում է մի իրավիճակ, որի պարագայում ատամները սեղմելու և մի բան կծելու (ծուղակն ընկած հակառակորդի հետ հաշվեհարդար տեսնելու) դեպքում հնարա-

վոր են դժվարություններ (հանդիպում թույնի), բայց դրանք մեծ չեն (թեթևակի փստոսանք) և արդյունքի վրա չեն ազդում (պարսավանք չի լինի):

² IV-V դդ. Չինաստանի հյուսիսը բաժանվեց բազմաթիվ ինքնիշխան թագավորությունների, և քանի որ դրանք հիմնել և գլխավորում էին այստեղ հաստատված քոչվոր ժողովուրդները, պատմության այդ շրջանն էլ կոչվեց Տասնվեց բարբարոս թագավորությունների ժամանակաշրջան: Դրանք առանցքային դեր ունեցան Արևմտյան Ծինի կործանման մեջ: IV դ. վերջին Մուժոն Չուին՝ ազգությամբ սիանբի (մոնղոլական ժողովուրդ) և Յաո Չաննը՝ ազգությամբ ցիան (մոնղոլական ժողովուրդ՝ ցեղակից տիրեթցիներին), զորահրամանատար էին Վաղ Ցին թագավորության տիրակալ Տի իշխան Ֆու Միեն II-ի արքունիքում (տի ժողովուրդը հետագայում ձուլվեց այլոց, համարվում է, որ նրանց հետնորդներն են բայմա ժողովուրդը՝ տիրեթցիների ենթախումբը): Նրանք դրդեցին Ֆու Միենին արշավելու Չինաստանի հարավը գրադեցնող Արևելյան Ծինի վրա, ողջ Չինաստանը իր իշխանության տակ միավորելու նպատակով: Սակայն 383 թ. ձեռնարկված արշավն ավարտվեց Ֆեյ գետի մոտ Ֆու Միենի գլխովին պարտությամբ: Ֆու Միենն ինքը վիրավորվեց և փախավ ճակատամարտին չմասնակցող Մուժոն Չուիի զորքի մոտ, բայց ի վերջո սպանվեց Յաո Չաննի զինվորների կողմից: Այս պարտության պատճառով Վաղ Ցին պետությունը կործանվեց, և նրա տարածքում ի հայտ եկան մի քանի ավելի փոքր պետություններ, որոնցից երկուսը՝ Ուշ Ցենը և Ուշ Ցինը, հիմնեցին հենց Մուժոն Չուին և Յաո Չաննը:

树上开花

[shù shàng kāi huā]

Ծառը զարդարել ծաղիկներով

借局布势，力小势大。鸿渐于陆，其羽可用为仪也。

Ուժերի դասավորության միջոցով ցուցադրել հզորություն:

Ուժերը շատ չեն, բայց շարված են ահարկու ուժի նման:

Կարասյները մոտենում են ցամաքին, նրանց փետուրները կարելի է օգտագործել ծեսերի ժամանակ:

【按语】此树本无花，而树则可以无花，剪彩贴之，不细察者不易发，使花与树交相辉映，而成玲珑全局也。此盖布精兵于友军之阵，完其势以威敌也。

[Մեկնություն] Ծառերին սկզբնապես ծաղիկներ չեն աճում և փթթում, բայց կարելի է ծաղիկներ հավաքել և ամրացնել ծառերին. ուժ ուշադիր չգննի, չի նկատի, որ ծաղիկները կպցրած են: Ծաղիկները ներդաշնակորեն հարմարեցրու ծառերին այնպես, որ վառ գունեղություն հաղորդեն միմյանց՝ շրջացից դարձնելով ողջ պատկերը: Նույն կերպով, քո լավագույն զինվորներին դասավորելով դաշնակից բանակի շարքերում, դրան ավելի ահեղ տեսք կտաս և կսարսափեցնես թշնամուն:

Պարզաբանումներ

Այս հնարքի իմաստն այն է, որ հակառակորդին ցույց տաս շատ ավելի ուժ, քան ունես իրականում, ներկայանաս իրականից էլ ավելի համոզիչ ու հմուտ, քողարկես քո թուլություններն ու թերությունները, սխալ հաշվարկները: Եթե հնարավորություն չկա ներքին էությունդ, կարողություններիդ ծավալը հարստացնելու, ապա կարելի է ծաղկեցնել դրանց արտաքին ձևը, տեսանելի մասը, ստեղծել կեղծ տպավորություն. այս կերպ կբարձրացնես

հեղինակությունդ, կներկայանաս քեզ համար առավել բարենպաստ տեսքով: Այսպես հակառակորդին կկարողանաս ապատեղեկացնել քո իրական ուժերի, կարողությունների և ռեսուրսների մասին:

153-րդ հեկսագրամը՝ Ծիեն 渐 ䷴ Ընթացք, Հոսք կազմված է ներքևում Գեն 艮 ䷳ Լեռ և վերևում Սյուն 巽 ䷸ Քամի տրիգրամներից: Լեռը խորհրդանշում է ամրություն, հիմք, անսասանություն, իսկ Քամին՝ մեղմ շարժում, ամենագոյություն, թեթև փոփոխականություն: Լեռը մարմնավորող ռազմավարը նեցուկ է լինում Քամին մարմնավորող իր դաշնակցին: Հեկսագրամը պատկերում է հանդարտ, աստիճանական, բայց ամուր հիմքեր ունեցող, կայուն առաջընթաց շարժում, այստեղից էլ հեկսագրամի անվանումը: Այս «ընթացքը, հոսքը» ոչ պատահական է և ոչ էլ անորոշ, այլ ունի իր որոշակի նպատակները և որի ավարտը նպաստավոր կլինի, եթե միայն մշտապես հետևես իրերի կարգին: Հեկսագրամի մեկնությունը այդպիսի շարժումը ներկայացնում է կարապի պատկերով՝ կարասյները թռչում են որոշակի կարգով՝ երամներ կազմած, շարժումները սահուն են և նրբագեղ: Երբ կարասյները հասնում են ցամաքին, այսինքն՝ երբ իրավիճակը մոտ է իր վերջնական փուլին, նրանք գետնի վրա կթողնեն իրենց փետուրները, որոնք կարելի է օգտագործել ծիսական հագուստները զարդարելու համար, և այդ դեպքում փետուրները արդեն խորհրդանշում են նպատակին հասնելը, իրավիճակի բարեհաջող ավարտը. «鸿渐于陆，其羽可用为仪也，吉»՝ «Կարասյները մոտենում են ցամաքին, նրանց փետուրները կարելի է գործածել ծեսերի ժամանակ, դա երջանկություն է»:

反客为主

[fǎn kè wéi zhǔ]

Հյուրից տանտիրոջ վերածվել

乘隙插足，扼其主机，渐之进也。

Գտիր ճեղքեր և անցքեր, զբաղեցրու դրանք և առանց շարժվիր այնքան, մինչև կտիրանաս հակառակորդի հիմնական ուժերին: Սա է հենց առաջընթաց շարժումը¹:




【按语】为人驱使者为奴，为人尊处者为客，不能立足者为暂客，能立足者为久客，客久而不能主事者为贱客，客久而不能主事者为贱客、能主事则可渐握机要，而为主矣。故反客为主之局：第步须争客位；第二步须乘隙；第三步须插足；第四足须握机；第五步乃成为主。为主，则并人之军矣；此渐进之阴谋也。如李渊书尊李密，密卒以败；汉高视势未敌项羽之先，卑事项羽，使其见信，而渐以侵其势，至垓下一役，一亡举之。

[Մեկնություն] Ուրիշներին սպասավորողը աղախին է, իսկ ով պատվավոր տեղ է զբաղեցնում, հյուր է: Ուրքի տակ ամուր հող չզգացող հյուրը ժամանակավոր է, իսկ ով ինքնահաստատվել է, երկար ժամանակով եկած հյուր է: Այն հյուրը, որ երկար է մնում, բայց չի կարողանում մասնակցել տանտիրոջ կարևոր գործերին, հարգանք չվայելող հյուր է, իսկ նա, ում թույլ կտան մասնակցելու կարևոր գործերին, կկարողանա աստիճանաբար իշխանության և գաղտնիքների տիրանալ ու տանտեր կռառնա: Այսպիսով, գոյություն ունի «հյուրից տանտեր» դառնալու մի քանի փուլ: Առաջին փուլ՝ հյուրի տեղ ստանալ, երկրորդ փուլ՝ ճեղքերի և անցքերի որոնում՝ առաջ շարժվելու համար, երրորդ փուլ՝ ներթափանցել ճեղքերի մեջ ու առաջ շարժվել, չորրորդ փուլ՝ տիրապետել վերահսկելու հիմնական լծակներին, հինգերորդ փուլ՝ բուն իմաստով տանտեր դառնալ: Տեր դառնալով՝ կարելի է սեփական քանակին միացնել հակառակորդի զորքը. սա հենց «հաջորդական առաջ-խաղացման» գաղափարն է: Ինչպես, օրինակ՝ Լի Յուանը մի նամակ գրեց Լի Միին, որը լեցուն էր հարգայից խոսքերով և նրա

առաջ իր խոնարհման հավաստիացումներով, բայց վերջիվերջո Լի Միի քանակը ջախջախվեց Լի Յուանի² հարվածներից: Կամ Խան Գաոնուն, հասկանալով, որ իր ուժերը բավարար չեն Միանն Յուին հաղթելու համար, խոնարհումով եկավ նրա մոտ և հարգայից ծառայելով, ձեռք բերեց նրա վստահությունը, բայց աստիճանաբար մեծ ազդեցություն ձեռք բերեց, ներսից թուլացրեց Միանն Յուի դիրքերը և Գայսիայի ճակատամարտում հիմնովին ջախջախեց Միանն Յուին³:

Պարզաբանումներ

Ռազմավարը՝ որպես հյուր, գալիս է հակառակորդի տուն, տարածք, կառույց: Օգտագործելով իր արտոնյալ կարգավիճակը՝ ծածուկ և հետևողականորեն ջանք է գործադրում նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելու համար, ուժերի դասավորությունը գաղտնի փոխում է իր օգտին, ամրապնդում է իր դիրքը և թուլացնում տանտիրոջինը: Ռազմավարի նպատակն է վերջինիս դուրս մղել գլխավոր դիրքերից, ստիպել իրեն զիջելու իշխողի դիրքը և միանձնյա տեր ու տիրական դառնալ:

¹ Նախորդ, 29-րդ հնարքի ծանոթագրության մեջ արդեն խոսվեց 53-րդ Ծիեն 漸  Ընթացք, Հոսք հեկսագրամի մահն, որը կազմված է ներքևում Գեն 艮  Լեռ և վերևում Սյուն 巽  Քամի տրիգրամներից: Տվյալ դեպքում «Փոփոխությունների կառնունում» Ընթացքը մեկնաբանվում է այլ կերպ. «渐: 女归吉, 利贞»՝ «Ընթացք. նման է [ամուսնու մոտ] գնացող կնոջ, երջանկություն կլինի, տոկունությունը նպաստավոր է», և հետո. «渐之进也, 女归吉也. 进得位, 往有功也. 进以正, 可以正邦也. 其位刚得中也. 止而巽, 动不穷也»՝ «Աստիճանական առաջընթաց շարժումը նման է երջանիկ պակաղորդության գնացող կնոջ: Մտնելով, պատշաճ տեղ կստանաս, սխրագործությունների տեղ կլինի: Արդար ձևով կմտնես, արդար դիրք կստանաս: Կոշտ գիծը մեջտեղում է: Եթե հենարան ստանաս և մեղմ շարժում կատարես, շարժումը փակուղի չի մտնի»: Այսպիսով, հնարքն այստեղ նկարագրված է

«ամուսնու ընտանիք գնացող կնոջ» պատկերի միջոցով: Կինը գնում է ամուսնու տուն և պետք է անցնի անհրաժեշտ բոլոր ծեսերը, որպեսզի ամուսնացած կին դառնա: Արարողություններն ու ծեսերը կարևոր նշանակություն ունեն և պետք է կատարվեն հաջորդաբար՝ ծիսակարգի համաձայն: Ըստ այդմ, կինը դառնում է ամուսնացած կին, մտնում է ամուսնու տուն և ընտանիք, սկսում է վարել տնտեսությունը, երեխաներ է ծնում, դառնում է մայր և տանտիկին. այլ կերպ ասած՝ «հյուրից վերածվում է տանտիրոջ»:

² Լի Յուան (08 ապրիլի 566–25 հունիսի 635 թթ.)՝ խոշոր ավատատեր Սուի դինաստիայի անկման շրջանում (581–618 թթ.), հետագայում (618–626 թթ.) դարձավ կայսր, հիմնել է Թանն դինաստիան (618–907 թթ.): Լի Յուանը օգտվեց Սուի դինաստիայի կենտրոնական իշխանության թուլացումից, որը հետևանք էր գյուղացիական բազմաթիվ ապստամբությունների, և որոնցից խոշորագույնը այդ ժամանակ ղեկավարում էր Լի Մինը (582–619 թթ.)՝ Սուի դինաստիայի արքունիքում ծառայող տոհմիկ ազնվականը: Լի Յուանը իր իրական մտադրությունները քողարկելու նպատակով մի հարգալից նամակ գրեց Լի Մինին, որով ճանաչում էր նրա գերիշխանությունը, և այդ կերպ մոլորության մեջ գցեց նրան: Արդեն 617 թ. Լի Յուանի բանակը գրավեց Սուի դինաստիայի մայրաքաղաքը, որտեղ 618 թ. Լի Յուանը իրեն հռչակեց նոր՝ Թանն դինաստիայի կայսր: Լի Մին ճարահատյալ ծառայության մտավ նոր կայսեր մոտ, սակայն մեկ տարի անց անհաջող ապստամբություն բարձրացրեց և ընկավ Թաննի զորքի սարքած մահաբեր դարանը:


³ Խան Գաոծու (բառացի՝ Խանների Մեծ Հետնորդ, մ.թ.ա. 256 (247) – 01 հունիսի 195 թթ.)՝ Խան կայսրության (մ.թ.ա. 206 թ. – մ.թ. 220 թ.) առաջին կայսրը: Հայտնի է Լիու Պանն անունով: Լինելով գեղջուկի ընտանիքից՝ կարողացավ դառնալ կրտսեր պաշտոնյա, իսկ կարճ ժամանակ անց՝ զորահրամանատար, գավառի կառավարիչ: Չինաստանի առաջին կայսր Ցին Շըխուաննի մահից հետո, որը Ցին դինաստիայի հիմնադիրն էր և առաջինը միավորեց ողջ Չինաստանը, Լիու Պաննը հարեց իշխանների ապստամբությանը, որը գլխավորեց Սիանն Յուն (մ.թ.ա. 232–202 թթ.): Ցին դինաստիայի անկումից հետո, Լիու Պաննը Սիանն Յուից ստացավ Խանջոն շրջանը (Խան Ծիան գետի միջնամասի

շրջանում, ներկայիս Շաանսի նահանգի հարավային մասի տարածքում) և Խանվան տիտղոսը: Լիու Պաննի հավակնությունները, սակայն, չբավարարվեցին այդքանով և նա ապստամբություն բարձրացրեց Սիանն Յուի դեմ: Երկարատև պատերազմը (Չու-Խանական պատերազմ) ավարտվեց մ.թ.ա. 202 թ., Լիու Պաննի հաղթանակով Գայսիայի ճակատամարտում: Այս հաղթանակից հետո Լիու Պաննը միավորեց Չինաստանը, դարձավ կայսր և հիմնադրեց նոր՝ Խան դինաստիան, որը Չինաստանի պատմության մեջ բոլոր դինաստիաներից ամենաերկար գոյությունը ունեցավ: Խան դինաստիայի օրոք ստեղծվեց պետական կառավարման նոր համակարգ՝ քաղաքացիական ինստիտուտներով, որոնք օրինակ ծառայեցին հետագա բոլոր դինաստիաների համար, իսկ չինացիների հիմնական էթնիկ խումբը պետության անունով կոչվեց «խան»:

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

敗战计

ՊԱՐՏՎՈՂՆԵՐԻ ՀՆԱՐՔՆԵՐ



美人计

[mèi rén jì]

«Միրունիկը»

兵强者，攻其将；将智者，伐其情。将弱兵颓，其势自萎。利用御寇，顺相保也。

Եթե թշնամու բանակը ուժեղ է, նշան բռնիր նրա հրամանատարին. եթե հրամանատարը իմաստուն է, խիհիր նրա զգացմունքներին: Երբ հրամանատարը թուլանա, իսկ զորքը ընկճվի, թշնամու ուժն ինքն իրեն կապառվի: Նպաստավոր է հարձակումը հետ մղելու և սեփական ուժերը պահպանելու համար¹:

【按语】兵强将智，不可以敌，势必事先。事之以土地，以增其势，如六国之事秦：策之最下者也。事之以币帛，以增其富，如宋之事辽金：策之下者也。惟事以美人，以佚其志，以弱其体，以增其下之怨。如文王被囚乃以美人善马献纣，勾践以西施重宝以悦吴王夫差：乃可转败为胜。


[Մեկնություն] Չի կարելի կոչոտ և բաց հակամարտության մեջ մտնել իմաստուն զորահրամանատարի դեկավարած թշնամու ուժեղ զորքի դեմ: Հարկավոր է սկզբում խոնարհվել նրա առաջ և ընծա մատուցել: Եթե զիջես սեփական տարածքիդ մի մասը, կնշանակի մեծացնում ես նրա հզորությունը. այդպես վեց թագավորությունները զիջեցին իրենց հողերը ռազմատենչ Ցին թագավորությանը², սա զիջումների վատագույն քաղաքականությունն է: Եթե ազատվես, որպես փրկագին ոսկի և մետաքս տալով, այդ կմեծացնի նրա հարատւությունը: Սոն դինսատիան, այդպիսի փրկագին տալով, փորձեց ազատվել Լիստ և Ծին թագավորություններից³. սա նույնպես վատ քաղաքականությունն է: Միակ արդյունավետ ընծան «սիրունիկներն» են: Այդպիսի նվիրաբերումը թույլացնում

... և անհրաժեշտ է նրա սեփականությանը, որպեսզի նրա սեփականությանը մեջ: Օրինակ՝ Վեն ... իր խորհրդականների միջոցով գե-

դեցկուհիներ և ազնվացեղ նծույզներ էր նվիրաբերում կայսր Ջոուին՝, իսկ Գոու Ծիենը Ու թագավորության տիրակալ Ֆու Չա- յին նվիրաբերեց գեղեցկուհի Սի Շըին⁵: Այս կերպ պարտությունը կարելի է վերածել հաղթանակի:

Պարզաբանումներ

Հնարքի էությունն այն է, որ բաց հակամարտությունում անհաղթ հակառակորդի՝ նրա առաջնորդի վրա ներագդես նրա հայտնի կամ թաքնված թերությունների միջոցով՝ թուլություն կանանց կամ տղամարդկանց հանդեպ, խաղամուտություն, գինեմուտություն կամ թմրամուտություն: Ռազմավարը բացահայտ կամ ծածուկ հենց այդպիսի «ընծա» է մատուցում կամ պատրաստում ուժեղ հակառակորդի համար՝ նկատի առնելով նրա թուլությունները: Եվ երբ վերջինս խայծը կուլ է տալիս, օգտագործելով «ընծան» իր ուղղակի նպատակով, նա դառնում է մտացրիվ, կորցնում է զգոնությունը, որն էլ անխուսափելիորեն հանգեցնում է պարտակա- նությունների գանգատությանը, ներքին ուժերի թուլացմանը և ընդ- հանրապես խարխուլում է հակառակորդի դիրքերը:

¹ Ինչպես և նախորդ երեք հնարքների դեպքում, այս արտա- հայտությունը 53-րդ հեկսագրամի Ծիեն 漸  Ընթացք, Հոսք մեկնությունից է: Հեկսագրամի երրորդ գծի մեկնությունն այս դեպքում ասում է. «九三，鴻漸于陸。夫征不复，妇孕不育，凶。利御寇»՝ «Երրորդ հոծ գիծ, կարապները մոտենում են ցամաքին: Ամուսինը պատերազմ կզնա ու չի վերադառնա, կինը կհղիանա, բայց հղիությունը կընդհատվի: Դժբախտություն: Նպաստավոր է հարձակումը հետ մղելու համար»: Ասվածը պարզաբանվում է հետևյալ կերպ. «夫征不复”，离群丑也。“妇孕不育”，失其道也。“利用御寇”，顺相保也。」՝ «Ամուսինը պատերազմ կզնա ու չի վերադառնա», որովհետև կլքի գինակիցներին: Կինը կհղիա- նա, բայց հղիությունը կընդհատվի, որովհետև կկորցնի առաքի- նության ուղին: Նպաստավոր է հարձակումը հետ մղելու համար. սա աջակցում է ինքնապահպանությանը»: Այսպիսով, նկարա-

գրվում է մի իրավիճակ, երբ առաջընթաց սահուն շարժումը (ամուսինը վերադառնում է, հղիությունը չի ընդհատվում) դառ- նում է անհնար՝ կարգ ու կանոնին հավատարիմ չլինելու պատ- ճառով: Հայտնվելով նման իրավիճակում՝ լավ է չձեռնարկել ակ- տիվ, հարձակողական գործողություններ և ինքնապահպանման համար զբաղվել միայն հակառակորդի հարձակումները հետ մղելով:

² Մարտնչող թագավորությունների շրջանում որոշ թագավո- րություններ տարածքային զիջումներով փորձում էին սիրաշահել և կասեցնել հզորագույն Ցին թագավորության ռազմական նկր- տումները: Այդ զիջումները որևէ ազդեցություն չունեցան. մ.թ.ա. 221 թ. Ցին Շըխուաննի օրոք Ցին թագավորությանը հաջողվեց տիրել մյուս բոլոր թագավորություններին և միավորել Չինաստանը:

³ Սոն կայսրության (960–1279 թթ.) վերջին շրջանում Չինաս- տանի կայսրերն ապարդյուն փորձում էին հարուստ նվերներով խաղաղեցնել ռազմատենչ քոչվոր ցեղերին, որոնք Չինաստանի հյուսիսում հիմնադրեցին Լիաո և Ծին թագավորությունները: Արդեն XIII դ. Չինաստանի ողջ հյուսիսը հայտնվեց հյուսիսից և հյուսիս- արևմուտքից եկած տարբեր քոչվոր ցեղերի իշխանության տակ:

⁴ Վեն Վանը (Լուսավորյալ Թագավոր)՝ Ջոու տան նախա- հայրը, ըստ ավանդության՝ մ.թ.ա. XII դ. իր հոգևոր կատարելու- թյամբ վաստակել է Երկնքի ողորմածությունը: Վեն Վանը գերե- վարվեց Շանն (Ցին) դինաստիայի վերջին տիրակալ Ժոու Վանի կողմից և յոթ տարի փակված մնաց զնդանում: Վեն Վանի բարձ- րաստիճան կողմնակիցները Ջոու Վանին գեղեցկուհիներ ու ազ- նվացեղ նծույզներ էին նվիրաբերում՝ նրան ներողամտորեն վե- րաբերվելու համար: Վեն Վանի ազատ արձակվելուց հետո, նրա որդին՝ Ու Վանը (Ռազմատենչ Թագավոր) առասպելներում պատմվող 1122 (?) թ. Մույեի ճակատամարտում (Խընան նահան- գի ներկայիս Սինսիան շրջանի տարածքում), կործանեց Շանն (Ցին) թագավորությունը, և միավորելով Հյուսիսային Չինաստանի բազմաթիվ ժողովուրդներին՝ դարձավ Ջոու պետության գերա- գույն տիրակալը: Այս ճակատամարտը Չինաստանի պատմու- թյան մեջ շրջադարձային պահերից մեկը եղավ: Ու Վանի իշխա- նության գալը ուղեկցվեց Երկնքի և Երկրի հոգիների պաշտամունքի ծիսակարգերի հաստատումով, որոնք մանրամասն նկարագրվում են կոնֆուցիական և հետագա պատմագրության մեջ:

⁵ Արդեն ասվեց (հնարք 10, ծանոթ. 7), թե ինչպես Յուե թագավորության մ.թ.ա. 496–465 թթ. տիրակալ Գոու Ծիենը գլխավին ջախջախվեց հարևան Ու թագավորության տիրակալ Ֆու Ջայի կողմից և տարիներ անց միայն կարողացավ վրեժխնդիր լինել: Երբ Գոու Ծիենը, գաղտնիության պայմաններում պատրաստվում էր պատերազմի, իմանալով փափուկ սեռի նկատմամբ Ֆու Ջայի թուլությունը, նրան ուղարկեց գեղեցկուհի Սի Շըին՝ որպես ընծա: Կնոջ գեղեցկությամբ և փաղաքշանքով հմայված՝ Ֆու Ջայը թողեց պետական գործերը, և նրա դրդումով նույնիսկ մահապատժի ենթարկեց իր լավագույն զորահրամանատարներից մեկին: Գոու Ծիենը կարողացավ օգտվել այդ ամենից ու պարտության մատնեց Ու թագավորությանը, իսկ Յուեն վերստին անկախություն ձեռք բերեց: Սի Շըն ժողովրդի հիշողության մեջ մնաց որպես Հին Չինաստանի չորս ամենահայտնի գեղեցկուհիներից առաջինը: Ըստ ավանդության՝ Սի Շըի գեղեցկությունը այնքան տպավորիչ էր, որ մի անգամ, երբ լճակում իր հագուստն էր լվանում, նրան նկատում է ձուկը և այնպես է շլանում Սի Շըի գեղեցկությունից, որ մոռանում է լողալն ու խեղդվում:

ՀՆԱՐՔ 32

空城计

[kōng chéng jì]

«Դատարկ քաղաք»

虛者虛之，疑中生疑；剛柔之際，奇而復奇。

Դատարկության անկայությունը ուժեղացրո՞ւ դատարկությամբ, որպեսզի կասկածները նոր կասկածներ ծնեն: Կոշտի և փափուկի սահմանագծին՝, հրաշքը հասցորդում է հրաշքին:

【按语】虚虚实实，兵无常势。虚而示虚，诸葛而后，不乏其人。如吐蕃陷瓜州，王君焯死，河西恟惧。以张守珪为瓜州刺史，领余众，方复筑州城。版榦裁立，敌又暴至。略无守御之具。城中相顾失色，莫有斗志。守珪曰：“彼众我寡，又疮痍之后，不可以矢石相持，须以权道制之”。乃于城上，置酒作乐，以会将士。敌疑城中有备，不敢攻而退。又如齐祖珽为北徐州刺史，至州，会有降寇，百姓多反。珽不关城门。守陴者，皆令下城，静座街巷，禁断行人鸡犬。贼无所见闻，不测所以，或疑人走城空，不设警备。珽复令大叫，鼓噪聒天，贼大惊，顿时走散

[Մեկնություն] Դատարկությունը կարող է լցվել, իսկ լցվածությունը կարող է դատարկվել, թույլ կողմը կարող է ուժեղանալ, իսկ առավելությունը՝ վերածվել թերության. ուսումնական հսկամարտության մեջ կայուն իրավիճակներ չկան: Ջուզըից² հետո անպակաս էին մարդիկ, որոնք, թույլ լինելով, հակառակորդի առջև չէին թաքցնում իրենց թուլությունը, ընդհակառակը՝ ի ցույց էին դնում այն: Երբ թուպո³ բարբարոս քոչվոր ցեղերը հարձակվեցին Գուաջոուի⁴ վրա, նրանք սպանեցին դրա տիրակալ Վանն Ծյուն-խուանին, և այդ օրից Խըսի միջանցքի⁵ ողջ երկայնքով սարսափ տիրեց: Ջորահրամանատար Ջանն Շոուզուին⁶ նշանակվեց տեղի կառավարիչ. նա հավաքեց ժողովրդին քաղաքի պատերը վերանորոգելու համար: Ջանն Շոուզուին հասցրեց միայն հենքերը դնել, երբ քոչվորները նորից երևացին հորիզոնում: Քաղաքի բնակչությունը, հայտնվելով միանգամայն անօգնական վիճակում, վախից կաթվածահար էր եղել և չունեի պայքարելու որևէ ցան-

կուրսյուն: Շոուգուին սասաց. «Հակառակորդը մեծաբանակ է, մենք էլ թույլ ենք, անցած ճակատամարտից ստացած վերքերը դեռ չեն բուժվել, մենք չենք կարող նետ արձակել, քարեր շարտել. հարկավոր է թշնամուն խորամանկությամբ դիմադրել»: Եվ ահա զինվորներն ու հրամանատարները քաղաքի պատերի մոտ ուրախ տոն սարքեցին, մի աղմկոտ խրախճանք՝ զինով ու համեղ կերակուրներով: Սա տեսնելով՝ թշնամին չհամարձակվեց հարձակվել քաղաքի վրա՝ խուսափելով ծուղակից, և հետ քաշվեց: Նույն կերպ, օրինակ, երբ Ցիի Ծուրթինը², նշանակվելով Հյուսիսային Սյուչոուի³ կառավարիչ, հասավ քաղաք, հարավային Չեն թագավորությունից⁴ հարձակվեցին ավազակները: Հասարակ ժողովուրդը գրեթե խուճապի մեջ ընկավ: Սակայն Ծուրթինը հրամայեց քաղաքի դարպասները չփակել, զինվորներին հրամայեց պատերից իջնել և թաքնվել քաղաքի նրբանցքներում ու հետևի բակերում, արձեղեց մարդկանց փողոց դուրս գալ: Ողջ քաղաքում լռություն տիրեց: Չէր լսվում ոչ արյունների կանչ, ոչ շների հաչոց: Քաղաք մտած ավազակները ոչ մեկի չհանդիպեցին, որևէ մեկի ձայնը չլսեցին և տարակուսեցին, թե ուր են կորել բոլորը: Նրանց թվաց, թե քաղաքը դատարկ է, բնակիչներն էլ կամ հեռացել են, կամ էլ թուլացրել զգոնությունը: Եվ հենց այդ ժամանակ Ծուրթինի հրամանով բոլորն այնպես որոտածայն գոռացին ու թմբկահարեցին, որ երկինքը դրոպաց. Չենի ավազակներն այնչափ սարսափեցին, որ ցաքուցրիվ եղան բոլոր ուղղություններով:

Պարզաբանումներ

Ուժեղ հակառակորդից պաշտպանվելու մարտավարությունը ենթադրում է անելանելի դրության ժամանակ «դատարկություն ցույց տալ այնտեղ, որտեղ դատարկ է, և լիություն այնտեղ, որտեղ լի է», այսինքն՝ էլ ավելի թուլություն դրսևորել թույլ տեղում, և էլ ավելի ուժ՝ ուժեղ տեղում: Դրանով իսկ շփոթեցնել հակառակորդին, ստիպել նրան կասկածի տակ դնելու քո իրական դժվարությունները և անվստահություն ներշնչել ձեռնտու թվացող սեփական դրության հանդեպ, մեջը կասկած գցել, թե իբր դարան կա սարքած, ստիպել մի ծուղակ տեսնել, որը իրականում չկա:

«Կոշտի և փափուկի սահմանագծին՝ 剛柔之際» արտահայտությունը 40-րդ հեկսագրամի՝ Ծիե 解 ䷧ Լուծում առաջին գծի մեկնությունից է: Հեկսագրամը կազմված է ներքևում Քան 坎 ䷜ Ջուր տրիգրամից, որը վտանգի խորհրդանիշն է, և վերևում Ջեն 震 ䷲ Որոտ տրիգրամից, որը խորհրդանշում է ակտիվ գործողություններ, շարժում դեպի առաջ: Առաջին ընդհատուն՝ փափուկ գծի մեկնությունն ասում է. «剛柔之際, 义无咎也»՝ «Կոշտի և փափուկի սահմանագծին պարտքի կատարումը պարսավանքի չի արժանանա»: Առաջին գծից դեպի առաջ (այսինքն՝ հեկսագրամով վերև) շարժումը տանում է անմիջաբար նրան հաջորդող հոծ՝ կոշտ գծին (գուգակցված լինելով առաջին տրիգրամի առաջին գծին, երկրորդ տրիգրամի առաջին գիծը նույնպես կոշտ է, հոծ, ինչը պատկերավոր կերպով ուժգնացում է շարժումը փափուկից, մթությունից, դժբախտությունից դեպի կոշտություն, լույս, երջանկություն): Այսպիսով, առաջին գիծն անցնելով, բայց դեռ երկրորդին չհասած՝ հայտնվում ես կոշտի և փափուկի սահմանագծին, որը դժբախտություն չի կանխատեսում: Սակայն առաջ շարժվելը դյուրին չէ, այն պարզապես սխալ չէ՝ ավելի վատ չի լինի, ավելին՝ հեկսագրամը դժբախտությունների ու վտանգների «լուծում» է խոստանում: Ներքևում Ջուրը, վերևում Որոտը ազդանշում են մոտալուտ անձրևը, անձրևը խոնավացնում է հողը, նպաստում է բերքի աճին, մաքրում է աղտեղություններից, թարմացնում է օդը՝ լուծելով կամ մեղմելով վերապրելու հարցերը: Այսպիսով, գտնվելով վտանգի մեջ՝ անհրաժեշտ է առաջ շարժվել, սակայն շարժումները պետք է դանդաղ լինեն, արարքները՝ շրջահայաց, պահվածքը՝ զգույշ:

² Տես՝ Ջուզը Լիան:

³ Թուպո (Թուֆան)՝ Թուպո դինաստիան, դեռևս մինչև բուդդայականության ընդունումը, միավորելով ողջ Տիբեթը, դարձավ տիբեթցիների առաջին պետական կազմավորումը և գոյություն ունեցավ 618–842 թթ. Ցիննիսայ-Տիբեթյան բարձրավանդակում՝ ներկայիս Չինաստանի արևմտյան մասում:

⁴ Գուաչոու գավառը գտնվում էր Գանսու նահանգում՝ Խըսի միջանցքի ծայր արևմտյան մասում:

⁵ Խըսի (Գանսու) միջանցք՝ լեռնանցք (լայնությունը՝ 20–100 կմ), իրենից ներկայացնում է հնագույն օազիսների համակարգ՝ մոտ

1000 կմ երկարությամբ, Չինաստանի արևելյան և հյուսիս-արևմտյան շրջանները միացնող հիմնական ճանապարհ:

⁶ Ջանն Շոուգուի (684–06 մարտի, 740 թթ.)՝ Թանն դինաստիայի (618–907 թթ.) ժամանակաշրջանի գորահրամանատար:

⁷ Ծութին (550–577 թթ.)՝ Հարավային և Հյուսիսային դինաստիաների ժամանակաշրջանի Հյուսիսային Ցի դինաստիայի պաշտոնյա: Հանրահայտ է դարձել իր գրական տաղանդի և կառավարչական գործունեության շնորհիվ:

⁸ Հյուսիսային Սյուչոու՝ ներկայիս Անխոյ նահանգի Ֆընյան գավառի տարածքում:

⁹ Հարավային Չեն (557–589 թթ.)՝ Հարավային և Հյուսիսային դինաստիաների (420–589 թթ.) ժամանակաշրջանի Հարավային դինաստիաներից չորրորդը և վերջինը, կործանվել է Սուի դինաստիայի կողմից:

反间计

[fǎn jiàn jì]

«Վերադարձված լրտեսը»

疑中之疑。比之自内，不自失也。

Ծուղակ պատրաստել ծուղակի ներսում:

Ներսից մտնեցիր դրան, և քեզ չես կորցնի՛:

【按语】间者，使敌自相疑忌也；反间者，因敌之间而间之也。如燕昭王薨，惠王自为太子时，不快于乐毅。田单乃纵反间曰：“乐毅与燕王有隙，畏诛，欲连兵王齐，齐人未附。故且缓攻即墨，以待其事。齐人唯恐他将来，即墨残矣”。惠王闻之，即使骑劫代将，毅遂奔赵。又如周瑜利用曹操间谍，以间其将；陈平以金纵反间于楚军，间范增，楚王疑而去之。亦疑中之疑之局也。

[Մեկնություն] Լրտեսի ինտիմըն է թշնամու ճանքարում անվստահություն և թշնամանք սերմանել: «Վերադարձնել լրտեսին» նշանակում է օգտվել թշնամու լրտեսից, որպեսզի նա լրտեսություն անի քո օգտին: Ինչպես, օրինակ՝ երբ Յեն թագավորության² տիրակալը այն աշխարհ գնաց, և գահ բարձրացավ Խուի Վաննը, որը չէր սիրում զորավար Յուն Յին³: Թիեն Տանը⁴ լրտեսներ ուղարկեց Յեն թագավորություն, որոնք սկսեցին լուրեր տարածել. «Յուն Յին տիրակալի հարգանք չի վայելում, Յուն Յին վախենում է հաշվեհարդարից, նա ցանկանում է միանալ Ցի թագավորության բանակին և այնտեղ գահ բարձրանալ: Սակայն Ցի արքունիքում դեռևս տատանվում են: Այդ պատճառով զորավար Յուն Յին, Ցի արքունիքից պատասխանի սպասելով, շատ դանդաղ է պաշարում Ցիի Ծիմոն⁵ բաղաբը: Ցիում վախենում են Յուն Ցիի փոխարեն նոր զորահրամանատարի գալուց, քանի որ Ծիմոն իսկույն կգրավվի»: Այս լուրը հասավ Յեն թագավորության տիրակալին, որն անհապաղ ուղարկեց Ցի Ծիեին⁶ Յուն Ցիին փոխարինելու, իսկ Յուն Յին փախավ Ջաո թագավորություն⁷: Այս կերպ նաև Ջոու Յուն Ցաո Ցաոյի ուղարկած լրտեսին օգտագործեց

հենց Յաո Յաոյի⁶ զորավարներին լրտեսելու համար: Իսկ Չեն Փիննը կաշատեց Չու բանակատեղից եկած հետախույզներին, որ պեսզի նրանք լուրեր տարածեն Ֆան Ցընի դեմ: Չուի տիրակալը սկսեց կասկածել Ֆան Ցընին և վերացրեց նրան⁷: Մրանք բոլորը ծուղակի ներսում ծուղակ պատրաստելու օրինակներ են:

Պարզաբանումներ

Հակառակորդներից յուրաքանչյուրը միշտ ձգտելու է քայքայել, ներսից թուլացնել մյուսին՝ երկպառակություն, անվստահություն, թշնամանք ու խռովություն սերմանելով նրա շարքերում, նրա դաշնակիցների, ընկերների, ենթակաների, ընտանիքի անդամների մեջ: Ռազմավարը պետք է որոշի, թե հակառակորդը ինչ եղանակով է փորձում անմիաբանություն սերմանել իր շարքերում, պետք է գտնի հակառակորդի պատրաստած ծուղակը, հայտնաբերի լրտեսին, գործակալին, որոնք տեղեկություններ են փնտրում-գտնում, կեղծ լուրեր և ապատեղեկատվություն են տարածում, և այս ամենը պետք է գաղտնի օգտագործի հենց հակառակորդի դեմ, նրան նույնությամբ փոխհատուցի:

¹ «Ներսից մոտեցիր դրան, և քեզ չես կորցնի՝ 比之自内, 不自失也» արտահայտությունը 8-րդ հեկսագրամի՝ Պի 比 ䷇ Մոտեցում երկրորդ գծի մեկնությունից է. հեկսագրամը կազմված է ներքևում Քուն 坤 ䷁ Հող և վերևում Քան 坎 ䷜ Ջուր տրիգրամներից: Ջուրն ու Հողը կախված են միմյանցից: Հողին ձգտող Ջուրը խոնավացնում է այն, տալիս է նրան կենարար ուժ: Հողը պահում է Ջուրը, ներքաշում է այն: Դյուրափոփոխություն, գիշողականություն խորհրդանշող Հողը, և Ջուրը՝ վտանգի, գաղտնամտության, ծածկամտության խորհրդանշիչը, ձգտում են միմյանց: Այստեղից էլ ծագում են հեկսագրամի անվանումը և դրանով նկարագրվող իրավիճակը՝ մոտեցում, մերձեցում, միավորում: Հեկսագրամի երկրորդ գծի մեկնությունն ասում է. «Դրան ներսից մոտեցիր, տոկունությունը երջանկություն կրերի»:

² Յեն թագավորություն, իշխանական կալվածք Գարնան և Աշնան (մ.թ.ա. 770–476 (403–?) թթ.) և Մարտնչող թագավորու-

թյունների (մ.թ.ա. 476 (403–?) – 221 թթ.) ժամանակաշրջաններում, գտնվում էր ներկայիս Խըպեյ նահանգի տարածքում և ձգվում էր հյուսիս-արևելք՝ ներառելով Լիաոտոնի թերակղզին:

³ Յեն թագավորության զորահրամանատար, ականավոր քաղաքական գործիչ:

⁴ Ցի թագավորության ականավոր զորահրամանատար:

⁵ Քաղաք, ներկայիս Շանտոն նահանգում:

⁶ Ցի Ծիե (մ.թ.ա. ?–279 թթ.)՝ Յեն թագավորության զորավար:

⁷ Յեն թագավորությունում վախճանված Ջաովանինն հաջորդեց Խուիվաննը: Երբ նա տակավին ժառանգորդ էր, տարածայնություններ ծագեցին Յուե Ցիի հետ: Երբ Յուե Ցին պաշարել էր Ցի թագավորության Ծիմո քաղաքը, այդ տարածայնությունները հմտորեն օգտագործեց Թիեն Տանը՝ հարևան Ջաո թագավորության զորավարը: Նա սկսեց Յենում կեղծ լուրեր տարածել, թե իբր Յուե Ցին ուզում է առանձնանալ և անձամբ դառնալ Ցիի տիրակալ: Իշխանության գալով՝ Խուիվաննը իրապես սկսեց կասկածել Յուե Ցիին և ուղարկեց զորավար Ցի Ծիեին՝ զորահրամանատարի պաշտոնում նրան փոխարինելու: Վախենալով մահապատժից՝ Յուե Ցին փախավ և թաքնվեց Ջաո թագավորությունում: Օգտվելով դրանից, Ցի թագավորության զորավար Թիեն Տանը, հարված հասցրեց Յեն թագավորության բանակին և ջախջախեց այն: Ըստ ավանդության՝ նա հրամայեց հավաքել շուրջ հազար ցուլերի, ծածկել նրանց մետաքսե կտորներով, որոնք գործածվում էին վիշապների պարի ժամանակ, կոտոշներին սայրեր ամրացնել, իսկ վառելայուղով ներծծված եղեգները կապել պոչերից: Վառվող պոչերով ցուլերի նախիրը բաց թողնվեց թշնամու վրա, իսկ նախիրի հետևից հարձակման անցավ 5000 զինվոր: Այս մարտում Ցի Ծիեն սպանվեց, իսկ Յեն թագավորության զորքերը անկանոն նահանջեցին իրենց հողերը: Արդյունքում Ցի թագավորությունը կրկին հետ բերեց նախկինում իրեն պատկանող բոլոր քաղաքները: Հաջորդ տասնամյակները նշանավորվեցին Յենի և շրջակա թագավորությունների միջև բազմաթիվ պատերազմներով:

⁸ Յանծը գետի վրա՝ Կարմիր պատերի մոտ ճակատամարտի (208 թ.) նախօրեին զորավար Ցաո Ցաոն (Խան կայսրության անկման շրջանում գլխավոր նախարար և Վեյ թագավորության տիրակալ) ականավոր գիտնական և բանավիճող Ծիան Գանին

ուղարկեց Ու թագավորության գորահրամանատար Ջոու Յուի մոտ, որպեսզի վերջինիս համոզի անցնել Ցաո Ցաոյի կողմը: Ջոու Յուն ճաշկերույթ կազմակերպեց Ծիան Գանի պատվին, ապա առաջարկեց գիշերել իր վրանում: Գիշերը Ծիան Գանը ուշադրություն դարձրեց սեղանին դրված նամակների կույտին, որոնց մեջ էր նաև Ցաո Ցաոյի խորհրդականների՝ Ցայ Մաոյի և Ջանն Յունի գրությունը՝ հասցեագրված Ջոու Յուին: Դրանում նրանք հաստատում էին հավատարմությունը Ջոու Յուի հանդեպ և ատելությունը Ցաո Ցաոյի նկատմամբ՝ խոստանալով առաջին իսկ հնարավորության դեպքում սպանել Ցաո Ցաոյին: Ծիան Գանը առանց երկմար մտածելու գողացավ այդ նամակը և վերադառնալուն պես այն ցույց տվեց Ցաո Ցաոյին, որն էլ կատաղելով, նույն պահին հրամայեց սպանել Ցայ Մաոյին և Ջանն Յունին: Միայն որոշ ժամանակ անց հանդարտված Ցաո Ցաոն հասկացավ, որ նամակը կեղծ էր: Բանն այն էր, որ Ցաո Ցաոյի բանակը հիմնականում կազմված էր Չինաստանի հյուսիսային դաշտավայրի եկվորներից և դժվար թե հրամանատարներից որևէ մեկը երբևէ տեսած լիներ ջրային մեծ տարածքներ, միայն Ցայ Մաոն ու Ջանն Յուն էին, որ գետի վրա ճակատամարտելու փորձ ունեին: Զրկվելով այդ հմուտ խորհրդականներից՝ Ցաո Ցաոն, Յանծը գետի ճակատամարտում՝ Կարմիր պատերի մոտ, աններելի սխալներ թույլ տալով, գլխովին ջախջախվեց:

⁹ Մ.թ.ա. 204 թ.՝ Ցին դինաստիայի անկումից հետո ողջ Չինաստանին տիրանալու համար պայքարի մեջ մտան Արևմտյան Չուի տիրակալ-գերիշխանի տիտղոսը ստանձնած զորավար Սիանն Յուն և Խանի տիրակալ Լիու Պաննը (Չու-Խանական պատերազմ): Սիանն Յուն Սիննյանն քաղաքում պաշարեց Լիու Պաննին. պաշարումը գրեթե մեկ տարի տևեց: Չեն Փիննը (մ.թ.ա. ? - 178 թթ.) Լիու Պաննի խորհրդականը, կիրառեց խաբեական մի հնարք, որպեսզի գժտություն սերմանի Սիանն Յուի և նրա հավատարիմ խորհրդական Ֆան Ծընի (մ.թ.ա. 277-204 թթ.) միջև: Սկզբում նա Չուի լրտեսներին կաշառեց, որպեսզի նրանք լուրեր տարածեին, թե Ֆան Ծընը իբր մտադիր է Խանի կողմն անցնելու և Սիանն Յուին դավաճանելու, որը, սակայն, սկզբում թերահավատորեն վերաբերվեց այդ լուրերին: Որոշ ժամանակ անց հաշտություն քննարկելու նպատակով Խանի բանակատեղում կազ-

մակերպվեց Չուի և Խանի դեսպանների հանդիպում, և Չեն Փիննը հրամայեց հյուրերի համար սեղաններին արծաթյա սպասք դնել: Երբ հյուրերը ժամանեցին, Չեն Փիննը շինծու զարմացավ, որ եկողների մեջ Ֆան Ծընը չկա, և հյուրերի ներկայությամբ թանկարժեք սպասքը փոխարինվեց հասարակով: Դեսպանները վերադառնալով Սիանն Յուին հանգամանորեն պատմեցին կատարվածը, որն էլ իրապես սկսեց կասկածել Ֆան Ծընի նվիրվածությանը: Այդ պահից Սիանն Յուն ցուցադրաբար անտեսեց թե նրան և թե նրա խորհուրդները: Ֆան Ծընը, վիրավորված նման վերաբերմունքից, որոշեց տուն դառնալ, սակայն ճանապարհին մահացավ: Արդյունքում Չեն Փիննին հաջողվեց ոչ միայն թշնամություն սերմանել Սիանն Յուի և իր գլխավոր խորհրդականի միջև, այլև երկպառակություն սերմանել թշնամու բանակում: Հենց այդ ժամանակ Լիու Պաննը հաջող հարձակում ձեռնարկեց և վերացրեց քաղաքի պաշարումը: Չու-Խանական պատերազմն ավարտվեց Չուի բանակի ջախջախումով ու Սիանն Յուի մահով, Չու դինաստիան և Սիանն Յուի ժամանակների կայսրության կառուցվածքը ամբողջությամբ կազմալուծվեց, իսկ Լիու Պաննը միավորեց Չինաստանը և հռչակվեց նոր Խան կայսրության առաջին կայսրը:

苦肉计

[kǔ ròu jì]

«Ինքնամիրավորում»

人不自害，受害必真；假真真假，间以得行。童蒙之吉，顺以巽也。

Մարդն ինքն իրեն վերք չի հասցնում, ուստի վերք ստանալը պետք է ճշմարտաման լինի. եթե սուտն այնքան ճշմարտաման է, որ ճիշտը սուտ է թվում, մտադրությունը կհաջողվի: Shuսի երջանակությունը ծնում է դյուրամիտիություն և զիջողականություն¹:

【按语】间者，使敌人相疑也；反间者，因敌人之疑，而实其疑也；苦肉计者，盖假作自间以间人也。凡遣与己有隙者以诱敌人，约为响应，或约为共力者：皆苦肉计之类也。如：郑武公伐胡而先戮关其思；韩信下齐而驷生遭烹。

[Մեկնություն] Քայքայիչ գործունեության նպատակն է փոխադարձ կասկածանքներ սերմանել թշնամու բանակում: «Վերադարձված լրտեսի» հնարը գործածվում է թշնամու ճամբարում գոյություն ունեցող փոխադարձ կասկածանքներն ու երկպառակությունները հաստատելու, ուժգնացնելու համար: «Ինքնամիրավորում» հնարն այն է, որ սեփական ճամբարում թվացյալ քայքայում է ստեղծվում՝ հակառակորդի վրա իրական քայքայիչ ազդեցություն գործելու նպատակով: Հակառակորդի ճամբար են ուղարկում սեփական բանակի հետ իբր գժտված «լրտեսի», որպեսզի հակառակորդի վստահությունը ձեռք բերելով՝ նրա հետ պայմանավորվի զաղտնի դաշնակցելու կամ բացահայտ համատեղ գործողությունների մասին՝ ընդդեմ սեփական ճամբարի. հենց սա է «ինքնամիրավորում» հնարը: Ինչպես, օրինակ՝ Ջրն թագավորության իշխանը, մինչ կհարձակվեր հակառակորդի կարվածքի վրա, մահապատժի ենթարկեց Գուան Ցիարին², կամ՝ երբ Խան Սինը հարձակվեց Ցի թագավորության վրա, իսկ Լի Շընին եփեցին կաթսայում³:

Հնարքի կիրառման համար նախապես անհրաժեշտ է ներկայանալ որպես հակառակորդի բարեկամ, համախոհ, կամ էլ շինծու դավադրություններ, ընդդիմություն կազմակերպել սեփական ճամբարում, հրապարակավ պատժել, ստորացնել դրանց մասնակիցներին: Դրանով իսկ հնարավոր է շահել հակառակորդի վստահությունն ու աջակցությունը «հետապնդողների», ներառյալ բացահայտորեն նրա կողմն անցած մարդկանց հանդեպ, որոնք էլ, օգտվելով ընձեռած հնարավորությունից, հավատարմորեն կգործեն ի շահ իրենց իրական յուրայինների:

¹ Բառացի՝ «Պատանու տհասության երջանկություն, դյուրամիտիություն և զիջողականություն», հանդիպում է «Փոփոխությունների կանոնում» 4-րդ հեկսագրամի՝ Մըն 蒙 ䷃ Չիմացություն (տես՝ 14-րդ և 17-րդ հնարքները) հիկեբերորդ գծի մեկնության մեջ: Տվյալ դեպքում այս արտահայտությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. եթե սուտը ընկալվում է պատանուն հատուկ միամտության և ազնիվ մղումների պրիզմայով, այն վերածվում է ճշմարտության: Նույն միտքը 34-րդ հնարքի համատեքստում նկարագրում է մի իրավիճակ, երբ հակառակորդը իր չիմացության և տհասության հետևանքով չի կարող ճանաչել սուտը և հավատում է խաբեությանը:

² Խոսքը Գարնան և Աշնան ժամանակաշրջանում Ջրն թագավորության տիրակալ Ուի (մ.թ.ա. 770 ?-744 թթ.) մասին է, որը մտադրվել էր հարձակվել Խու թագավորության վրա: Սկզբում նա իր դստերը կնության տվեց Խուի տիրակալին, իսկ հետո մահապատժի ենթարկեց իր խորհրդականներից Գուան Ցիարին՝ Խու թագավորության դեմ հրապարակայնորեն պատերազմի կոչ անելու համար: Այդ մասին իմանալով՝ Խուի տիրակալը որոշեց, որ Ջրն թագավորությունը իր հուսալի դաշնակիցն է և ուշադրություն չդարձրեց իր սահմաններին մոտեցող բանակին: Ջրնի բանակը դյուրին հաղթանակ տարավ, և կարճ ժամանակում նվաճեց Խու թագավորությունը:

³ Լիու Պանն (մ.թ.ա. 256 թ. ճմոռան ամսվա 24-195 թ. ապրիլի 15)՝ Խան դինաստիայի հիմնադիր: Չու-Խանական պատերազմի

ժամանակ (մ.թ.ա. 206–203 թթ.) իր խորհրդական Լի Շընին (մ.թ.ա. 268–204 թթ.) ուղարկեց Ցի թագավորության տիրակալի մոտ, որպեսզի վերջինիս համոզի զիջել Խանին իր տարածքի մի մասը՝ փոխարենը խոստանալով չհարձակվել Ցի թագավորության վրա: Ցիի տիրակալը տեղի տվեց հորդորներին և տարածքներ զիջեց՝ 70 քաղաքներով ու գյուղերով: Հավատալով, որ այդպիսի զիջումից հետո Ցի թագավորությունը անվտանգության մեջ է, տիրակալը անհրաժեշտ ուշադրություն չդարձրեց Խանի մոտեցող բանակին, որը, սակայն, զորավար Խան Սինի (մ.թ.ա. 231–196 թթ.) գլխավարությամբ, անսպասելի հարձակվեց Ցիի վրա: Ցիի տիրակալը՝ խիստ զայրացած դրանից՝ հրամայեց Լի Շընին նետել եռացող ջրով կաթսայի մեջ:

连环计

[lián huán jì]

«Շրթայի օղակներ»

将多兵众，不可以敌，使其自累，以杀其势。在师中吉，承天宠也。

Եթե թշնամին շատ հրամանատարներ ունի, իսկ զորքը մեծաթիվ է, և հնարավոր չէ նրան բացահայտ դիմադրել, հարկավոր է նրան ստիպել, որ իր իսկ ուժերը կաշկանդի և դրանով կոտրի նրա հզորությունը: «Լինել զորքում և լինել անսասան՝ երջանկություն է բերում, օգտվիր Երկնքի բարեհաճությունից»:

【按语】庞统使曹操战舰勾连，而后纵火焚之，使不得脱。则连环计者，其结在使敌自累，而后图之。盖一计累敌，计攻敌，两计扣用，以摧强势也。如宋毕再遇尝引敌与战，且前且却，至于数四。视日已晚，乃以香料煮黑豆，布地上。复前博战，佯败走。敌乘胜追逐。其马已饥，闻豆香，乃就食，鞭之不前。遇率师反攻，遂大胜。皆连环之计也。

[Մեկնություն] Փանն Թունը խաբեությամբ Ցաո Ցաոյին համոզեց ռազմանավերը շղթաներով այնպես ամրացնել, որ դրանք չցրվեն, իսկ հետո հարձակվեց ու ամբողջությամբ այրեց դրանք²: Այսպիսով, «Շրթայի օղակներ» հնարքը ենթադրում է, որ հակառակորդի վրա կարելի է հարձակվել, երբ նա, խաբեությանը հավատալով և կաթվածահար անելով իր ուժերը, խոցելի կրառնա հարձակման համար: Այստեղ մի հնարքը գործածվում է հակառակորդի ուժերը կաշկանդելու համար, իսկ մյուսը՝ հարձակումն իրականացնելիս, այսինքն՝ ուժեղ հակառակորդին հաղթահարելու համար կիրառվում է երկու հնարքների համակցումը: Օրինակ՝ Սոնի զորավար Պի Մայյուն³ թշնամուն խաբելով դուրս բերեց ճակատամարտի: Առաջ էր շարժվում, հետո միանգամից նահանջում և այդպես չորս անգամ: Մթնշաղից հետո զորավարը հրամայեց անուշաբույր համեմունքներով եփված սև բակլա շաղ տալ գետնին: Ապա հերթական անգամ հարձակում նախաձեռնեց և միանգամից փա-

խուստ ձևացնելով՝ նահանջեց, իսկ հակառակորդը առաջ նետովեց՝ հետապնդելու: Թշնամու ձիերը հոգնած էին ու սոված, և երբ ոտքերի տակ բակլայի հոտն առան, կանգ առան ու սկսեցին դրանք ուտել՝ առաջ չջարժվելով նույնիսկ մտրակի հարվածներից: Այդ ժամանակ Պի Ծայրուն հետ շրջեց գորքը և անցավ շեշտակի գրոհի: Արդյունքում Սունի գորքերը խոշոր հաղթանակ տարան: Սա հենց «Շոթայի օղակներ» հնարքի կիրառման օրինակ է:

Պարզաբանումներ

Ուժեղ, խորամանկ հակառակորդին դիմակայելիս, երբ առճակատումը նրա հետ անխուսափելիորեն հանգեցնելու է կործանման, հարկավոր է միաժամանակ կամ հաջորդաբար մի քանի հնարք կիրառել: Հարկ է ստեղծել տարբեր ուղղվածության, բայց մեկ ընդհանուր նպատակի շուրջ միահյուսված ծրագրեր, համակարգել ու համակցել համապատասխան գործողությունները: Մի հնարքի կիրառությունը և դրա արդյունքները պետք է հիմք հանդիսանան հաջորդների կիրառման համար: Այսպիսով, բոլոր այդ հնարքները կդառնան «մեկ շոթայի օղակներ»:

¹ Այս արտահայտությունը 7-րդ հեկսագրամի երկրորդ գծի մեկնությունից է: Շը ䷗ ䷗ ䷗ Զորք հեկսագրամը կազմված է Բան 坎 ䷜ Զուր և Բուն 坤 ䷁ Ըող տրիգրամներից: Հեկսագրամները ներքևից վերև կարդալու կանոնի համաձայն՝ ռազմավարը, վտանգի հանդիպելով, որի խորհրդանիշն է Զուրը, կստանա զիջողականություն, հնազանդություն, որոնց խորհրդանիշն է Ըողը: Սակայն դրա համար հարկավոր է ամրություն՝ ամուր կամք դրսևորել, որն արտահայտվում է միակ, ներքևից երկրորդ հոծ գծով: Այսպիսով, սեփական կողմը՝ զորքը վտանգի մեջ է և սեղմված է հակառակորդի մեծաթիվ, բայց զիջող ու ոչ ակտիվ զորքի կողմից: Այս իրավիճակում, եթե հրամանատարը գտնվում է զորքում, այսինքն՝ չի թողել իր զորքը, և բացի այդ՝ ամուր կամք է դրսևորում, դժվարությունները հաղթահարելու համար Երկնքի բարեհաճությունը ապահովված է: Հեկսագրամի անվանման

իմաստը պարզաբանվեց վերը՝ 26-րդ հնարքի առիթով: Հեկսագրամը ներկայացնում է «ջուր՝ հողի տակ» պատկերը, իսկ ստորերկրյա ջուրը համարվում էր անսպառ ռեսուրս այնպես, ինչպիսին էր նաև գյուղացիությունը՝ բանակ ձևավորելու համար. այստեղից էլ նշանի անվանումը՝ ䷗, Զորք: Հնում յուրաքանչյուր տնտեսություն (ընտանիք) տիրակալին մեկ զինվոր էր տալիս. հինգ զինվորը կազմում էր մարտական նվազագույն միավոր՝ Ու (հնգյակ), հինգ Ուն կազմում էր Լիան (ջոկատ՝ 25 զինվորից), չորս Լիանը՝ Ծու (զինվորների հարյուրյակ), հինգ Ծուն՝ Լյու (գումարտակ՝ 500 զինվորից), հինգ Լյուն՝ Շը (կորպուս՝ 2500 զինվորից), վերջապես՝ հինգ Շըն կազմում էր Ծյուն (բանակ՝ 10 000 զինվորից): Ներկայումս, հասկանալի պատճառներով, այս հիերարխիքը կորցրել է «զորք» նշանակությունը:

² Ցաո Ցաո (մ.թ. 155–220 թթ.)՝ զորահրամանատար և գլխավոր նախարար Խան կայսրության վերջին կայսեր Սիաո Սիենտիի օրոք (181–234): Չինաստանի հյուսիսում ջախջախելով բոլոր մրցակիցներին և ամենամեծ բանակն ունենալով՝ մոտ էր Չինաստանն իր իշխանության ներքո միավորելուն: Սակայն Կարմիր պատերի մոտ ճակատամարտում կործանաբար պարտության հետևանքով նախաձեռնությունը զիջեց Սուն Ցյուանին (մ.թ. 5 հուլիսի 182–21 մայիսի 252 թթ.), և Լիու Պեյին (մ.թ. 162–223 թթ.): 208 թ. աշնանը Ցաո Ցաոյի բանակը դուրս եկավ Ցանծը գետի մոտ, որը Չինաստանի տարածքը բաժանում է հարավի ու հյուսիսի միջև: Գրավելով Ծիննչոուն (ներկայիս Խուպեյ նահանգի տարածքում)՝ Ցաո Ցաուն պատերազմ սկսեց Սուն Ցյուանի դեմ: Արդեն ասվեց, որ Ցաո Ցաոյի՝ հյուսիսաբնակներից կազմված բանակը գետի վրա պատերազմելու փորձ չունեի, զինվորները նույնիսկ տառապում էին ծովային հիվանդությամբ, ուստի նավատորմը ղեկավարելու և բանակին վարժեցնելու համար նշանակվում են Ծիննչոու շրջանից նախկին զորահրամանատարներ Ցայ Մաոն և Ջանն Ցունը: Այդ ընթացքում Լիու Պեյը Ցաո Ցաոյին վերացնելու նպատակով միավորվում է Սուն Ցյուանի հետ: Երբ Ցաո Ցաոյի նավատորմը պարտություն է կրում Սանծիաքոուի ճակատամարտում, նա փորձում է թշնամու ճամբար լրտեսներ ուղարկել, սակայն նրանց դիմակազերծում են (կիրառվել է «վերադարձված լրտես» հնարքը), մինչդեռ Ցաո Ցաոյի շրջապատում

走为上计

[zǒu wéi shàng]

Փախուստը՝ լավագույն հնարք

全师避敌。左次无咎，未失常也。

Նահանջել և խուսափել բոլոր ուղղություններով բացահայտ հակամարտությունից: Բանակի նահանջ դեպի կայանատեղեր՝ պարսավանք չի լինի, հավասարակշռությունը չի խախտվի՝

【按语】敌势全胜，我不能战。则：必降；必和；必走。降则全败，和则半败，走则未败。未败者，胜之转机也。如宋毕再遇与金人对垒，度金兵至者日众，难与争锋。一夕拔营去，留旗帜于营，豫缚生羊悬之，置其前二足于鼓上，羊不堪倒悬，则足击鼓有声。金人不觉为空营，相持数日，及觉欲追之，则已远矣。可谓善走者矣。

[Մեկնություն] Եթե հակառակորդի ուժերը բացարձակ առավելություն ունեն, անհնար է նրան դիմակայել: Մտով է կամ հանձնվել, կամ հաշտություն խնդրել, կամ փախչել: Հանձնվել նշանակում է լիակատար պարտություն կրել, հաշտություն խնդրել նշանակում է կիսով չափ պարտվել, փախչել նշանակում է դեռևս չպարտվել: Պարտությունից խուսափելով՝ հնարավոր է հետագայում հաղթանակի հույս ունենալ: Օրինակ՝ Սոնի զորավար Պի Շայյուն ջուրջեններին հակադրվելիս նկատեց, որ Մինի զինվորների թիվը օրեօր շատանում է, և հասկանալով, որ չի կարողանալու դիմակայությունը շարունակել, մի երեկո հավաքեց բանակն ու նահանջեց: Սակայն լքված ճամբարում ծածանվող դրոշներ թողեց և հետևի կճղակներով թմբուկների վրա կախած ոչխարներ, դրանք էլ, փորձելով ազատվել, առջևի կճղակներով ավերոջ ուժով խփում էին թմբուկներին: Չընդհատվող թմբկահարությունը օրեր շարունակ լսվում էր հեռվից, և ջուրջենները նույնիսկ չէին էլ կասկածում, որ հակառակորդը վաղուց հավաքել է բանակն ու հեռացել: Սա կարելի է հաջող փախուստի օրինակ համարել:

հայտնվում են թշնամուց իբր նրա կողմն անցած զորահրամանատարներ Խուանն Գայը և Փանն Թոնը: Որպեսզի այդ թվացյալ դավաճանությունը ճշմարտանման լիներ, նրանց մինչ այդ պատժի են ենթարկում հորինած արարքների համար (կիրառվել է «ինքնավիրավորում» հնարը): Հավատարով պատրաստվող դավաճանության մասին ապատեղեկատվությանը՝ Ցաո Ցաոն մահապատժի է ենթարկում Ցայ Մաոյին և Ջանն Յունին (օգտագործվել է «սպանել թշնամուն ուրիշի դանակով» հնարը), իսկ նավատորմի ղեկավարներ են նշանակում ծովային պատերազմների փորձ չունեցող հրամանատարների: Դրանք էլ Սուն Ցյուանի գործակալ՝ Փանն Թոնի խորհրդով՝ տատանումները նվազեցնելու համար նավերն իրար են կապում երկաթյա շղթաներով (օգտագործվել են «ոչնչից մի բան ստեղծել» և «ժպիտի հետևում դանակ թաքցնել» հնարները): Սուն Ցյուանը իր հերթին պատրաստում է վառելիքով բեռնված նավեր, որոնց նավաբթերին երկար սեպեր են ամրացվում՝ թշնամու նավերին բախվելիս միմյանց ամուր կաչելու համար: Մարտի ժամանակ վառելիքով նավերը հրկիզվեցին և կրակը արագ տարածվեց Ցաո Ցաոյի տորմիդի միմյանց ամրացված նավերի վրա՝ խուճապի մատնելով զորքին: Այսպիսով, տվյալ դեպքում գործածվել էր հնարքների մի ողջ շղթա, որի յուրաքանչյուր օղակ կիրառվել է ընդհանուր նպատակին հասնելու համար: Ցաո Ցաոյի՝ երկիրը միակ հնարավոր միավորողի կործանումից հետո Չինաստանը դեռ յոթանասուն տարի մնաց մասնատված, և այդ տարիները Չինաստանի պատմության մեջ մտան որպես Եռաթագավորության շրջան:

³ Պի Շայյու (մ.թ. մոտ 1147–1217 թթ.) Հարավային Սոն կայսրության (1127–1279 թթ.) զորահրամանատար, վարել է ռազմական հաջող արշավներ ջուրջենների դեմ: Ջուրջենները տունգուսական ցեղ էր, որը X–XV դդ. բնակություն էր հաստատել Չինաստանի հյուսիս-արևելքում գտնվող ներկայիս Խեյլոնծիան նահանգի տարածքում, մանջուրների նախնիներն են: Ջուրջենների հիմնած ամենախոշոր պետությունը Մին կայսրությունն էր, որը գոյություն է ունեցել 1115–1234 թթ. և զբաղեցրել է Չինաստանի գրեթե ողջ կենտրոնական և հյուսիս-արևելյան մասերը:

Անկարող լինելով արդյունավետ որևէ դիմադրություն ցույց տալ շատ ավելի հզոր, անվիճելիորեն գերակշռություն ունեցող հակառակորդի հարձակմանը, գտնվելով ծանր հուսահատության և անելանելի դրության մեջ՝ իմաստ չունի ինքդ քեզ զոհես, մատնես կորստյան: Այսպիսի դեպքերում լավագույն հնարը նահանջելն է, փախուստ տալով փրկվելը:

¹ «左次无咎, 未失常也, Բանակի նահանջ դեպի կայանատեղեր՝ պարսավանք չի լինի, հավասարակշռությունը չի խախտվի» արտահայտությունը 7-րդ հեկսագրամի չորրորդ գծի մեկնությունից է: Շը 帥 ䷆ Զորք հեկսագրամը, ինչպես ասվեց նախորդ հնարքի առիթով, կազմված է Բան 坎 ䷜ Զուր և Բուն 坤 ䷁ Ըող տրիգրամներից: Չորրորդ գիծը փափուկ է, ընդհատուն և գտնվում է երկու նույնպես ընդհատուն գծերի միջև, որն այս իրավիճակում ազդանշում է թուլության և համապատասխանաբար՝ նահանջելու անհրաժեշտության մասին: Արտահայտության առաջին՝ 左՝ «Ձախ» հիերոգլիֆը ռազմական տրակտատներում նահանջ էր նշանակում ի տարբերություն 右՝ «Աջ» հիերոգլիֆի, որը նշանակում էր առաջ շարժվել: Երկրորդ՝ 次 հիերոգլիֆը նշանակում էր «կանգ առնել կայանատեղում» (երկու օրից ավելի ժամկետով): Այսպիսով, Զորք հեկսագրամում չորրորդ գիծը նկարագրում է մի իրավիճակ, որի դեպքում դժբախտություն չի լինի, եթե բանակը երկար ժամանակով հետ քաշվի, խուսափի թշնամու հետ անմիջական բախումից: Դա ներքին հավասարակշռությունը չի խախտի, աղետ չի բերի և պարսավանքի չի արժանանա, այլ հակառակը՝ մի իրավիճակում, երբ հակառակորդն ունի անվիճելի առավելություն, հնարավորություն կտա կանխել անհարկի կորուստները և անխուսափելի պարտությունը՝ պայքարը շարունակելու համար առավել հարմար պահի սպասելով:



【跋】夫战争之事，其道多端。强国、练兵、选将、择敌、战前、战后，一切施为：皆兵道也。惟比比者，大都有—定之规，有陈例可循。而其中变化万端，诡谲奇谲，光怪陆离，不可捉摸者，厥为对战之策。三十六计者：对战之策也，诚大将之要略也；闲尝论之。胜战、攻战、并战之计，优势之计也；敌战、混战、败战之计，劣势之计也。而每套之中，皆有首尾次第。六套次序，亦可演以阴……

[Վերջաբան] Պատերազմը բազմադիմի երևույթ է: Սեփական երկրի հզորացում, նախապատերազմական պատրաստություն, զինվորների ուսուցում, հրամանատարների ընտրություն, հակառակորդներից գլխավորի որոշում, հետպատերազմյան միջոցառումներ՝ այս ամենը գիտելիքներ են պատերազմի մասին: Դրանք իրագործվում են որոշակի օրենքների համաձայն և ունեն իրենց նախադեպերը, որոնք կարող են ծառայել որպես օրինակ: Սակայն նույն այդ օրենքների ներսում, դրանց հետ միաշրջանակաբար կան նաև անհաշվելի փոփոխականներ, անկանխատեսելի, արտասովոր խորամանկություններ, ձևով բազմակերպ, բովանդակությամբ խայտաբղետ, դժվար ճանաչելի նուրբ խաբեություններ, այն է՝ ռազմական հակամարտություններում կիրառվող խորամանկ հնարքներ: «36 հնարք»-ը ռազմական դիմակայության հնարքներն են, բարեխիղճ հրամանատարների համար՝ ռազմավարական ծրագրեր կազմելու հիմնական աղբյուր: Ազատ ժամանակ կարելի է փորձել հանգամանորեն ուսումնասիրել այս հնարքները: Հաղթողների հնարքներ, հարձակման և թաքնված դիմակայության հնարքներ՝ սրանք գործածվում են այն իրավիճակներում, երբ առավելություն ունես: Հավասարազոր ուժերի դիմակայության հնարքներ, խառը դիմա-

կայության և պարտվողների հնարքներ․ սրանք գործածվում են այն իրավիճակներում, երբ խոցելի ես: Յուրաքանչյուր հնարք ունի իր ներքին կարգը, սկիզբն ու ավարտը: Վեց խմբերի հնարքների կարգը նույնպես կարող է բխել․․․

[Ձեռագիր բնագրի վերջաբանի մնացած հատվածը, ինչպես ասվեց, կորսված է:]

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ*

Արևելյան Ծին (东晋, 317–420), դինաստիա, թագավորություն	28
Արևմտյան Ծին (西晋, 266–316), դինաստիա, թագավորություն	21, 28
Արևմտյան Չու (西楚, մ.թ.ա. 206–202), թագավորություն	33
Արևմտյան Սիա (西夏), Մեծ Սիա (大夏), 1038–1227),	
Տանգուի թագավորություն	10
Բայմա (白马人), ժողովուրդ	28
Բանակի մարտական միավորներ	35
Գայսիայի ճակատամարտը (垓下之战, մ.թ.ա. 202)	30
Գարնան և Աշնան ժամանակաշրջան (春秋时期, մ.թ.ա. 770–476 (403)	
էջ 10; հն.	2, 3, 4, 5, 17, 24, 33, 34
«Գարուն և Աշուն» (Չունցյու), տարեգրություն	էջ 10
Գեն 艮 ☶ Լեռ, տրիգրամ	3, 4, 14, 15, 21, 22, 29, 30
Գոու Ծիեն (勾踐, մ.թ.ա. 496–465), Յուեի տիրակալ	10, 31
Գու 盍 ☶ Փորձանք, հեկսագրամ	21
Գուայ 夫 ☵ Ելք, հեկսագրամ	5
Գուան Յու (关羽, մ.թ. ?–220), Շուի հրամանատար	3
Գուան Ջոն (管仲, մ.թ.ա. 720–645), լեգիզմի հիմնադիր, «Գուան-ժը» (管子) տրակտատի հեղինակ	4
Գուան Ցիսը (关其思), Ու տիրակալի խորհրդական	34
Գուաջոու (瓜州), գավառ	32
Գուիլին (桂林), շրջան	27
Գուն Սունքանն (公孙康), Լիաոտոնի կուսակալ	9
Գուո (虢国), թագավորություն	24
Դեղին գլխակապերի ապստամբություն (黄巾起义, 184–204)	6
Եռաթագավորություն (三国时代, 220–280)	3, 6, 16, 20, 21, 27, 35
«Եռաթագավորություն» (三国演义), միջնադարյան վեպ	3, 9, 16, 27
Երկինք (天)	15
Ընդերկնային (天下)	8, 15, 26
Թայփիննտաո (太平道), աղանդ	6
Թանն (唐朝), դինաստիա (618–907)	7, 17, 18, 30, 32
Թանն Տաոժի (檀道济, մ.թ. ?–436), (Լիու) Սոն դինաստիայի	
գորավար	էջ 14–15; հն. 21
Թաոչըն (洮城), քաղաք	8
Թիեն Ծի (田忌), Ցի թագավորության գորավար	2, 11
Թիեն Տան (田单), Ջաո և Ցի թագավորությունների	
գորավար	33

*Ցանկում նշված են հնարքների համարները, իսկ առանձին դեպքերում՝ Ներածության և Առաջաբանի էջերը:

Թոնվիան (通判), պատասխանատու նախարար	19
Թուպո (թուֆան), տիբեթցիների թագավորություն	32
«Ինը արշավանքներ Միջին դաշտավայր» (九伐中原)	27
Լաո Շը (老子, մ.թ.ա. VI-V դդ.), համարվում է դառկանության հիմնադիր	6
Լի Լյու (李履, Բայլը, հեկսագրամ	19
Լի Լյու (李离, Կրակ, տրիգրամ	23, 25, 28
Լի Մի (李密, 582–619), Սուի դինաստիայի ազնվական	30
Լի Մու (李牧, մ.թ.ա. ?–229), Ջաո թագավորության զորավար	4
Լի Յուան (李渊, 566–635), կայսր	30
Լի Շըն (骗生, 邮食其, մ.թ.ա. 268–204), Լիու Պաննի խորհրդական	34
Լիաո (辽国) թագավորություն	31
Լիաո Խուա (廖化), հրամանատար	8
Լիաոտոն (辽东), տարածաշրջան	9
Լիաոտոն (辽东半岛), թերակղզի	33
Լինն Խուչաո (令狐潮), Թանն դինաստիայի զորավար	7
Լիուչըն (柳城), քաղաք	9
Լիու Պանն (刘邦), տես՝ Խան Գաոծու, կայսր	8, 30, 33, 34
Լիու Պեյ (刘备, 162–223), Շուի տիրակալ, զորավար	3, 20, 35
Լու (鲁国), թագավորություն	3
Լուոյան (洛阳), քաղաք	6
Խան (汉朝, մ.թ.ա. 206 – մ.թ. 220), կայսրություն	4, 6, 15, 20, 30, 33, 34, 35
Խան, Վաղ (前汉) կամ Արևմտյան Խան (西汉) (մ.թ.ա. 206 – մ.թ. 8)	6
Խան, Ուշ (后汉) կամ Արևելյան Խան (东汉) (25–220)	1, 6, 9, 15, 19
Խան (汉), չինացիների ինքնանվանումը	30
Խան Գաոծու (汉高祖, մ.թ.ա. 256 կամ 247–195), կայսր: Տես՝ Լիու Պանն	8, 30, 33, 34
Խան Սին (韩信, մ.թ.ա. 231–196), Լիու Պաննի զինակից	8, 34
Խան-վան (汉王), տիտղոս	30
Խանչոն (汉中), շրջան	30
Խանչոու (汉州), քաղաք	19
Խըսի (Գանսու) միջանցք (河西走廊)	32
Խոռվություն Գաոփիննի գերեզմաններում (高平坟墓事变)	27
Խու (胡国), թագավորություն	34
Խուանն Գայ (黄盖) Սուն Յյուանի հրամանատար	35
Խուաննիլը (黄河), գետ	5
Խուաննչը (黄池), շրջան	5
Խուի-վանն (惠王), Յենի տիրակալ	33

Շը Գոն (子贡, մ.թ.ա. 520–456), դիվանագետ, քաղաքական գործիչ	3
Շիծի 既济 (䷾) Արդեն վերջն է, հեկսագրամ	25
Շիան 夔 (䷫) Խոչընդոտ, հեկսագրամ	15
Շիան Գան (蒋干), Ցաո Ցաոյի խորհրդական	33
Շիան Շըյա (姜子牙, մ.թ.ա. XI դ.), համարվում է «Վեց գաղտնի ուսմունքների» հեղինակ	20
Շիան Շի (蒋济, 188–249), Ցաո Ցաոյի խորհրդական, նախարար	3
Շիան Վեյ (姜维, 202–264), հրամանատար	8, 21, 27
Շիաո (绞国), թագավորություն	17
Շիե 解 (䷧) Լուծում, հեկսագրամ	32
Շիեն 浙 (䷧) Ընթացք, Հոսք, հեկսագրամ	29, 30, 31
Շին (晋国), թագավորություն	3, 24, 31
Շին (金国), ջուրջենների կայսրություն (1115–1234)	35
Շուիեն (祖珽), Հյուսիսային Սյուչոուի կառավարիչ	32
Կարմիր պատերի ճակատամարտ (赤壁战役, 208 թ.)	3, 33, 35
Կոնֆուցիոս (孔子, 孔夫子, մ.թ.ա. 551–479)	էջ 10, 14; հն. 1, 3
Հարավային Չեն (南陈朝, 557–589), թագավորություն	32
Հարավային Սոն (南宋, 1127–1279), կայսրություն	35
Հարավային և Հյուսիսային դինաստիաներ (南北朝, 420–589)	էջ 14; հն. 21, 32
Հարավային Ցի (427–482), դինաստիա	էջ 14
Հեկսագրամ	էջ 22–23
Հիերոգլիֆային գիր	էջ 8, 17–20, 23
Հյուսիսային Ցի (550–577), դինաստիա	32
Հնարք	էջ 14, 16
Հուննու (匈奴), ժողովուրդ	4
Մալիննտաո (马岭道), Մալիննի կիրճ	4, 17
Մարտնչող թագավորությունների ժամանակաշրջան (战国时代, մ.թ.ա. 476 (403)–221)	էջ 10, 12; հն. 2, 3, 4, 23, 31, 33
Մըն Թա (䷃) Չիմացություն, հեկսագրամ	14, 17, 34
Մըն Խոու (孟获), ապստամբների առաջնորդ	16
Մուծոն Չուի (慕容垂), Վաղ Ցինի հրամանատար	28
Մույեի ճակատամարտ (牧野之战)	31
Ցանծը (扬子江, 长江), գետ	3, 33, 35
Ցեն (燕国), թագավորություն	33
Ցի 益 (䷩) Բազմապատկում, հեկսագրամ	8
Ցին Շըցի (尹子奇), Թան դինաստիայի զորավար	18
Ցին-Ցան (阴阳)	էջ 11, 20–22, 27; հն. 15, 18, 19

Յոթ իշխանական կալվածքների ապստամբություն (七国之乱, մ.թ.ա. 154)	6
Յու (虞国), թագավորություն	24
Յու 豫 ䷏ Ազատություն, հեկսագրամ	9
Յու Սյու (虞诩, մ.թ. ? - 137), Ուշ Խանի շրջանի հրամանատար	15
Յուան եղբայրներ, Եռաթագավորության շրջանի զորավար Յուան Շաոյի (袁紹, մ.թ. ?-202) որդիները	9
Յուե (越国), Պայ Յուե (百越), ժողովուրդ, թագավորություն	5, 10, 31
Յուե Յի (乐毅), Յեն թագավորության զորավար	33
Նոն Ջոզաո (依智高, 1025 - մոտ. 1055)՝ ջուանն և բունու ժողովուրդների ազգային հերոս	27
Շանն (Յին), (殷商), դինաստիա	31
Շը 师 ䷆ Ջորք, հեկսագրամ	26, 35, 36
Շըըը 噬嗑 ䷔ Սեղմված առամներ, հեկսագրամ	28
Շու, Շու-Խան (蜀国, 蜀汉), թագավորություն	3, 16, 20, 21, 27
Չանն Ծինն (常建), բանաստեղծ	17
Չաննան (长安), Վաղ Խանի մայրաքաղաք	6
Չեն Փինն (陈平), Լիու Պաննի խորհրդական	33
Չընտու (成都), քաղաք, հնում Շուի մայրաքաղաք	էջ 13; հն. 20
Չու (楚国), թագավորության	17
Չու-Խանական պատերազմ (楚汉战争, մ.թ.ա. 206-203)	30, 33
«Պատմական նոթեր», տես Սըմա Յինն	
Պի 比 ䷇ Մոտեցում, հեկսագրամ	33
Պի Ծայյու (毕再遇, մոտ 1147-1217), Հարավային Սոնի հրամանատար	35, 36
Պո 剥 ䷖ Քայքայում, հեկսագրամ	22
Ջանն Խան (章邯, մ.թ.ա. ?-205), Յին դինաստիայի զորավար	8
Ջանն Ծիաո (张角, մ.թ. ?-184), Դեղին գլխակապերի առաջնորդ	6
Ջանն Յուն (张允), Ցաո Ցաոյի խորհրդական	33, 35
Ջանն Սյուն (张巡, 708-757), Թանն դինաստիայի շրջանի պետական գործիչ	7, 18
Ջաո (赵国), թագավորություն	2, 4, 33
Ջաո Գու (赵鞅), Թանն դինաստիայի շրջանի բանաստեղծ	17
Ջեն 震 ䷲ Որոտ, Ամպրոպ, տրիգրամ	8, 9, 20, 27, 28, 32
Ջըն (郑国), թագավորություն	34
Ջոու (周), դինաստիա	էջ 10; հն. 20, 31
Ջոու, Արևելյան (东周, մ.թ.ա. 770-256), դինաստիա	էջ 10
Ջոու Յաֆու (周亚夫, մ.թ.ա. 199-143), Վաղ Խան շրջանի ռազմավար ...	6

Ջոու Յու (周瑜, 175-210), Ու թագավորության զորավար	33
Ջու Շյուն (朱雋, ?-195), Ուշ Խան շրջանի զորավար	6
Ջուզը Լիան (诸葛亮, 181-234), Եռաթագավորության շրջանի քաղաքական և ռազմական գործիչ	3, 16, 21, 27, 32
Ջուն 屯 ䷆ Դժվարություն, հեկսագրամ	27
Ջուրջեններ (女真), ժողովուրդ	35, 36
«Ռազմարվեստի մասին» (孙子兵法), տես Սուն Ծը	
Սանծիանքոուի ճակատամարտ (三江口战役)	35
Սըմա Յի (司马懿, 179-251), Արևմտյան Ծին դինաստիայի հիմնադիր	3, 21, 27
Սըմա Յինն (司马迁, մ.թ.ա. 145 ?-86 ?), «Պատմական նոթերի» հեղինակ	3, 4, 11
Սի Շը (西施, մ.թ.ա. V դ.), գեղեցկուհի	31
Սի Քան 习坎 ䷜ Կրկնակի Ջուր, հեկսագրամ	10
Սիանն Յու (项羽, մ.թ.ա. 232-202), Արևմտյան Չուի տիրակալ	8, 30, 33
Սիաո Սիենտի (孝献帝, 181-234), Խան դինաստիայի վերջին կայսր	35
Սիչուան (西川), շրջան	20
Սիանբի (鲜卑族), ժողովուրդ	28
Սիաո Ծըսինն (489-537 թթ.), «Հարավային Ցիի գրքի» հեղինակ ... էջ 14	
Սյու 需 ䷄ Սպասում, հեկսագրամ	16
Սյուե Չաննժու (薛长儒, 1000-1061), Սոն կայսրության նախարար	19
Սյուն 巽 ䷸ Քամի, տրիգրամ	8, 21, 29, 30
Սոն (宋朝, 960-1279 թթ.), դինաստիա, կայսրություն	10, 19, 27, 31
Սոն, Հարավային (南宋, 1127-1279 թթ.), դինաստիա, կայսրություն	35
Սոն, Հյուսիսային (北宋), տես Սոն, դինաստիա, կայսրություն	
Սպիտակ գետ (白水河)	8
Սուի 随 ䷐ Հետևել, հեկսագրամ	20
Սուի (隋朝, 581-618), դինաստիա	30, 32
Սուն 损卦 ䷨ Նվազում, հեկսագրամ	3, 4
Սուն Ծը (孙子, մ.թ.ա. 544 ?-496 ?), հայտնի է նաև Սուն Ու (孙武) անունով, «Ռազմարվեստի մասին» տրակտատի հեղինակ	էջ 12, 14; հն. 2, 4, 9, 10, 13, 15, 16, 22
Սոն (Լիու) Հարավային դինաստիա (刘宋, 420-479)	էջ 14; հն. 21
Սոն Պին (孙臧, մ.թ.ա. ?-316), Ցի թագավորության նախարար	2, 4, 11, 17
Սոն Յյուան (孙权, 182-252), Ուի տիրակալ	3, 35

Սուն Ու, տեն Սուն Ծը	
Վաղ Ցին (先秦, 351-395), թագավորություն	28
Վեյ (魏国, 220-266), թագավորություն	2, 3, 4, 9, 17, 21, 27, 33
«Վեյ Լիաո ռազմարվեստը» (尉繚子)	19
Վեյծի 未济 ☵☲ Դեռ վերջը չէ, հեկսագրամ	25
Վեյչոու (渭州), քաղաք	10
Վեն Վան (文王, Լուսավորյալ Թագավոր, XII դ.)	31
Տասնվեց բարբարոս թագավորությունների ժամանակաշրջան (十六国, 304-439 թ.)	28
Տըն Այ (邓艾, մոտ 197-264), Ու թագավորության հրամանատար	8
Տի (狄族), ժողովուրդ	28
Տի Ցինն (狄青, 1008-1057), Սոն դինաստիայի հրամանատար	27
Տրիգրամ	էջ 22-23
Տուի 兑 ☱ Լիճ, տրիգրամ	3, 4, 5, 19, 20, 23, 24
Ցայ Մաո (蔡瑁), Ցաո Ցաոյի խորհրդական	33, 35
Ցաո Շուանն (?-249), Վեյ թագավորության կառավարիչ	27
Ցաո Ցաո (曹操, 155-220) զորավար, Խան կայսրության գլխավոր նախարար	3, 9, 33, 35
Ցաովեյ (曹玮, 973-1030), Հյուսիսային Սոնի զորավար	10
Ցի (齐国), թագավորություն	2, 3, 4, 11, 17, 33, 34
Ցի Ծիե (骑劫, մ.թ.ա. ?-279), Ցեն թագավորության զորավար	33
Ցիան (羌族), ժողովուրդ	15, 28
Ցիեն 乾 ☰ Երկինք, տրիգրամ	5, 16, 19
Ցին (秦朝, մ.թ.ա. 221-206), դինաստիա, կայսրություն	6, 23, 30, 31, 33
Ցին Շըխուանն (秦始皇帝, մ.թ.ա. 258-210), կայսր	էջ 10; հն.23, 30, 31
Ցուի 翠 ☵☲ Վերամիավորում, հեկսագրամ	6
Ու (吴国), թագավորություն	3, 5, 6, 10, 16, 31, 33
Ու (武公, մ.թ.ա. ?-744), Ջուի տիրակալ	34
Ու Խան (武汉, մ.թ. ?-44), Արևելյան Խանի պետական գործիչ, ռազմավար	19
Ու Վան (武王, Ռազմատենչ Թագավոր, մ.թ.ա. XII դ.)	31
Ու-տի (武帝, մ.թ.ա. 156-87), կայսր	4
Ուշ Ցեն (后燕), թագավորություն	28
Ուշ Ցին (后秦), թագավորություն	28
Ուվան (乌丸), ժողովուրդ	9
Փանն Ծյուան (庞涓), Վեյ թագավորության զորավար	4, 17

«Փոփոխությունների կանոն» 易经)	էջ 15, 21, 23-24; հն.3, 4, 5, 6, 8, 9, 10, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35 36
Քան 坎 ☵ Ջուր, տրիգրամ	10, 14, 15, 16, 24, 25, 26, 27, 32, 33, 35, 36
Քոն Ժոն (孔融) (153-208 թթ.), զորավար	1
Քուի 睽 ☱☲ Գժտություն հեկսագրամ	23
Քուն 坤 ☷ Հող, Երկիր, տրիգրամ	9, 18, 22, 26, 33, 35, 36
Քուն 坤 ☷ Դաշտ, հեկսագրամ	18
Քուն 困 ☱☵ Սպառում, հեկսագրամ	24
Ֆան Ծըն (范增, մ.թ.ա. 277-204 թթ.), խորհրդական	33
Ֆան Սուի (范雎, մ.թ. ?-225 թթ.), նախարար	23
Ֆանչըն (樊城), քաղաք	3
Ֆեյ (肥河), գետ	28
Ֆու Ծիեն (符坚), իշխան	28
Ֆու Չայ (夫差, մ.թ.ա. 495-473 թթ.), տիրակալ	10, 31

三十六计

ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ՀՆԱՐՔ

Խմբագիր
ԳՈՀԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Էջադրումը
ԱՆԱՀԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ձևավորումը
ՔՐԻՍՏԻՆԱ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻ



ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ
ՏՊԱԳՐԱՅԻՆ - ԿՈՄՍՏԱՍՈՒՅԻՆԻ

veprint.am

355
Է-80
հ

«Գաղտնիքն չի հակադրվում ակնհայտին,
գաղտնիքն ամփոփված է ակնհայտի մեջ:
Ամեն ինչ բացահայտել՝ նշանակում է
ամեն ինչ թաքցնել»:

ISBN 978-99930-0-281-9



9 789993 002819